



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքեր»
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


սրառման և տուրանել կուրք ցույնեցած ձևադրին կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ կուրք ստեղծելու համար նոր

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


2 May 1849



藏文書寫

藏文書寫

藏文書寫



A II
29655

ՇԱՀՄԱՆԻՐ

82
5

ՃԱՌԼԵՑ ՔԸՆԸ ԿԸՆԿՐԵԱՓ

ԹՎԵՐԳՈՒՅԹԻՒՆ ՀԱՅԻ ՇՐՋԱԲԱՆ,

ԹՎԵՐԳՈՒՅԹ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՍԻՆԵՑ



ՎԵՐԱՆ, ՊԻՐԵՐԵՍ ԶԳՈՅՆ

1921

ՀԱՅՈՒՆ-ՀԱՅ
ԿՐՈՒՅՑ Խ-2
ԴՐԱՄ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն


Աւելի բամ բառորդ դար է անցել այս օրից, երբ մենք
առաջին անգամ փորձեցինք «Համելստի», հայերքն թարգմանու-
թիւնը տալ: Այդ հայտափորձը, չը այելով իր մեծ թերութիւն-
մերին, այնքան խրախուսից ընդունելութիւն գտաւ Հայ գրա-
գէտների և բևի կողմից, որ դա մեզ բաշակարեց աւելի շուրջ
կերպով գրադարձր Եկրապիրի թարգմանութեան գործով. և
տարիների ընթացքում՝ հետզիւնք թարգմանութիւնը տասներ-
կու խօսի, որոնք այժմ պատրաստ են տպագրութեան համար:


Մեր հայկին թարգմանութիւնները հարկ համարեցինք ոչ
թէ շոկ վարդանել, այս այնքան հիմնական փոփոխութեան և
թարկել, որ կարելի է ասել թէ նոր թարգմանութիւն է կատար-
ուած. որովհետև վարչին երևուուն տարւայ ընթացքում ոչ միայն
Եկրապիրեան գրականութիւնը զանազան լնգումների մէջ ամս-
գին շափով զարգացել է, և մենք առիջ ենք ունեցել ժամօթանաց
այդ երկերի հետ, այս ենք անձնական հայեացքները թարգ-
մանութեան եղանակի մասին որոշ շափով փոխւած են: Մեր
առաջին թարգմանութիւնները կատարւած էին Վիկոր Հիլ-
դոյի ազդեցութեան տակ, որ սրբազնութիւն էր համարում որ
եւ իցէ յուտորում Եկրապիրնան «Սուրբ Գրի» բնագրի բատից
եւ տառից: Բայց մենք մենք ժամօթացանք աւելի յաջող թարգ-
մանութիւնների հետ, ի միջի այլոց, Ելեզէի Գնրմանական
թարգմանութեան հետ, տեսանք որ շատ թարգմանիչները դե-
կավարւել են բոլորովին ուրիշ սկզբունքով, և իրաւամբ մնա-
ծել են որ գեղարւեստական թարգմանութիւնը շատ անգամ
պահանջում է որոշ յուտորում բնագրի բատական հանդերձ:

ողին և խմատն աւելի հարազատորքն տպու համար: Այս տեսակեւից Մէտէրին այնքան ճեռու է գնում, որ Եկրավիրի Արարագրութիւնները բարդապում է բնութեան մի տևարանի, ծովի, մաշրամատի, կամ մի դաշտավակարի հետ, որի տուած ամեն մի հանդիսաւոն իր սեփական տպաւորութիւնն է ստանում: Եւ ամեն արտիստ կարող է իր ունեցած ուղղ միջոցներով միայն իր տպաւորութիւնը վերարտադրել: Եւ իրան, ո՞րուած յաձախ Եկրավիրի թարգմանիչը ստիլսած է մարտու անյաղթելի դժւարութիւնների դեմ, անաւելու իր գրչի անգօրութիւնը և իր միջոցների սորութիւնը Եկրավիրւան մտածութիւնը փոխադրելու համար, միշտ ինչպէս նկարիչը մնում է հիացած բայց յուսահատ՝ բնութեան մի վատահեղ տեսարան իր կուայի վրայ վերարտադրելու: Իդէալ թարգմանութիւնը կը լինէր, որևէն, որքան կարելի է քիչ հեռանալ բնագրի բառացի արտայայտութիւնց, տպաց ողին և խմատը գոնիրու: Այսպիսի թարգմանութիւնն դատենում է մի երկրորդ ստեղծագործութիւն, և ինչու պատասխանաւոն ձեռնարկ:

Սոյնպէս հարկ ենք համարել որոշ վախիոյութիւններ մուցնել տողերի դասաւորութեան մէջ: Մէր նայեկին թարգմանութեան մէջ գործածել ենք 10—12 վաճանց տողեր, հետևելով անզիսկան տողին, որ 10—11 վաճակ ունի. բայց նայերէն բառերը բնիքնաբաւագէն աւելի երկար լիներով բան անզիսկան բառերը՝ ստիլսած էին տողի պարունակութիւնը տեսաւորել մէկ ու կես տողի կամ երկու տողի մէջ ասիստասութիւնը տողերի վրայ բաժանելով: Այդ բանը որոշ անյարժարութիւն ունի ծարդութեան համար, այսպէս ասնամ, աչքի տեսակեւից: Մնան այժմ աշխատել ենք բնագրի ամեն մի տողը նայերէն մէկ տողով տալ, այսինքն, երկու կամ երեք հատուած տեսպատրուն մէկ տողի մէջ. հետեւամբն այն է եղան որ ներկայ ձեւի մէջ կամ երկար (15 վաճանց) և կարճ (10 վաճանց) տողեր, ինչ որ մնտ անյարժարութիւնն է, բանի որ բնագրի մէջ էլ կամ երկար ու կարճ տողեր: Այդ վախիոյութիւնն մեր կարծիքով որոշ բնականութիւնն է ստեղծել իմաստի՝ և տողերի բաժանման մէջ:

Մենք ամենենին յառակետութիւն շնորհիր Եկրապիրի թարգմանութեան դժւարին և պատասխանառու զորժն արժանապէս կատարած լինենու. բայց եթէ այս աշխատութիւնը կարող կը լինի իբրև ճիմք ժառայել, որի վրայ ապագայ առելի ընդունակ թարգմանիչներ աւելի հարազատորէն կը կառուցանան Եկրապիրնան մուտքութեան հայացրած շէնքը՝ մեր ամենաշերտ խոճը կատարած պիտի համարենք:





Շ է Ք Ա Գ ի Ռ

Այս պատկերը տպված է իր գործերի առաջին լիւլատար Բրատարակութեամ տպատհամ:

(1623 թ.):

Նա շէ պատկանում մէկ դարի, այլ բոլոր ժամանակներին:

ԲԻԱ ՋՈՒԱՆԻ:

“ՀԱՄԼԵՏԻ, ԱԳԻՒԽԻՄՆԵՐԸ”

Մատառապես 13-րդ դարի սկիզբներում Դանիացի մի հեղինակ՝
Սաքսո Դրամատիկոս (Քերականը) իր Պատմաշու պատմութիւնը, քատիներէն կուտած
Դրքի մէջ պատմում է Ամէլիթոփ պատմութիւնը, քատիներէն լեզով։
Սաքսո այդ Սկանդինավեան լեզվնդան աւելի հետաքրքիր գարձներու-
համար՝ Հուվամայեցի Լուցիոս Յունիոս Բրուտոսի պատմութիւնից, որ
երկար ժամանակ խնճիռութիւն էր կեղծում իր նպատակը գործա-
դրելու համար, կտորներ է փոխ առել եւ խառնել Ամէլիթոփի պատ-
մութեան հետ։ Դանեամրգայի թագաւոր Ռորիկի իշխանութեան ժա-
մանակ Հորվէնդիլ եւ իր եղբայրը Ֆէնդ կտորավարում են եղիլ
Խւալանդը։ Հորվէնդիլ ազանում է Նորվէգիայի թագաւոր Քոյն,
եւ հնութեան է առնում Ռորիկ թագաւորի գուսար Դերութային,
որից ունենում է մի զաւակ Ամէլիթ անունով։ Ֆէնդ, նախանձելով
իր եղբօրը՝ զաւով սպանում է նրան եւ ամուսնանում է նրա հնաջ-
դերութայի հետ։ Ամէլիթ վճռում է իր հօր վրէմը հանել, բայց
միոց չունենալով անմիջապէս իր նպատակը գործադրելու եւ վախե-
նալով իր հօրեղօրը թշնամութիւններ խնճիռութիւն է ձեւացնում
եւ անամական յիմարութիւններ է անում։ Պալատականներին ծաղ-
րում է առեղծւածական խօսքերով, որոնք նրանց համար անիմաստ
են, բայց թագուն նշանակութիւն ունեն։ Թագաւորի կուտակիցները
փորձում են հնարքով հասկանալ թէ արդեօք խօսպէս Ամէլիթը
խնճիռ է, թէ միայն կեղծում է։ Նրա խորթ քրոջը համզում են,
որ առանձին տեսակցութիւն ունենայ Ամէլիթի հետ եւ աշխատէ
գաղտնիքը հասկանալ։ Ամէլիթի խորթ եղբայրը գաղտնապէս այս մա-
սն նրան լուր է տալիս, եւ այդ կերպով զաւազբաւթիւնը ջուրն է
ընկնում։ Ֆէնդի բարեկամներից մէկը վճռում է զաղոնի ականջ

Դնել Ամէթի տեսակցութեանն իր մօր հետ։ Ամէթ, ազլորի որէս կանչեցվ եւ իր բազուհները թեւերի որէս թափ տարով՝ թռչուտում է այստեղ այնտեղ, եւ ի վերջոց գանում է դարմանի տակ ծածկած ըտեսին եւ սպանում։ Ենույ նրա մարմինը յօշտում է եւ եռցնեցվ թափում է խոզերի առաջ։ Ամէթ այդ տեսակցութեան մէջ իր մօրը յայտնում է թէ իր խնդժութիւնը կեղծւած բան է, եւ թէ ինքը վճակը է իր հօր վըեժը հանել, եւ յաջողում է իր մօրն էլ իր հետ համաժիտ անել։ Վէնդ Ամէթին ու զարկում է Բրիտանիա իր երկու ընկերների հետ, տալով նրանց մի գաղտնի նամակ ու զդաւած Բրիտանիայի թագաւորին, որով խնդրում է նրանից Ամէթին սպանել։ Ամէթ նամակի պարունակութիւնը փոխում է, եւ իր անունի տեղ գնումէ իր ընկերների անունները։ Նրանք համում են Բրիտանիա, Բագաւորը նրանց սպանել է տափս Բրիտանիայում նա յաջողում է ամռւնանալ թագաւորի աղջկայ հետ, եւ դանազան արկածներ է ունենում, որ աւելորդ ենք համարում այստեղ յիշատակել, քանի որ կազ չըւնին Շէքսպիրի «Համետի», հետ։ Ելերագառնարով Դանենմարքա, Ամէթ զինովցնում է պարատականներին, նրանց շրջապատում է իր մօր զործած ցանցերով, հրզեհ է ձգում պարատի մէջ եւ իր սրով հօրեղբօրն սպանում է։ Ասպա ժողովրդին զիմելով իր հօրեղբօր արածները պատմում է, որից յետոյ ժողովուրդը նրան կեցցէներով թագաւոր է հրատարակում։ Ուրիշ շատ արկածներից յետոյ, որոնց ընթացքում Ամէթ մեծ խորանանքութիւն եւ քաջարութիւն է ցոյց տաղիս, Ամէթ մի պատերազմի մէջ սպանուում է։

Սարսօյի այս պատմութիւն՝ տպւած է 1514ին։ 1570ին մի Փրանսիայի — Belle forest — Սարսօյի զրբի ազատ թարգմանութիւնն է տաղիս Փրանսիքն լեզուով։ Կայ եւ Անգլիական մի թարգմանութիւն Բէլլֆորի զրբի, որ տպւել է 1608ին, այսինքն Շէքսպիրի երկի տպագրութիւնից հննդ տարի յետոյ։

Այս է այն կոպիս պատմութիւնը, որ իրքեւ առաջին հիմ պիտի ծառայեր աշխարհի ամենազեղարևեստական զրւածքներից մէկին։ բայց Շէքսպիրի անմիջական ազրիւրն ուրիշ է։ Արդէն 1589ին անզիներէն լեզուով մի զրամա զյութիւն ունէր, որի նկաթը համետի

պատմութիւնն էր: Այդ զրամանն զժրախսարար կորած է. բայց ժամանակակից զրականութեան մէջ յիշատակութիւն կայ այդ զրւածքի մասին: Արիտիկները ընդհանրապէս համամիտ են այդ զրաման թովմաս Քիղբն վերագրելու: Սնթագրութեան հիմն այն է, որ նոյն հեղինակից մնացած է մի զրաման, *Սպանիական Ողբերգութիւն, անունով, որի մէջ շատ նմանութիւններ կան Համբէտի նիւթի հետ. օրինակ, այս զրամայի նիւթն էլ վըստինդրութիւնն է, մի հայրուզում է իր սպանւած որդու վրէժը հանել, Համբէտի հակառակը. այնանեղ էլ կիղբը մնացնորութեան աստիճանի է հասցնում. այնանեղ էլ կայ մի ուրախան, այնանեղ էլ կայ մի ներկայացում ներկայացման մէջ: Քիղ որ Վրանաներէն զիտէր, եւ այդ լնդից թարգմանութիւններ է արել, կարող է Բէլովորէի թարգմանութիւնը կարգացած եւ Համբէտի նիւթին ծանօթացած լինել: Կարելի է առել, ուրեմն թէ Քիղի այդ զրւածքն է, որ Ծէքապիր ուղղել եւ յարմարցրել է խաղալու համար, եւ որից առաջ է եկել *Համբէտի, հրաշակերտը:

Խնդիր երեւում է Ծէքապիր “Համբէտը”, զրել է 1602ին. կարծողներ էլ կան որ 1601ի ընթացքում զրւած է, բայց հիմունքներ չեն զրա համար: Յամենայն դէպ՝ 1602, Յուլիս 26ին հրաման է խնդրաւծ տպելու համար մի զիրք հետեւեալ վերտառութեամբ: “Պանելմորտույի ինչու Համբէտի Վէճեց, Բնութան վրա իշլաշել էն լուր Անելիտույի ժողովունը (զերտառանական խումբը): Հետեւեալ տարին, 1603ին հրատարակւած է Համբէտի քառածալ տպագրութիւնը այս վերնագրով: — Ոլո՛ք ու ու ու ու ու ու ու Համբէտի, Պանելմորտույի ինչունի, Անելիտույի վէճում Շէւույիր, Բնութան վրա անձաներ իշլաշել է Նորին բորբոքունիւնը ժողովունը (թագաւորի խումբի) Անուշը Լուրու առաջունում, և Քէմբէլը — Օ՛Ռուրի համալսարաններու, և այլուր Լուրու 1603: Լորդ Աննե կապեատի խումբը, — Ծէքապիրի խումբը, — Զէյմ Իի գահակալութեան առիթով զարձել էր *Նորին թարգրութեան, խումբը: Այս տպագրութիւնը կոչւած է յետագայում “Առաջին Քառածալ”: 1604ին հրատարակւած է “Երփրորդ Քառածալ”, այս վերնագրով: — *Ոլո՛ք ու ու ու ու ու Համբէտի, Պանելմորտույի ինչունի: Անու-

հայութն ավելի շահողութիւն է ուր և յանձնելու դպրութեան, անձնանի կանոնադրութիւն բանադրութիւնը հարաբեր է վահագութակի ու համական 1604:

Անձնանի է որ 1603ի Քառածաց ազգինի միջազներով կատարած մի հաստատակութիւնն է: Արա մէջ գտնածած սիսալերն անձն ըսղութեան սիսալեր են, քան թէ աչքի, կամ զրաշարի անոն շաղրա թեան: որից երեւում է թէ, ըստ այն ժամանակի սովորութեան, մի սպազրող ու զարիւած է եղել թատրոն, որ ներկայացման ժամանակ սպազրէ: կամ եւ ընդօրինակութեան սիսալեր, որոնք սպազրոց տպագրութեան համար արտագրելու սիսալեր կարող են ընկել: Դիրքը ին է անհամար սիսալերով եւ անհեթեթ տողերով: Այս քառածաց մէջ կար 2143 տող, այսինքն 1700—1800 տող պահա երկրորդ Քառածացից: Կամ եւ անունի փոփոխութիւններ: — Պողնիուսի տեղ Կորամիքս է զրւած եւ Ռէյնալդզոյի տեղ՝ Մանտուա: Բեմական թագաւորութեւ թագուհին Դաւիդ եւ Դրուտին էն: Սորբիի գանզը 12 տարի միայն մնացած է հողի տակ, եւ Դաւրուն ու Դրուտին միայն 13 տարուց ի վեր ամուսնացած են: կան եւ ուրիշ փոփոխութիւններ, որոնց մէջ կարեւորն այն է, որ Շինել թէ ը մնելու: զետեղած է նոյն տեսարանում, ուր կարգացւում է համբէտի սիրային նամակից:

Այսպիսի կարեւոր փոփոխութիւններ բացարելու համար երկու ենթազրութիւն միայն կարող ենք անել: կամ հին խաղից — միցի համբէտից — բաւական մեծ մաս պարունակւած է 1603ի Քառածացի մէջ, եւ կամ այդ Քառածաց անկատար եւ սիսալ արտազրութիւնն է Շէքսպիրի զրւածի, որ Շէքսպիր բնքն էլ յետագայում սրբազրած եւ փոփոխած է: Կրիտիկների կարծիքներն այս մասին շատ են տարրերում իրարից: Ըստ Դաւուդինի՝ 1603ի Քառածացի մէջ Շէքսպիրի մեռքն անվերեալ կերպով մանաշելի է, եւ սիսալները միայն անհոգութեան սիսալեր են: Պրոֆ. Սըր Խարուել Դուանց այն կարծիքի է, թէ 1603ի Քառածաց ազաւաղւած եւ կրծաւած վերաբազրութիւնն է Շէքսպիրից առաջ մի այլ հիմնակի աշխատա թեան, որ Շէքսպիր 1602ին որոշ շափով ուղղած եւ սրբազրած է:

Շեքսպիրի կենցանութեան ժամանակ՝ Համլետի այդ երկու տպագրութիւնները միայն կոյին, որոնցից ու մէկի մէջ բնօքը մասնակցութիւն չէ անեցել: Եր մահից 7 տարի յետոյ 1623 թն Շեքսպիրի խոռոքին պատճենաց երկու գերասան լոյս ընծայեցին նրա զրւածների վիակատը հրատարակութիւնը: Այս տպագրութիւնը մասնաւորապէս կատարւած է բեմական նպատակի համար, եւ շատ հաւածներ, որոնք կոյին 1604 ի Թառածալի մէջ՝ կրծառւած են: Այժմեան ընդունւած բնազիրը կազմւած է 1604 ի Թառածալից եւ 1623 ի մեծազիր հրատարակութիւնից որ կոչւած է «Միածալ»:

ՀԱՄԱՀԱՅԻ ԱՌԵՎԱՐԴԻ ԱԾՈՒՅԹ

Չը կայ համաշխարհային գրականութեան մէջ մի գիրք, որից վրայ այնքան բան զրւած լինի, որքան Շեքսպիրի այս հեղինակութեան վրայ. ամեն կարելի եւ անկարելի բացատրութիւններն երեւակայւած են, ամեն ընդունելի եւ անընդունելի լուծումներն առաջարկւած են, առանց վերջնական եւ անստգիւար լուծումի յանդելու. Ամեն սերունդ, համաձայն իր հակումների եւ հայեացքների՝ Համիլտոնի մէջ տեսել է մի հմայիչ, ոգեւորիչ իդէալ, եւ յաջորդ սերունդն արդէն անզոհ է մնացել առաջարկւած լուծումներից, եւ սկսել է նկատել Համիլտոնի բնաւորութեան մէջ այնպիսի առանձնայատիւթիւններ, որոնք, մինչեւ այն, աննկատելի էին մնացել: Ի՞նչ մէջն է կայանում այս յաւետ անբացատրելի եւ յաւետ հրապուրիւառեցւածը:

Այն օրից ինչ Համիլտոն հասարակաց սեփականութիւնն զարձաւ՝ իսկցն գրաւեց ժողովրդին: Ամբոխը, որի համար “Համիլտոն”, պէտք է, Շեքսպիրի բառերով, “ասպիքար”, լինէր, կարծես բնազդով հասկացաւ Համիլտոնի զրւածքը. ասում եմ բնազդով, որովհետեւ ոչ միայն իր ժամանակ, այլ եւ յաջորդ երկու հարիւր տարւայ ընթացքում, ոչ ժողովուրդը, ոչ էլ մեծ հեղինակներ եւ փիլիսոփաներ ըմբռնել են զրւածքի իսկական բնոյթը: Այդ երկար ժամանակամիջոցում, առաջնակարգ մատծողներ կարգացել եւ վայելել են “Համիլտոն”, պանչացել են զրւածքի զանազան արժանիքների վրայ, հմայւել են նրա ոճի զեղեցկութիւնից եւ երաժշտութիւնից, բայց չեն անզամ դրեւակայել, թէ Շեքսպիր այդ բոլորից գուրս կարող էր մի որոշ զադափար, մի յասակազիծ ունենալ, որի վրայ ամբողջ զրւածքը հիմնած լինէր: Հանմէր (1736) նկատում է, թէ ոչ մի բնական պատճառ չէ երեւում, թէ ինչու երիտասարդ իշխանն իր ոճրագործ

հօրեղքորը մի բոպէ առաջ չէ սպանում։ Եւ այս բանը նրանով է միայն բացատրում, որ թթէ Համբէտ այդպէս վարեկը՝ խաղը զրանով՝ կը վերջանար. այլապէս խօսելով՝ չեր կարելի զրանից մի ողբերգութեան նիւթ դուրս բերել։ Զննան (1765) զանում է թէ խաղը բոլոր ընթացքում Համբէտ աւելի իրեւ գործիք է հանդիսանում։ քան իրեւ գործող, եւ այդ բանը համարում է պահառութիւն։ Ըեքսպիրի թատերագրական տաղանդի համար՝ առանց մի բոպէ անդրադառնար, որ դա կարող է Ըեքսպիրի մասզբւած յատախղիծը լինել։ Ու էլ վաղակրի պէս մի փիլխափիայական, թափանցող միտք, որ առաջնոր եղաւ։ Ըեքսպիրին իր հայրենակիցներին ծանօթացնող, կարողացաւ Համբէտին ողին ըմբռնել։ Նա կուռմ է Համբէտը, մի “գաեհիկ եւ բարբարոսական զրամա, որին Փրանսիայի կամ Ռուսիայի ամենանւաստ ամբոխը ըստ պիտի հանդուրժէր”, “թէեւ,, առում է նա մի քիչ յետոյ, որա մէջ կան վսեմ հառւածներ։ պրճք վայել են աշխարհի ամենամեծ հանճարին”։

Պրոֆ. Բրազդէյ նկատում է որ ոչ մի ապացոյց ըստ կայ թէ Ըեքսպիրի օրով Համբէտի բնաւորութիւնը հասկացւել է, եւ առում է թէ գուցէ այն մարդիկ իրաւունք ունին, որոնք կարծում են թէ Համբէտը, չեր կարելի արդիւնք համարել իր ժամանակի, այլ նա մի տեսակ մարդարկէական տեսիլք է յետագայ ժամանակների։

Առաջին անգամ 1780թն Հէնրի Մաքէնզի սկսում է նշանուել Համբէտի հոգերանութիւնը։ “Ըեքսպիրի բոլոր տիպերից, զրում է նա, Համբէտն ամենին աւելի դժւար է վերածել որոշ սկզբունքի։ Եւ պէտք է որոնել թէ կայ արդեօք մի առաջնորդող զաղափար, որով կարելի լինի այս առերեւոյթ հակասութիւնները հաշտեցնել։ Նրա զնահատութիւնն այնքան հետաքրքրական է, որ հարկ ենք համարում հետեւեալ հառւածը մէջ բերել։ — “Եթէ Համբէտ վճռական եւ անյեղլի որոշումով հետապնդէր իր վրեմին, եւ իր նպատակի իրադորժման զժւարութիւնները պատահական պատճաններից միայն առաջ եկած լինեն, ոչ թէ իր սեփական կասիածանքից եւ վարանութերից հանդիսատեսի անձկութիւնը կարող էր շատ բարձր աստիճանի հանել, բայց դա կը լինէր պատահանների պատճառով, ոչ թէ անձնաւորութեան։ Բայց այսպէս որ Ըեքսպիր դուրս

է թերած համընտի տիպը՝ մենք զգում ենք համընտի ոչ միայն առաջինութիւնները որպէս մերը, այլ և նրա թուրութիւնները։ Մենք տեսնում ենք որ մի մարդ, որ ուրիշ հանգամանքներում բոլոր բարցական եւ ընկերական առաքինութիւնները ցոյց պիտի տար իր անձի վրայ, զրւած է այնպիսի զիրքում, ուր իր հօգու բոլոր սիրելի յատկութիւնները ծառացում են միայն նրա տաղնապն աւելացնելու եւ տարափուանքը շատացնելու։ Մեր համակրութիւնը նրա տաննանքի հանդէպ, եւ մեր անձկութիւնը նրա տարափուանքի հանդէպ՝ հասնում են ամենաբարձր աստիճանի, եւ այդ տեղից է ծագում «Համընտի», այն անորակիցի հմայքը որ ամեն ընթերցող կամ հանգիստամս զգում է, մինչդեռ աւելի կատարեալ բնաւորութիւններ չեն կարողանում մեզ այզբան թուվել։

Համընտի բնաւորութեան վերլուծութեան մէջ Մաքենզին աւելի առաջ ըստ զնաց։ Բայց արդէն տեսնում ենք կատարւած յառաջդիմութիւնը։ Համընտի վարանութենքը չեն նկատում որպէս հեղինակի թերութիւններ, այլ զիտաւորեալ յատակազիծ, եւ նրանք մեզ աւելի են զրաւում, ինչպէս ինքն առում է, քան եթէ Համընտի բնաւորութիւնը բարցապիս կատարեալ գուրա թերւած լիներ։

Համընտի հոգեբանութեան մէջ աւելի խոր թարիսանցելու պատիւր պահւած էր Գեօթէին։ Նրա վերլուծումը, թէեւ միակողմանի, այն անկինաքարը զարձաւ, որի վրայ կառուցեց յետազայռում կրիտիկայի մի ամրողջ շնչք։ Ահա թէ նա վլիյնելը Մայստէրի աշակերտութեան տարինները զրւածքի մէջ ինչպէս է արտացյատուում։

Ժամանակն իր շատից դուրս է սայթաքել. օ՛, բախտ իմ դժխեմ, ինչո՞ւ ծընեցայ որ հէնց նս ուղղեմ։

*Այս բառերի մէջն է, իմ կարծիքով, Համընտի բոլոր վարմանքի բանացին, եւ ինձ համար պարզ է, որ Եկեղակիր կառեցել է նկարագրել մի մեծ գործ, որ պարտազրւած է այդ գործը կատարելու անկարող մի հօգու։ Ինձ թւում է թէ բոլոր զրաման այդ մոքով է շարազրւած։ Ահա մի կազնի որ տնկւած է մի թանկազին անօթի մէջ, որ միայն քնքուշ ծաղիկներ կարող էր ընդունել իր զրկում։ արմանները տարածւում են, եւ ծաղիկամանը փշուր փշուր է լինում։

“Մի զեղեցիկ, մաքուր, ազնիւ, եւ վերին աստիճանի բարդական տիպ, բայց զուրկ այն զգեցզ ջղերից որոնք սեփական են մի հերթափի, ճմբում է մի բեռան տակ, որ ոչ տանել է կարողանում, եւ ոչ դէն նետել. ամեն պարտականութիւն ուուրբ է նրա համար, բայց այս մէկը շատ է ծանր: Անկարեցն է նրանից պահանջւում: ոչ թէ էապէս անկարեցն, այլ նրա համար անկարեցն: Խնչողէ զարարում է նա, զառնում է, տանջւում է, առաջ է զնում, յետ է նահանջում, միշտ մասքերում է, միշտ ննիքն իրեն յիշեցնում է, եւ, ի վերջը, իր նպատակը մաքիցը հանում է՝ առանց երբ եւ իցէ իր հոգու անդրորութիւնը վերագտնելու:”

“Համըէտ աւելի զբացումով է օժուած, քան թէ ուժեղ բնաւրութեամբ. դէսքերն են նրան յառաջ մզում: եւ հէնց այդ պատճառով դրաման մի վիպասանութեան ծառայն է ստացել. բայց քանի որ ճակատագիրն է խալըն ուղղութիւն տուողը, եւ քանի որ դրաման ծագումէ մի սարսափերի ուժրագործութիւնից եւ հերոոր անդադար մզումէ դէսի մի սարսափելի գործ՝ զբանքը վերին աստիճանի եղերական է եւ միայն եղերական վախճանի կարող էր յանգել:”

Դէօթէի այս գնահատութիւնը, թէեւ վերին աստիճանի հանձորեղ, թէեւ համապատասխան որոշ զգերի որ տեսնում ենք համըէտի բնաւրութեան մէջ, այնու ամենային չը բերեց անթերի լուծումը: Դառուդէն, խօսելով այս մասին, ասում է. — “Դէօթէի պատկերի մէջ կէս ծշմարտութիւն կայ, բայց կէս միայն: Շէքսպիրի զրամաների մեծ մասի մէջ հերոսների բնաւրութեան եւ կեանքի եղերական աղաւաղումն առաջ է զայխ նրանից, որ դրամայի զիխաւոր անմեաւորութիւնը ընկնում է մի նւազող կրքի ազդեցութեան տակ, մի կրքի, որ էապէս ներհակ է իր բնութեանը, բայց որն առաջ է զարիս իր մէջ բնածին մի թուրութիւնից կամ թերութիւնից. եւ այդ կրքից զոհը չէ կարողանում ննիքն իրեն ազատել, եւ զա՞ վերջ ի վերջը նրա կործանման պատճառն է զառնում: Այսպէս, օրինակ, Օթէլլոն, որ ի բնէ հաւատացզ եւ վստահող հոգի ունէր, մի տեսակ մասնական ազնիւ վստահութեամբ. մի մարդ, որ հէնց Սազօյի խօսքերով “Պարկեշտ է կարծում այն բոլոր մարդկանց, որոնք պարկեշտ են թւում”, մի մարդ, որ զիւրաւ չէ նախանձում:

այդպիսի մարդը վարակում է կասկածի եւ խանդի թշնից, եւ այդ թշնը նրան գժւացնում եւ կործանում է: Սյնդէս Մակրեթ, որ ստեղծւած էր ստորագաս լինելու համար, մի սարսափելի եւ անքնական փառափրութեան դոհ է զանում: Սյնդէս Լիր արքան, Տիմոն Աթենացին եւ այն: Շեքսափիր, իր այս զրամատիկ մէժողին հաւատարիմ, եւ որպէս արտիստ, որ գերազասում է մարդկային կրքի եւ ասպրումի բարդ երեւոյթները պարզ երեւոյթներից, Դանիացի իշխանի բնաւորութիւնը կերտելիս՝ նրան ձեւակերպել է որպէս մի մարդ, որին յարտաեւ գործը, եւ, որոշ չափով, նախամատածւած վրիմառութիւնը մասնաւորապէս հակակերպի է: Այս անտանելի բռուան տակ համբէտ գոզգոզում է, երեւում է, եւ վերջապէս ընկնում է: Մինչեւ այստեղ հեօթէ իրաւունք ունի: Բայց նա չէ նկատել, որ, ճնշպէս Ռումիկ եւ Զուլիկաի պարագայում, ամբողջ աշխարհը համբէտի գեմ էր:

Ժամանակն իր շատից դուրս է սայթաքել. օ՞՛, բախտ իմ դժխնմ, նշշն ծնւեցայ որ հէնց նս ուղղեմ:

Համբէտի վրայ պարոք է զրւած մի բարոյապէս փշացած եւ խաւար աշխարհում բարոյական կարդ հաստատել: Նրա առաջ ըս կայ մի բաց դաշտ կամ մի բլուրի քզանց, ուր կարողանայ այս պատերազմը յայտնապէս վարել: այլ մի վտանգաւոր եւ մալորեցնող զիրք, մաւթ եւ ծուռումուռ շաւիղներով: Նա ծնւած է պարկեշտ լինելու համար, եւ ստիպւած է կռւել իր հակառակօրդների զէնքերով, ստիպւած է խորամանկ եւ նենգամիտ հնարքներ գործի դնել. այս կերպով նա վատնում է իր բոլոր ընդունակութիւնը ճարպիկ ու ճարտար դաւեր հնարելու մէջ: Նրա ունեցած բոլոր ուժը կարող էր կարդ ու կանոնով կազմակերպիլ եւ օգտակար դառնալ՝ եթէ նրա աշխարհը պարկեշտութեան, երջանկութեան եւ մարդկային սիրոյ մի աշխարհ լինէր: Բայց խարէութեան, լռանութեան, եսասիրութեան մի աշխարհ շրջապատում է նրան. Նրա իդէալիզմը երեսուն տարեկան հասակում, դառնում է մօտաւորապէս պէսսիմիզմ: Նրա սիրար եւ կեանքը դառնում են ասուլ. նա կորցնում է այն աւինը, որ առաջ է զալիս առողջ եւ կենաւրախ զզացողութիւնից. եւ իրեն

շշապատող համատարած ապահովութեան միջավայրում նրա միոքը փորձում է քննել և զննել իրերի կարգը, աւելի քան թէ որ և է շափով մի գործնական ծառացութիւն անել։ Աշխարհի քաղցան մեղած պարտէզում՝ ննջու համար պէտք է նա իր կեանքը մաշեր մի միակ անսպիտան խոտ արմատախիլ անելըվ։»

Խակ Բրազըէյ, իր «Համբէտի», ուսումնակրութեան մէջ՝ դանում է որ Գէօթէն անտես է արել թատրերի մէջ նշանակւած շատ կարեւոր փաստեր։ Անչպէս կարելի է, ասում է նա, «որ մի ծաղկանման և քննչահոգի, իշխան — ննջակս Գէօթէն գուրս է բերել Համբէտին — այնպիսի գործեր կատարեր, ինչպէս տեսնում ենք որ նա կատարել է։ Անչ յարաբերութիւն կայ այդ Համբէտի և այն Համբէտի մէջ, որ երր ուրեականը նրան կանչում է, ասում է իր ընկերներին։

Թողէք, պարոններ,

Երկինքն է վկայ, ուրու կը դարձնեմ ինձ արգելողին։

Այն Համբէտի, որ ոչ մի անգամ չէ խօսում թագաւորի հետ առանց մի անարգանք անելու, կամ Պողոնիուսի հետ՝ առանց մի կծու հեղնութեան։ այն Համբէտի, որ փոթորիկ է բարձրացնում Օֆէլիայի զիմին և «Դաշտները, է խօսում» իր մօր հետ։ այն Համբէտի, որ արրասի ետեւ մի ձայն բերով՝ «մի ահնիմարթում սուրը գուրս է քաշում և խրում է ըստեսի մարմնի մէջ։ այն Համբէտի, որ իր դաշնիկերներին ուղարիսում է դէպի մահ, և մի բռպէ անգամ իր միաքը չէ զբաղեցնում նրանցով։ այն Համբէտի, որ առաջինն անցնում է յերտպահանաւը և որ կուռում է Լակրտի հետ գերեզմանի մէջ։ այն Համբէտի, որ, վերջին առարկանում, գառնում է Տափատազրական մարդ, և որի առաջ բոլոր պալատականները կանգնած են մեռմ դարհուրականքով։ այն Համբէտի, որ, երր հասու է թիսում մշնարաւթեան, յարձակում է թագաւորի վլայ, և սուրը խրում է նրա մարմնի մէջ, յետոյ բռնում է թռնամից բաժակը և բռնի մոցնում այն թշւառի առաների մէջ։ այն Համբէտի, որ մահւան երկունքի մէջ՝ դեռ եւս բաւական ցած եւ աւելի ունի բաժակը Հորացիոյի ձեռքից խլելու, որպէս զի նրան թողլ չը այ խմել։ Այս մարգը,

Ծէքազիրի Համբէտը, մի հերսոսական, մի սարասփելի տիպ է։ Նա մի ահեղ հակառակորդ կը լինէր նոյնիսկ Օթէլլօյի կամ Մակրէմի առաջ։

Բրազլէյ գտնում է որ մի ուրիշ տեսակէտից էլ Գէօթէի ներկայացրած Համբէտի պատկերը հարազատ չէ։ Համբէտ իր բնաւորութեան մէջ ունի որոշ կարծրասրտութիւն։ Պրանիուսին սպանելուց յետոյ նա ուրիշ խօսք չէ գտնում ասելու եթէ ու։

Այ թշւառ, յախուռն, միշամհւիս յիմնար. բարի ճանապարհ Քեզնից մեծի տեղ ենթաղրեցի քեզ. ստացիր բախտող։

Տես ինչ վտանգ կայ ուրիշի զործին խառնւելու մէջ։

Յետոյ նրա մարմինը դուրս քաշելու ժամանակ ի՞նչ անվայել բառեր է գործածում Օֆէլիայի հօր մասին։ Սոյն անզգայութիւնը տեսնում ենք նրա մէջ, երբ խօսում է Ռոգենկրանցի եւ Գիգենշտերնի մահւան մասին։ Ոչոշով չէ կարելի բացատրել նրա արհամարհալից եւ անպատշաճ լեզուն Օֆէլիայի հետ՝ ներկայացման ապարանում։

Գէօթէի այս ուսումնակրութիւնը թէեւ չը լուծեց խնդիրը, բայց այն արժանիքն ունեցաւ, որ նոր ուղղութիւն տևաւ կրիտիկային։ այնուհետեւ ամենքն սկսան Համբէտի առեղծւածի լուծումը վնասել նրա բնաւորութեան։ Հոգեբանութեան մէջ, ոչ թէ արտաքին, իրենից անկախ հանգամանքների մէջ։ Միաժամանակ երեւան եկաւ մի նոր վարդապետութիւն թէ՛ Անզգայում եւ թէ՛ Գերմանիայում, իրարից անկախ։ Կողմէ 1808 წն, այսպէս է գրում։ —

Համբէտի բնաւորութիւնը լաւ հասկանալու համար՝ պէտք է մենք աչքի առաջ ունենանք մեր մոտքի կազմութիւնը։ մարդը զանազնում է անասնից այն շափով, ինչ շափով մտածութիւնը զերիշխում է զգայարանքի վրայ։ Բայց մոտքի առողջ գործունելութեան ժամանակ՝ անդադար մի տեսակ հաւասարիշութիւն է զոյանում արտաքին առարկաներից ստացւած տպաւորութեան եւ մոտքի ներքին գործունելութեան միջեւ։ Նթէ զիսողական ունակութեան նժամը շատ է ծանրանում, մարդ դառնում է առակ խորհրդածող մի էակ, եւ կորցնում է գործելու բնածին կարողութիւնը։ Ծէքազիրի առեղծագործական յատկութիւններից մէկն էլ

այն է, որ նա երեւակայում է մի որեւիցէ բարդյական կամ մասյին յատկութիւն, հիւանդոս շափաղանցութեան հասցրած, եւ յետոյ ինքն իրեն զնում է՝ այդ հիւանդաստ կամ պահասաւոր հոգեկան վեճակով՝ որոշ հանդամանքների մէջ։ Համբէտի մէջ նա ուզեցել է ցոյց տալ թէ բարդյակէս անհրաժեշտ է որ մի պարտ ու պատշաճ հաւասարակշռութիւն ստեղծւի մեր զրաից ստացած տարաւորութիւնների եւ մեր մորի ներքին գործունէութեան միջեւ, այլապէս խօսելով, իրական աշխարհի եւ երեւակայական աշխարհի միջեւ։ Համբէտի մէջ այդ հաւասարակշռութիւնը խանգարւած է։ Նրա խորոշները եւ մտացածին պատկերները շատ առելի ուժեղ են, քան թէ իրական տպաւորութիւնները. եւ մինչեւ անգամ՝ նրա իրական տպաւորութիւնները՝ անմիջապէս անցնելով իր խորհրդածութեան խողովակով՝ այնպիսի մի գոյն ու ձեւ են ստանում, որ իրենց սեփական գոյնն ու ձեւը չեն։ Այս կերպով մենք անսում ենք մի ահազին իմացական գործունէութիւն, եւ զրա կողքին, իրեւ հետեւանք, նոյնչափ մեծ հակակութիւն գէտի իրական գործը։ Այս տիպը Շեքսպիր զնում է մի որոշ միջավայրի մէջ, որից խցս տալու ձար չը կայ։ Համբէտ քաջասիրա է եւ մահից երկիրը չունի. բայց տարակուում է զգայնութեան շափաղանցութիւնից, եւ ամեն բան յետաձում է՝ շատ մտմտարուց, եւ այգապէս՝ կորցնում է դործելու կարողութիւնը եւ վճռականութեան արինք։

Սցո՞ն հեղինակն իր մի ուրիշ դասախոսութեան մէջ (1812 թ.) հետեւեալ նշանաւոր խորհրդածութիւնն է անում՝ «Համբէտի առիթով»։ — Շեքսպիր ուզում է մեզ այս ծշմարտութիւնը հակացնել, թէ կեանքի գլխաւոր նախառակը՝ գործն է։ Թէ մեր իմացական կարողութիւնները, որչափ էլ փայլուն լինեն, ոչ մի արժեք չունին, եւ նոյն իսկ անքախտութիւն են՝ եթէ մեզ յետ են կանգնեցնում գործից, եւ մեզ ստիպում են մտածել եւ մտածել, մինչև որեւիցէ արդինաւոր գործ կատարելու ժամանակն անցնում է։ Ամեն բան ինչ որ սիրելի եւ զնահատելի է՝ համախմբւած է Համբէտի մէջ, միայն մէկ բացառութեամբ։ Մի մարդ է, որ ասպում է խորհրդածութեան մէջ, մի մարդ, որին ամեն մարդկային եւ առուստացին զրդիչները գործի են կանչում, բայց նրա կեանքի

զիսաւոր նպատակը դերեւ է եղաւոմ այն բանի հետեւանքով, որ միշտ վճռում է գործել, բայց երբեք վճռելուց դուրս ուրիշ բան չէ անում։

Սոյն մօքով է արտայացուում նաև Ա. Վ. Շլեզել (1809): «Այս բարբարութեամսում է նա, զիտմամբ զրւած է ցոյց տալու համար, թէ ամեն բան հաշող մի խորհրդածութիւն, որ մի գործի բոլոր յարակցութիւնները եւ կարելի հետեւանձնները աչքի առաջ է առնում մինչեւ մարդկացին նախատեսութեան վերջին սահմանը՝ գուացնում է գործելու կարողութիւնը, ինչպէս համբետն ասում է։

Ն էնց այս կերպով վճռականութեան ըընածին զոյնը
Ախտաժէտում՝ է խորհրդածութեան զունաթափ ցոլքից։

Ահա ուրեմն մի նոր բացատրութիւն համբետի բնաւորութեան, կամ, աւելի ճիշդ է ասել, նրա բնաւորութեան մէկ կողմին Պրոֆ. Դառլեն Գէօթէի բնորոշումը թերի գտնելուց յետոյ, պահասաւոր է զանում նաև Կորլին—Շլեզեան վարդապետութիւնը։ «Նթէ, ասում է նա, «Գէօթէի ուսումնասիրութիւնը, թէեւ պրանշելի, կրիտիկան մոլորեցրեց մէկ կողմից՝ ասփազանց բացարձակօրէն ուշադրութիւնը կենդրունացնելով համբետի ներքին աշխարհի վրայ, Շլեզելին եւ Կոլլինի ուսումնասիրութիւնները նոյն սխալը գործեցին մի այլ կողմից՝ չափազանց մեծ կարեւորութիւն տալով համբետի բնաւորութեան տարերիցից միայն մէկին։ Ճիշդ է որ համբետի գործելու կարողութիւնը գոսանում է «եղածի վրայ շատ ծշգրիտօրէն խորհրդածելու», իր սովորութեան պատճառով, եւ ծշմարիտ է, ինչպէս Կորլին ասում է, որ մենք համբետի մէջ տեսնում ենք մի ահազն իմացական գործունեութիւն, եւ զրա կողքին, իրբեւ հետեւանք, նոյնչափ մեծ հակակորութիւն դէպի իրական գործը։ Բայց Համբետ մի միայն եւ սոսկ մտածող չէ. զգայական մնարը նրա բնաւորութեան մէջ նոյնչափ կարեւոր է, որչափ մտաւորականը։ Նրա հիւանդութիւնը նոյնչափ խոր արմաս ունի նրա զգայնութեան եւ սրտի, որչափ ուղեղի մէջ։ Նթէ նրա բոլոր զգացածները փոխարկւում են մտածումների, նոյնքան ծշմարիտ է, որ նրա բոլոր մտածումները տողորւած են զգացումներով։ Ներկայացնել համբետին որպէս գերիշխող մտածողական կարողութեան մի տիսդ, եւ անտես

անել նրա տենչալց եւ զբայուն սիրար՝ կը նշանակէր անհեթեթ եւ անհամանալի դարձնել ամրողջ զրւածքը։

Այս թերի կողմը բացնելուց յետոյ՝ Դառւդէն հակում է Շլէգէլ — Կորիճեան կարծիքին, եւ տալիս է մի պատկեր, որից հարկ ենք համարում բերել մի քանի գծեր։ —

“Նրր խաղն սկսում է՝ Համբէտ հասել է երեսուն տարեկան հասակին, — մի տարիք, երբ երիտասարդական իդէալզը պէտք է ձուլի առնական տարիքի գործնական ձգութենքի մէջ եւ ձեւ տայ նրանց նա ստացել է ամեն տեսակ զատիքարակութիւն, բացի իրական կեանքի զատիքարակութիւնից։ Իր հաստատակամ հօր թագաւորութեան ժամանակ՝ խորհրդածութեան անձնատուր որդին ոչ մի զեր չէ ունեցել խաղաղութեանց կամաց եկել հասել է առնական տարիքին՝ տակաւին մնացած լիներով համալսարանի յամախորդ, փիլիսոփայութեան ուսանող, զեղարւեստի սիրահար եւ կեանքի ու մահի առեղծւածների վրայ մասմացող, բայց որ երրէք իր կեանքում մի վծիռ չէ տևել եւ մի գործ չէ կատարել . . . Համբէտ չէ կարող ոչ մի բան մեռնարկի հանդարտ վճռականութեամբ։ Նոյն խակ անընդունակ է մի մոտածութիւն անխախտ կերպով իւրացնելու։ բոլոր խաղի ընթացքում նա տատանւում է մատերիալիզմի եւ սպիրիտուալիզմի մէջ, անմահութեան հաւատքի եւ անհաւատութեան մէջ, դէպի նախամանառութիւնն ունեցած վատահութեան եւ բախտի առաջ խոնարհւելու յօժարութեան մէջ։ Նրր իր առաջ տեսնում է ուրաքանին, մասքերում է որ ինքն էլ մի հոգեւոր կեանք ունի, եւ հոգու անմահ կեանքը նրա մէջ ուժնդանում է։ Նրր մենակ է մնում եւ անձնատուր իր մասմառքներին նորէն սկսում է դէպի աջ ու ձախ երերալ։ մահը մի քուն է, մի քուն, որ զուցէ երազներով վրդովւած լինի։ Գերեզմանատան մէջ՝ մարդկային հողի առաջ՝ մեր մարդնական ընութեան ստոր յարակցութիւններն անդիմազրելի կերպով զբաղեցնում են նրա երեւակայութիւնը, եւ նրա միտքը կամայ ակամայ հետապնդում է թէ մարդկային հողը ինչ ազեղ պահփոխութենքի շարքից է անցնում։ Այսպէս, Համբէտի մատածութերը, երբ նա անձնատուր է իր խորհրդածական կեանքին, հազի՞ թէ կարելի է խսկական մատածութենք համարել։ այլ նրանք մի տեսակ մա-

ցածին գաղափարներ են, որոնք հալում, նորէն կազմում, նորէն հալում են, յաւէտ փոփոխելով պարագաների բերած ամեն հողմի հետ։ Համելու անընդունակ է որևէ է հաստատականութեան։

Համելու բնաւորութեան այս պատկերը ամենէն աւելի ընդհանրացած է, մանաւանդ այն պատճառով, որ այս թէօրիան հիմնաւորած է Ծերսպիրի բնազրից բերած վկայութիւններով, եւ արդինք չէ ըսկ երեւակայցական տեսութիւնների, ինչպէս շատ շատեր, որ աւելորդ ենք համարում այստեղ յիշատակել։ Բայց կարելի է արդեօք այդ պատկերը լինակատար համարել։ Պրավ։ Բրազիլ այդ կարծիքի չէ։ «Լիակատար չեն, առում է նա, «ոչ թէ այն պատճառով, որ այսինչ կամ այնինչ մանրամանանութիւնը պակասում է, այլ այն պատճառով, որ նա չէ համապատասխանում այն ընդհանուր պատճառութեան, որ մենք ստանում ենք «Համելու», ընթերցումից, եւ շատ բաներ թաղնում է տակաւին չը բացարձրած։ Այդ թէօրիայով՝ Համելու անընդունակ է իր վրայ դրած զործը ոչ եւ է հանգամանքում, եւ ոչ եւ է ժամանակում իրազործելու։ Դա նւասացնում է Համելու պատկերը եւ այլանդակում է խաղը. որովհետեւ Համելու, համաձայն բնազրի բոլոր ցուցմունքներին՝ ի բնէ եւ ի ծնէ այդ տեսակ մարդ չեր. այլ մի մարդ էր, որ ուրիշ որ եւ է ժամանակ եւ տարրեր հանգամանքներում իր վրայ դրած զործը կատարելու լիովին ընդունակ կը լինէր։ Նև իսկապէս նրա ամենամեծ անրախտութիւնն այն է, որ իր կեանքի մեծ տագնապը ձիշդ այնպիսի մի ժամանակ է վրայ հանում, երբ նիցն ան կարող է որ եւ է զիմազրութեան. երբ իր ամենաբարձր ձիրքերը՝ փոխանակ նրան օգնելու, ջաւառում են նրան։ Ոզրեզութեան այս կողմէ բոլորովին անտես է արւած։ Համելու անվճռականութիւնը շատ ծշգօրէն նկարագրաւած է, բայց պատճառն այն չէ, որ այդ թէօրիան տալիս է։ Ուղղակի եւ զիսաւոր պատճառը շատ մտածելու սովորական շափազանցութիւնը չէ, այլ մի մտացին վիճակ, որ բոլորովին անորման էր, եւ արդինք որոշ հանգամանքների. — մի խոր մելամողձութիւն։ Ծիշդ է, Համելու շատ մտածելու հակումը մեծ զեր է խազացել այդ թափիծն առաջ բերելու մեջ, եւ այդ շատ զով՝ նպաստով պատճառն է եղել Դրա անվճռականութեան։ Բայց միւս կողմից լ, մելամողձութիւնը,

արմատ ձգելուց յետոյ՝ ինքն էլ առաջ է բերել շատ մտածելու արամադրութիւն պահանջւած գործի վրայ։ Բայց մտածողական շափազանցութիւնն ուղղակի պատճառը չէր Համբէտի անվճռականանութեան, ոչ էլ միակ անուղղակի պատճառը։ Չորս վերջին արարածների մէջ այդ արամադրութիւնը պէտք է նկատել որպէս հետեւանք նրա մտային զրութեան, ոչ որպէս պատճու։

Այժմ մի քանի խօսք էլ այն տեսութեան մտախն, որ շատ անգամ արտայայտուած է Համբէտի բնաւորութիւնը ուսումնաբրոզների կողմբց, որպէս թէ Համբէտի խենթութիւնը բոլորովին կեղծւած չէր, այլ մասամբ իրական էր։ Այս մասին Մաքէնզին (1780) մի շատ կարեւոր նկատողութիւն է անում։ “Ըէքազիրի երկու ողբերգութեան մէջ, առում է նա, օրինակներ կան թէ կեղծւած խենթութեան եւ թէ՝ իրական մտացնորութեան։ Նրկու խաղերումն էլ մի եւ նոյն զանազանութիւննը պահւած է, եւ կեղծը իրականից նոյն մէթոզով տարրերւած է։ Լիրի երեւակայութիւնը անդադար գեղերում է իր աղջիկների ապերակնառութեան եւ իր գահից հրաժարման շուրջը։ Օֆէլիան, իր մտացնորութեան առաջին եռուզիուր գուրս թափելուց եւ մի քանի անկազ ու անհեթեթ խօսքերից յետոյ հօր մահւան վերաբերող երգեր է միայն երգում։ Բայց Ըղգար, “Ալր Արքային” մէջ, որ խենթութիւն է կեղծում, իր հոգու իսկական վիճակից եւ իրական մտածութիւններից որչափ կարելի է հեռու և թում, որպէս զի կասկածի տեղիք ըստ այս։ Նրբէք ոչ մի անուանութիւն չէ անում հայրական անզթութեան կամ որդիական անքախտութեան վրայ։ Սթէ Համբէտն էլ մտքով այնպէս առողջ լիներ, ինչպէս Ըղգարը, նա երրեք մի բան չէր ասի, որ կասկածի պատճառ գառնար եւ մտածել ատր, թէ իր հօրեղբօր արած որիկայտութիւնը հասկացել է։ Բայց նրա մէջ զգացումն աւելի զօրեղ հանդիսանալով բան խռհեմութիւնը՝ միշտ գուրս է պոռթկում նրա ծպառմի միջից, այն ինչ պէտք է հաւատարիմ մեար իր նախապէս առած որոշմանը, այսինքն անդիսառութիւն ձեւացներ, միշեւ որ յարմար առիթը ներկայանար իր վրէմբը լուծելու։”

Եւ իսկապէս մննը տեսառում ենք, որ Համբէտ այնքան վաս է կեղծում իր խենթութիւնը, որ թագաւորը նրա եւ Օֆէլիայի խօ-

առկցութիւնը թագստից լսերուց յետոյ՝ առում է, թէ Համբէտի ասածները, թէեւ քիչ անկազ, խենթի խօսքեր չեն։ Պողնիուս զարմանում է Համբէտի իմաստարից պատասխանների վրայ եւ թագաւորի պայծառատեսութիւնը չունի՝ հասկանալու համար թէ զրանք կարող են կեղծւած խենթութեան խօսքեր ընել եւ ոչ իրական։ Համբէտն նըքը, ընելով այնպէս սրամիտ մարդ, ի հարեւ պիտի հասկանար որ իր խօսքերը կարող են կասկած յարուցել իր խենթութեան մասին։ Ի՞նչ էր ուրեմն նրան դրդում այդպիսի ալաքներ արձակել, եթէ ոչ այն հանգամանքը որ չունենալով բաւական նեքնիշխանութիւն՝ նա բաց էր թողնում իր սրամասութեան եւ մաղնու խորհրդածութեան առնձը։ Այդ բոլորը բաւական յարտարար չէ արգեօք որոշ յեղացընութեան նրա հոգեկան կեանքի մէջ։ Իր հօր ուրւականի անհետանալուց յետոյ մենախօսութեան ժամանակ՝ խօսքով իր զիսի մասին, անւանում է այն մի “խելացեղած զնամկ։ Չէ որ այդ բանը նշանակում է որ նա իր մէջ զգում է մի որոշ այլպիտում։

Որ Համբէտ մարի նորմալ զրութեան մէջ չէր մանաւանդ իր հօր ուրւականը տեսնելուց յետոյ՝ այդ մասին կասկած չը կայ։ Այդ բանից առաջ էլ մենք գտնում ենք նրան, իր առաջին մենախօսութեան ժամանակ, աշխարհի ունայնութիւններից զգւած, ընկճած, եւ նեքնասպանութեան զարափարներով տարւած։ Բայց հօր ուրւականի յայտնութիւններն այնպիսի սաստիկ ցնցում են գործում նրա ցաւադար եւ արդէն թուլացած հոգու մէջ, որ կարեի է հաստատապիս ասել, թէ այնուհետեւ նա այլ եւս չէ վերագտնում իր հոգու նորմալ վիճակը։ Նրա ընդհանուր վարմանքը Օֆելիայի հետ, Լակրտի հետ ունեցած անտեղի տեսարանը գերեզմանատան մէջ եւ յետոյ նրա խոստովանութիւնը՝ թէ իր արածը խենթութեան արդիւնք էր, — ինչ որ չէ կարելի Համբէտի կողմից սոսկ խարէութիւն համարել, — աշխարհային յոռի կարգերի վրայ շարունակ որոշալու հիւանդազին հակումը, նրա կրինւած զանգատները վատերազների դէմ, — այդ բոլորն ապացոյներ են ջղային այս անորմալ վիճակի։ Բայց որն է այն սահմանազրուխը, որ բաժանում է ջղային զրգութեան մի անորմալ վիճակ խախական խենթութեան ծայրագաւառից։ Շեքսպիր, զիտակից այս բնական շարունակու-

թեան, կամցել է մեղ մութի մէջ թողնել, եւ մեղ թոյլ առլ
որ ինքներս մեր հետեւութիւնները հանենք:

«Պատկերացրէք մեր առաջ», զրում է Տէն, «որ երբ Համ-
լէտն առում է այս բառերը (լաւ, ծերուկ խլուզը) նրա առանձնելին
իրար են զարկւում, իր շապիկից աւելի գունատ է եւ ծննները դազդո-
ղում են: Նրա սասարկի անձկութիւնը յանգում է մի ծիծաղի, որ
շատ նման է ջղաձգութեան: Այնուհետեւ Համլէտ միշտ այնպէս է
խօսում, որպէս թէ մի քրնիկ գարմած ջղազարութեան ենթակայ
լինէր: Սո ընդունում եմ որ նրա խնդութիւնը կեղծւած է. բայց
նրա միտքը, ինչպէս մի դուռ, որի ծննները գալարել են, ամեն
հողմից տարութերւում եւ զարկւում է պատճն՝ խոլ աճապարան-
քով եւ աններդաշնակ ժխտով: Այն ամեն տարօրինակ գաղափար-
ները, առերեւցի՛ անհեթիթութիւնները, չափազանցութիւնները,
հեղնանըի հեղեղները որ նա թափում է — այդ բոլոր նա պէտք
չունի փնտուելու: Այդ բոլորը նա գտնում է հւեց իր մէջ: Անքն
իր վրայ բռնն միգ զործ չէ զնում, այլ պարզապէս անձնատուր է
լինում նրանց: Պաշտամական ներկայացման ժամանակ նա վեր է կե-
նում, նատում է, ուզում է զլուխը զնել Օֆելիայի դոզը, զերա-
սանների հետ է խօսում, խաղն է քննադատում հանդիսատեաների
համար: Նրա ջղերը լորեած են, նրա զրգուած միտքը նման է մի
արեծուփ եւ ճարմատուն բոցի, որ բաւական կերակուր չէ գտնում
իր շուրջը զանուղ բոլոր առարկաների մէջ, որոնց բոլորին էլ լո-
փում է: Նրը թագաւորը զիմանկազերծ է լինում, Համլէտ արտօ-
վելի կերպով ծիծաղում է. վճռած է դործել սպանութիւնը:
Պարզ բան է որ այս վիճակը հիւանդութիւն է, եւ այսպիսի մարդը
չէ կարող ասպել... Համլէտի երեւակայութիւնը խրում է նրանից
այն սառնութիւնը եւ կարդի ոյժը, որով կարողանայ հանդարտ
դործել, եւ կանխատածութեամբ սուրը մինել մի կուրծքի մէջ:
Այդպիսի բան նա կարող է անել մի միայն յանկարծական թեր-
զրութեամբ. նա կարիք ունի մի բարկան ոգեւորութեան. պէտք
է ենթազրէ, որ թագաւորն արրասի ետեւն է, կամ թէ, տեսնելով
որ ինքը թռնաւորւած է, ձեռքի սուրը մի քիչ երկարացնէ թա-
գաւորի կուրծքը մինելու համար: Նա իր զրծերի տէրը չէ. առիթն

Է հրամայողը. չէ կարող մի սպանութիւն նախապատրաստել, այլ պէտք է անպատրաստից կատարէ: Մի շափազանց վառ երեւակայութիւն սպառում է նրա բոլոր էնէրգիան՝ պատկերների կուտակումով եւ այն կատաղի ուժզնութեամբ, որ լավում է նրան: Դաք կը տեսնէք նրա մէջ մի բանաստեղծի հոգին, որ ստեղծւած է ոչ թէ գործելու, այլ երազելու համար. որ մոլորում է իր իսկ ստեղծած ֆանտազիան զիտելու մէջ, որ երեւակայական աշխարհն այնքան յատակօբէն է տեսնում, որ նրա համար այլ եւս անկարելի է իրական աշխարհի մէջ մի զեր խաղալ. մի արտիստ, որին չար բախտը իշխան է ծննդրել, եւ որին մի աւելի չար զիսպւած ստիպում է մի ոճրագործութեան վրեւելը, որին մարդ, որին բնութիւնը նշանակել է մի հանճար լինելու համար, բայց որին բախտը զատապարտում է խենթութեան եւ տարարախտութեան: Համբէա Շեքսպիրն ինքն է, եւ Շեքսպիր, մի ամբողջ շարք պատկերներ նկարելուց յետոյ, որոնք բոլորն էլ իր դէմքի հետ որոշ նմանութիւն ունին, նկարել է վերջի վերջոց իր սեփական պատկերը, որ բոլորիցն աւելի ոքան չելին է:

Դժբախտաբար ստիպւած ենք հանգ առնել: Համբէտի բնաւորութեան ուսումնասիրութիւնը հատորներ է լցոնել եւ մենք մի կարճ յառաջարանի մէջ սրանից աւելի տեղ չունիք: Մենք յիշեցինք միայն այն կրիտիկները, որոնք ներկայացրուցիւ էին որոշ թէօրիհաների զանց առնելով ուրիշ լաւերը եւ կարեւորները:

Ընթերցողը գուցէ իրաւամբ կասէ թէ այնու ամենայնին. անկարելի եղան վերջնական կերպով եւ առանց նեացորդի ըւծել „Համբէտին, առաջնութեան զանազան կաղմերի նկարազրութիւնը, որոնք որոշ առնութիւն ունին իրարու հետ. բայց զրանք բոլորը միացած՝ չեն կազմում մի լիակատար պատկեր: “Թող չը շտապենք ենթազրել” ասում է մեր յաճախ յիշած տաղանջաւոր կրիտիկ Դառւ դէնը, “թէ մենք կարողացել ենք ճանաչել Համբէտի բոլոր “լեզւակիները”, կարողացել ենք գուրս քաշել նրա “զազտնիքի միրաը”: Պէտք չէ կարծել, թէ որ եւ է մի զաղափար, որ եւ է մոզական մի խօսք կարող կը լինի մի որ յուծել խաջի ներկայացրած գմւարութիւնները, կամ թէ յանկարծ կը լուսարանէ ամեն բան որ մոլիք է նրա մէջ: Այդ

մթութիւնն ինքն էլ այս գեղարւեստական գործի մի կենաւական մասն է. մի գործ, որ խօսում է ոչ թէ մի հարցի, այլ մի կեանքի մասնն: Աւ այդ կեանքի մէջ, այդ հոգու պատմութեան մէջ որ շարժում է զիշերւայ եւ ցերեկայ միջոցում գտնւող սահմանազլիսի մշտշապատ դաւաներում — շատ բան կայ, բնչպէս իրավան կեանքերի մէջ, որ զերեւ է հանում ամեն հարցուփորձ, որ խուսափում է ամեն քննութիւնից: Ոչ այն ընդհանուր կատակլեզմը, որ սրբց տարաւ մի քայլքայուած իրավարդ եւ նրա տեղ հաստատեց մի նորու անմշակ աշխարհ, ոչ էլ Դանիական միապետութեան եւ մի արականւած ընկերութեան տապալումը, եւ մի նոր միապետութեան ու աւելի առայդ քաղաքակրթութեան հաստատումն է, որ զիսաւորապէս հետաքրքրական է եղել Եկեղեցին համար: Համբէտի ողբերդութեան կենաւական էւթիւնը մի գաղափար չէ, ոչ էլ մի քաղաքական փիլիսոփայութիւն: Այս պանչելի ստեղծագործութիւնը աշխարհ է եկել այն խոր համակրութիւնից, որ Եկեղեցիր տածել է զէպի մի անհատական հոգի, գէպի մի անձնական կեանք:

Այսպէս թէ այնպէս, Եկեղեցի իր համար համակրելի մի անձնաւորութիւն իրրեւ օրինակ առած լինի, թէ իր հայեացքը գէպի սեփական հոգու խորքն ուղղած, իրական ասպրում լինի Համբէտի հոգեկան վիճակը, թէ երեւակայութեան յլացում՝ ամեն պարագայում նա ստեղծել է այնպէս, բնչպէս բնութիւնը միայն կարող է ստեղծել, — բարդ, բայց հարազատ:

Համբէտի մասն գցացած մտադատիրքն այնքան մեծ է, որ մարդիկ խօսում են նրա վրայ, որպէս մի պատմական անձնաւորութեան վրայ: Բրանդէս շատ որամտօրէն նկատում է թէ Դանիայի թագաւորներից եւ իշխաններից ամենէն հանրածանօթը մի իշխան է, որ երրէք զցութիւն չէ ունեցել: Բայց մեզ համար նա գյութիւն ունի, եւ աւելի իրական գյութիւն, քան թէ աշխարհի թատերաբեմի վրայ աւելի մեծ զեր խազացող պատմական գէմքեր: Աւ այն նաևագայթումը, որ շընապատում է այդ անունը, ոչ միայն զարերի ընթացքում չէ նսեմացել, այլ ամեն սերունդի եւ ամեն զարի հետ նոր փայլ է ստացել:

ԴՐԱՄԱԿԱՆ ԸՆԴԵՐ

ԿԱՌԻԴԻՈՍ, Դամենմարքի թագաւոր:

ՀԱՄԼԵՏ, Որդի ճախիկ թագաւորի:

ՓՈՐՑԻՆԲՐԱՍ, Իշխան Նորվեգիայի:

ՀՈՐԱՅԻՕ, Թարեկամ Համբէտի:

ՊՈԼՄԻՆԻՈՒ, Մնծ Սեմեկապետ:

ԼԱՅՐԾ, Նրա որդիկ:

ՎՈԼՏԻՄԱՆԴ

ԿՈՌՆԵԼԻՈՒ

ՌՈԶԵՆԿՐԱՆՑ

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ

ՕԶՐԻԿ

ՄԻ ԱՉՆԻԱԿԱՆ

ՄԻ ՔԱՅԱՆԱՑ:

ՄԱՐՑԵԼՈՍ

ԲԵՐՆԱՐԴՈ

ՓՐԱՆՑԻՍԿՈ, Մի Ջինոր:

ՌԵՑՆԱԼԴՈ, Ժառայ Պողոսիուի:

ՄԻ ՀԱՐԻԻՐԱՎԵՑ:

ԱԵՎԼԻԱՑԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ:

ԴԵՐԱՍԱՆՆԵՐ:

ԵՐԿՈՒ ԽԵՂԿԱՑԱԿ, Որպէս Գերեզմանափոր:

ԳԵՐՑՐՈՒԻ, Թագուեկ Դամենմարքի, Մայր Համբէտի:

ՕՓԼԻՍ, Դուստր Պողոսիուի:

Ագնակամներ, Պալատական Տիկիններ, Սպաններ, Ջինորներ,

Նաևաստիններ, Սուրբանդակներ և Սպասաւորներ:

Համբէտի Հօր Ուրականը:

Տեսարանը՝ Էլսինգրում:

ՅԱՍԼԵՏ

ԽԵԼՈԱՆ ԳԱՆԵՄԱՐՔԱԾԻ

ԱՐԱՐԻԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍՈՐԵՆ ԱՌԱՋԻՆ

Հյուինոր, մի ճարթավայր դդեակի տռած:

Փրամցիսկօմ պահակ է կամքմած. գայիս և թեռնարդօմ:

Բեռն. Ո՞վ է:

Փրան. Ու, դու ինձ ասա. կաց, յայտնիր ով ես:

Բեռն. Շատ ասպիր արքան:

Փրան. Բեռնարդօ:

Բեռն. Ինքը:

5

Փրան. Ծշդապահութեամբ ձեր ժամին եկաք:

Բեռն. Տամներկուն զտրիեց. զընա անկողին, զընա, Փրանցիսկօ:

Փրան. Շնորհակալ եմ որ արձակում էք.

Սոսկալի ցուրտ է, սիրոս էլ տիսուր է:

Բեռն. Պահպանութիւնը լաւ հանդարտ անցաւ:

Փրան. Առողի էլ չ շարժւեց: 10

Բեռն. Լաւ, բարի զիշեր.

Նթէ հանդիպես Հորացիոյին կամ Մարցելընոյին,

իմ այս զիշերւայ պահընկերներին, ասա թող շուտ դան:

Փրան. Նըրանք են կարծեմ: — Կաց, է՛կէյ, ով է:

Դավակ էն Հորացի: Է Մարցելը:

Հոր. Հայրենակիցներ:

Մարց. Վւ հարկատուներ Դանիոյ արքայի:

15

Փրան. Ձեզ բարի զիշեր:

Մարց. Կէ՛չ, զընաս բարով, դու պարկեշտ զինւոր: Ձեզ ով արձակեց: Փրան. Բեռնարդըն ինքը անցաւ իմ տեղը: Անզ բարի զիշեր:

Մարց. Բեռնարդո:

Բեռն. Ասա, Հորացիօն է գա:

Հոր. Սըրա մի մասը:

Բեռն. Բարով ես եկել, Հորացիօն, բարով, սիրելի Մարցելոս: 20

Մարց. Այն բանն այս զիշեր երեւաց նորէն:

Բեռն. Ունին չեմ տեսել:

Մարց. Հորացիօն ասում է, թէ գա մեր մաքի պատիրքն է միայն, Եւ չէ կամենում հաւատ ընծայել մեր ասածներին,

Այն զարհուրելի տեսիլքի մասին,

Որ երկու անդամ մեր աշքով տեսանք.

25

Հէնց այդ պատճառով ինդրեցի նըրան, որ ինքն էլ մեզ հետ

Հսկէ այս զիշեր բռովէ առ բռովէ,

Որ եթէ նորէն այն տեսիլքը գայ,

ինքն էլ հաստակէ մեր աեսածները, եւ խօսէ հետը:

Հոր. Բա՛չ, երբեք չի գայ:

Բեռն. Թող մի քիշ նստենք, 30

Եւ մէկ անդամ էլ յարձակում գործենք ականջներիդ վրայ,

Որոնք այնպէս խիստ ամրապնդւած են մեր պատմածի դէմ,

Որ երկու զիշեր ինքները տեսանք:

Հոր. Լու, եկեք նստենք.

Եւ թող Բեռնարդըն խօսէ այդ մասին:

Բեռն. Այս վերջին զիշեր, 35

Երբ այն բեւեսից գէսի արեւմուտք զանւող ասաղը

Իր շրջանն արել, եւ լցո էր տաղիս այն երինամասին,

Ուր փայլում է այժմ, Մարցելոսն ու ես,

Ծիշը երբ որ զանգը զարկում էր մէկը . . .

Գալք է Ուշականը:

Մարց. Սևս, լսիր, Նայիր, զալքս է կրկին:

40

Բեռն. Նոյն կերպարանքով ինչ մեռած արքան:

Մարց. Դու զիտուն մարդ ես, խօսիր նըրա հետ, Հորացիօ:
Բեռն. Զէ՞ որ նըման է նա թագաւորին. նայիր, Հորացիօ:
Հոր. Խակ եւ խակ նըման. ահ ու զարդանցով լցնում է դա ինձ:
Բեռն. Կարծես ուղում է որ իր հետ խօսեն:

Մարց. Հարց տուր, Հորացիօ: 45
Հոր. Ի՞նչ ես դու արդեօք, որ յափշտակում ես զիշերւայ այս ժամը
Եւ այս զեղաշուք ռազմական ձեւը,
Որով շրջում էր Դանեմարկայի հանգուցեալ տէրը:
Յանուն երինքի, պարտադրում եմ քեզ, խօսիր:

Մարց. Վշտացաւ: 50
Բեռն. Նայիր, Ճանրագայլ հեռանում է նա:
Հոր. Կաց, խօսիր, խօսիր, պարտադրում եմ քեզ, կանգ առ եւ խօսիր:

Ա-բ-ա-ն-է դ-ո-ւ-ս է գ-ն-ո-ւ-մ:

Մարց. Դընաց. չէ ուղում մեզ պատասխանել:
Բեռն. Տեսար, Հորացիօ. Ռոյնդ թըսել է եւ զողողում ես.
Զէ՞ որ սա միայն մոքի պատիրք չէ:
Լաւ, ի՞նչ ես կարծում այս բանի մասին: 55

Հոր. Ասուածըս վիսյ, երբէք ես դըրան չի հաւատայ
Առանց աշքերիս անխօր, իրատես վիսյութեանը:
Մարց. Զէ՞ որ նըման է նա թագաւորին:

Հոր. Խնազէս ինքը քեզ,
Եւ միշտ այսպէս էր այն խակ դըրահը, որ նա հազել էր, 60
Երբ այն փառամել Նորվեգիացու գէմ կռւի դուրս եկաւ.
Եւ միշտ այս կերպով ունքը պասանց՝ երբ թունդ վէճի մէջ
Այն ասհնակ հեծած լեհացիներին տապալեց գետին
Սառուցի վրայ: Զարմանալի է:

Մարց. Երկու անգամ էլ սըրանից առաջ, այս մեռեալ ժամին՝ 65
Ռազմական քայլով եկել անցել է պահակի մօտից:

Հոր. Խնչ յատուկ մոքով գործելու համար, այդ գեռ չը զիտեմ.
Բայց իմ կարծիքի ընդհանուր հակումն ու սըրացքն այն է,
Որ զա գումարմ է մի մեծ ասսանում մեր պետութեան մէջ:
Մարց. Լաւ, եկեք նստենք, եւ թող ինձ պատմէ ով որ աեղեակ է, 70

Թէ ինչ միոք ունի այս խիստ ուշադիր հսկողութիւնը,
Որ ամէն զիշեր տանջում է երկրի հպատակներին.

Անցն համար են ամեն օր արքան թնդանօթ ձուլում,
Եւ ռազմամթերք գրնում օտարից.

Անցն են այսպէս բռնի բանեցնում նաւագործներին, 75

Որոնց չարաշար աշխատութիւնը

Կիրակին լի օրից չէ գանազանում.

Ի՞նչ է պատրաստում, որ այս քրտնակթոր աճապարանքը
Դարձնում է զիշերն օրւայ զուգակից աշխատաւորը.

Ո՞վ է կարող ինձ տեղեկութիւն առ:

Հոր. Այդ ես կարող եմ. գոնէ այսպիսի մի փախուք կայ:

Մեր վերջին արքան, որի պատկերը այժըս երեւաց,

Անցպէս լաւ զիտէք, նախկին Փորտինրրաս Սորվեզիացուց,

Որն իր նախանձու գոռոզութիւնից խթահարւած էր,

Ասպարէղ կանչեց: Այդ մենամարտում մեր արի համբէան —

Անցպէս որ նըրքան ծանօթ աշխարհի այս բոլոր մասում 86
Շանաչում էին — յաղթեց ու սպանեց այն Փորտինրրասին.

Եւ նա զօրութեամբ հնքւած դաշնազրի, որ թէ օրէնքով
Թէ՛ ասպետական կարգ ու կանոնով վաւերացւած էր,

Որ տիրած հողերն ու կեանքն էլ չետք տուժեց յաղթողին:

Մեր թագաւորն էլ նոյն շափով հողեր զըրաւ էր զըրել, 91

Որ Փորտինրրասին պիտի հասնէին՝ եթէ նա յաղթէր.

Անցպէս իր հողերն, նոյն պայմանագրով, որոշ յօգւածով

Համբէան ընկան Եւ այժըս, պարոն, փոքր Փորտինրրասը

Առփորձ եռանգով վառւած ու լուած՝ 95

Նորմեզիայի ահմանների վրայ՝ այսանդ այնտեղից

Մի խումբ քաջասիրտ բախտականդիրներ իր շուրջն է խմբել,

Որոնք փոխարէն հաց ու ապրուստի,

Պատրաստ են փորձել մի խիզախ ձեռնարկ, որից բան գուլս դայ.

Եւ զա չէ այլ ինչ — որպէս յայտնի է մեր պետութեանը —

Եթէ ոչ, զենքով եւ բռնի ոյժով յետ խել մեղնից 101

Այն բոլոր հողերն որ հայրը տուժեց:

Այս է, կարծում եմ, մեր պատրաստութեան բուն նպատակը,

Մեր հսկողութեան դրդապատճառը,

Եւ երկրի բոլոր այս հասլշտավի եւ իրարանցման

105

Բուն շարժառիթը:

Թեուն. Ես էլ կարծում եմ, որ այդ է միայն, եւ ոչ ուրիշ բան.
Եւ հենց զըստ հետ յարմար է զալիս,
Որ շարագուշակ այս ողին զինւած ձեմում անցնում է
Պահակի մօտից՝ ձիշդ յար եւ նըման այն թագաւորին, 110
Որ այս կոհւների պատճառն էր եւ է:

Հոր. Մի հիւլէ է դա մեր մաքրի աշքը աղօտացներու.

Այն օրերի մէջ, երբ Հռովմ հասել էր փառքի զագաթին,
Հզոր Ցուլիսի մահից քիչ առաջ՝

Երրիմներն իրենց վարձակալներից դատարկւում էին, 115
Եւ մեռելները, պատահած, Հռովմի փաղցների մէջ
Թողթովում էին եւ աղաղակում.

Աստղեր զուրս եկան՝ հրեղէն գէսերով. արեան ցող իջաւ,
Եւ խանգարում կար արեգակի մէջ: Այն տամուկ աստղը,
Որ ներգործում է Ներպատունի աշեղ պետութեան վըրայ,
Այնպէս հիւանդ էր իր խաւարումից, 121

Որ կարծես մօտ էր աշխարհանցումը:

Այժմ էլ նշնպիսի արհաւելքների նախագուշակներ,
Առաջընթացներ որ միշտ կանխում են բախտի քոյրերին,
Եւ նախերգանք են գալիք աղէտի, 125
Երկինքն ու երկիրն արդէն ցցց տըւին մեր երկրամասին
Եւ ժողովրդին: Բայց յուշ. մտիկ տուր. զալիս է նորէն:

Ո-ր-ո-ի-ա-ն-ը գ-ո-վ-ս է ի-շ-ի-ն-:

Շամբան կը կարեմ՝ թէկուզ շանթէ ինձ.

— Կանգ առ, ով պատիրք, եթէ մի հնդին կամ թէ ձայն ունիս,
Խօսիր ինձ. 130

Եթէ անելու մի բարի բան կայ,

Որ կարողանայ սփոփանք տալ քեզ, եւ ինձ թօղութիւն,

Խօսիր ինձ.

Եթէ զիտակ ես երկրիդ նսեցին,

Որից, թերեւըս, կանխազիտութեամբ կարենայ խոյս տալ,
Օ՛հ, խօսիր: 136
Եթէ կեանքիդ մէջ բանութեամբ կորզած գանձեր ես խորել
Դեանի պրզանզում, որոնց պատճառով, թնդէս առում են,
Մեռնելուց յետոյ զուք ողիները ելուում շրջում եք,
Ասա, կայ, խօսիր: — Կորիր առաջը, Մարցելոս: 140

Ա+ԼՇԸ Խ-ՆԱՎ-Հ Է:

Մարց. Զարկեմ զեզարզովս:

Հոր. Եթէ չը կանգնի, զարկիր:

Բեռն.

Այսուղ է:

Հոր.

Այսուղ է:

Ո-Հ-Ն-Խ-Ն-Հ Ա-Վ-Ն-Ա-Մ-Հ Է:

Մարց. Դընաց.

Մենք վաս ենք վարում՝ սյազես վեհափառ մի էակի հետ
Բանազառութեան մեր այս ցոյցերով:
Նա օդի նըման անխոցելի է,

145

Եւ մեր ընդունայն զարկերը՝ միայն շարամիտ հեղնանք:

Բեռն. Խօսելու վայ էր, երբ որ արլըրը կանչել սկսաւ:

Հոր. Եւ նա չքացաւ թնդէս յանցագործն ահաւոր կուից:

Լսել եմ, արլըրն, այդ առաւօտայ շեփորահարը

Իր բարձրահնչելն եւ զիլ հագազով

150

Զարթեցընում է օրւայ աստղնուն.

Եւ նըրա ձայնից՝ թափառաշըջիկ բանգախոյս ողին,

Ժովի մէջ լինի թէ կըրսակի մէջ, երկրում թէ օդում,

Անապառում է զէսի իր բանզը.

Նըրա ճշգութեան այս ներկայ գէպին էլ ապացոյց եղաւ:

Մարց. Այս, չքացաւ արլըրի կանչեց.

156

Ոմանք առում են թէ միշտ, երբ մօտ է այն եղանակը,

Երբ որ մեր Փրկի ծընունդն է տօնուում,

Այզի թռչունը երգում է անվերջ ամրողջ զիշերը.

Ասում են այլ եւս ոչ մի ուրախան չէ կարող դուրս գալ,

- Եւ զիշերները առողջարար են,
Մողբակները էլ չեն հարևածում,
Էլքը չէ թովում, ու էլ վհուկը կարող է զիւթել՝
Այսպէս որրասուն եւ շնորհալից ժամանակ է այն։ 164
Հոր. Սա էլ բնել եմ, եւ հաւատում եմ մասամբ այդ բանին.
Բայց մտիկ տրեւք, Արեւածազը, վարդ պատմենանով,
Շեմում է այնտեղ՝ այն արեւելեան արդի ցողի վրայ։
Ակերջ տանք ուրեմն մեր պահպանութեան. եւ, թէ ինձ ընէք՝
Դրնանք եւ յայնենք մեր այս տեսածը իշխան Համբէտին.
Կեանքավլս երգում, այս ուրեականը որ համը է մեզ հետ,
Անշուշ կուղենայ նըրա հետ խօսել։ 171
Համաձայն էք դուք որ լուր տանք նըրան՝
Դրգւած մեր սիրուց, որպէս եւ պարագից։
Մարց. Լաւ, այդպէս անենք, եւ ես լաւ գիտեմ թէ այս առաջուց
Որտեղ կարող ենք շատ յարմարութեամբ հանդիսել նըրան։ 175
Գնառմ էն։

ՏԵՍՔԵՆ ԵՐԿՐՈՐԴ

Մի մաս Սրամ դդեակում. Փազեր.

Քայլս ճե Թօնգաւորը, Թօնգուեին, Համեկո, Պոլոճիուս, Լակրո,
Վոլոտիմանդ, կումելիուս, Ազնակիաններ են Սպասարքներ։

Թապզ. Թէեւ մեր Համբէտ սիրելի եղբօր մահւան լիշտակը
Թարմ է տակաւին, եւ մեզ պատշաճ էր վշտով համակերլ,
Եւ պէտք էր համայն մեր պետութիւնը
Մէկ ճակատ զառնար ցաւից կծկւած՝
Բայց գատողութիւնն այնպէս արտի դէմ պայքար է մըել,
Որ մենք աւելի խոհական վշտով յիշում ենք նըրան, 6
Առանց ինքներս մեզ մռանալու։
Այս պատմառով էլ մեր նախկին քուջն, այժմեան թագուհուն,

Եւ այս ռազմակուռ թագաւորութեան դահընկերուհուն,
Թող այսպէս ասենք, մնշած հըմանկըռով, 10
Մէկ արտասաւաթոր, մէկ ուրախ աչքով,
Թաղման հանդէսում ուրախ նաղով, հարսնիքում լաղով,
Յաւ ու ցնծութիւն զցզ նժամներում հաւասար կշուած՝
Կընութեան առինք. եւ այս բանի մէջ անտես չենք արել
Աւելի խոհեմ ձեր խորհուրդները, 15
Որ ազատօրէն մեզ հաղորդեցիք գործի ընթացքում:
Բոլորի համար չնորհակալութիւն։
Այժմ ուրիշ հարց կայ, որ մեզ յայտնի է. փոքր Փորտինրդասը,
Մէր արժանիքը չափազանց նըւաղ զընահատելով, 20
Կամ թէ կարծելով, որ մեր սիրելի եղբօր մեռնելով
Մէր սկառութիւնը պառակտարւած է եւ կազմալուծւած,
Դրան կցելով առաւելութեան իր սին երազը՝
Համարձակել է մեզ մի պատգամով անհանդիստ անել
Ծետ պահանջելով այն կալածները, 25
Որ նրա հայրը օրէնքի բողոք երաշխիքներով,
Տուժել է յօգուա մեր կորիշ եղբօր։ Այս նրան մասին.
Այժմ գանք մենք մեզ, եւ մեր զումարած ներկայ ժողովին.
Ահա մեր գործը. այսուղ զըրել ենք ծերուկ Նորվէզին,
Որ հօրեզըսցըն է այս Փորտինրդասի,
Եւ անկարացած, անկողնում ընկած՝ 30
Իր եղբօր որդու մատադրութիւնից լուր անգամ չունի,
Որ կասեցընէ նրան ձեռնարկի շարունակումը.
Քանդի իր բողոք զօրամողովը, թըրով ու կազմով,
Համախմբւած է նրան սեփական հպատակներից. 34
Եւ ահա մենք մեզ, բարի Կոռնելիուս, եւ մեզ, Վոլոտիմանդ,
Պաշտօն ենք տալիս տանել ողջոյններս ծեր Նորվէզիացուն.
Բայց չենք տալիս մեզ ուրիշ անձնական լիազօրութիւն
Բանակցութիւններ վարելու իր հետ, աւելի քան այն,
Խել որ մանրամասն այս յօգւածները մեզ արտնում են։
Բարի ճանապարհ, թաղ ձեր շտապը ասպացոյց լինի 40
Ձեր անձնելիրութեան։

ԿՈՌ. ԵՒ ՎՈՂ. Պատրաստ ենք թէ այս, թէ առնեն բանում ապացուցել այդ: Թագ. Տարակցոյ շունինք. բարի ճանապարհ:

Վաշովանդ է - Կառավարութեան է և ժնուած:

Եւ այժմը, Լաէրտ, զու բնչ խօսք ունիս. 44

Ասացից ինձնից մի խնդրանք ունիս. Բնչ է այդ, Լաէրտ.

Չես կարող խօսել բանաւոր կերպով Դանիոյ արքային,

Եւ ի զաւը անցնի: Անչ բան կարող ես հայցել ինձանից,

Որ խիսյն ըստամ որպէս իմ ընծան, ոչ քո խնդրանքը:

Գրուխը սրախն այնպէս մօտիկ չէ:

Կամ ձեռքը թերնին այնպէս ծառայող, 50

Խնդրէս Դանիական գահը քո հորըդ:

Ասա ինձ, Լաէրտ, Բնչ է փափազըդ:

ԼԱ. Ողբանած տէր իմ,

Ձեր թշրուութիւնն ու բարի շնորհը Պրանսիա գառնալը,

Ուրիշ թէպէսեւ մեծ յօժարութեամբ ես այստեղ եկայ

Ձեր թագալլրութեան առթիւ: յարդանքըս մատուցանելը,

Բայց այժմ այդ պարտքըս կատարելուց յետ՝ 56

Խոստովանուում եմ որ բոլը խոչերս ու տենչանքներըս

Զգառում են կրկին զէպի Պրանսիա, եւ խոնարհուում են

Ձեր ներողամիտ թշրուութիւնը հայցելը համար:

Թագ. Արդեօք հօրիզոդ հրաման առել ես. նաև Բնչ է առում: 60

ՊՈՂ. Տէր իմ, տքնածան թափանձանքներով նա կորզեց ինձնից

Դանգաղ հրամանըս. եւ վերջ ի վերջոյ ես ստիպւեցայ

Դրսումնել զժկամ հաւանութիւնը իր կամքի վըրայ.

Խնդրում եմ, տէր իմ, թշր առեկ զընայ: 64

Թագ. Հնարիի պատեհ ժամ, Լաէրտ. տէր եղիր քո ժամանակիդ:

Եւ բարի ձիրքերդ թող գործածեն այն ըստ քո հածոցին:

Իսկ այժմ, Համբէտ, իմ եղբօր որդի, եւ նոյն իսկ որդի... 70

Համ. (Առանձին) Մի քիւ աւելի քան եղբօր որդի, պակաս քան որդի:

Թագ. Անչ ասել է այդ որ գեռ թուխպելը կախւած են վըրադ:

Համ. Այդպէս չէ, տէր իմ. Հափից աւելի արեւի տակ եմ:

Թագ. Սիրելի Համբէտ, զէն ձզիր քեզնից այդ մըսայլ զընը,

Նւ թող քո աշքը բարեկամի պէս նայէ Դանիացուն։
Հերիք է այդպէս կախւած կոպերով
Աղնիւ ծընտղիգ որոնես հողում։

Դու զիտես որ դա առօրեայ բան է։

75

Ով որ ապրում է պէտք է եւ մեռնի,
Անցնելով կեանքից ի յաւերժութիւն։

Համ. Այդպէս է, տիկին, սովորական բան է։

Թագն. Նթէ այդպէս է, ինչո՞ւ է դա քեզ անսովոր թըւում։

Համ. Թըւում, ոչ, տիկին. այլ է. ըզդիտեմ թըւումն, ինչ բան է։
Ու մելանազոյն վերաբիուս միայն, սիրելի մայր իմ,

81

Ու հանգիստոր սեւ հանգերձները,

Ու բուռն շունչի հողմային հերքը,

Նւ ոչ աշքերի յորդահոս զետը,

Ու էլ երեսի վշտահար տեսքը,

85

Կակիծի բողոք ձեւ ու կերպերի, նշանների հետ

Կարող են երբեք հարազատօրէն ներբնըս յայտնել.

Դըրանք բոլըն էլ, ճիշդ է, թըւում են.

Դըրանք բոլըն էլ բաներ են, որ մարդ կարող է խաղալ.

Բայց այստեղ ներարա այնպիսի բան կայ, որ անց է ցոյցից։

Ասկ սըրանք վշտի պահունակնեն են լոկ եւ արդուզարդ։

Թագ. Շատ սիրալիր է, եւ սրտիդ համար պատւարեր, Համեմատ,

Որ վճարում ես սուզի պարտերդդ հանգուցեալ հօրըդ.

Բայց պէտք է զիտնաս, որ հայրըդ նցնակս կորցըրեց մի հայր,

Այդ կորած հայրն էլ կորցըրեց իրենք.

95

Նւ վերապրողը իր որդիսական պարտականութեամբ՝

Պէտք է սուդ պահէ որոշ ժամանակ.

Բայց յարատեւել յամառ վշտի մեջ՝ նշանակում է

Սաստիկ ամբարիշտ կամակարժութիւն. ոչ առնացի սուդ.

Դա ցոյց է տափս երկնքի հանդէպ ապատամի մի կամք, 100

Մի սիրտ անպաշտպան, մի միտք անհամբեր,

Նւ պարզ ու անուս հասկացողաթիւն. քանի որ մի բան,

Որ, զիտնակ, նցնւափ առվորական է եւ պէտք է լինի

Որչափ ամենէն հասարակ բանը մեր խելքի առաջ՝

ինչու խռովիան գժկամակութեամբ մեր սրտին առևենք։ 105
Զէ, յանցանք է դա երիցի հանդէս,

Յանցանք է նոյնիսկ մեռեալների գէմ, եւ բընութեան գէմ,
Եւ զառողութեան առաջ՝ անհւեթեթ,

Որի առօրեայ րընարանն է հայրերի մահը,
Եւ որն առաջին դիակից՝ մինչեւ այսօր մեռնողը 110

Աղաղակում է «Այսպէս է կարդը»։
Դէն ձզիր ուրեմն այդ անզօր վիշտը, աղայում ենք քեզ,

Եւ ընդունիր մեզ որպէս քո հայրը։
Քանի որ պէտք է աշխարհն իմանայ

Որ ամենէն մօտ դու ես մեր գահին, 115

Եւ ես ոչ նըւազ սէր ու գործանք ունիմ գէպի քեզ,
Որքան ամենէն սիրալիր հայրը գէպի իր որդին։

Դարով քո յայտնած դիտաւորութեան,
Որ կամենում ես Վիտանէրէրդ զառնալ եւ գեռ ուսանել,

Դա մեր փափաքին սաստիկ ներհակ է։ 120

Աղայում ենք քեզ, յօժարիր կինալ եւ ապրել այսաեզ
Իրբեւ մեր աշքի խմնք եւ ափափանք,
Իրբեւ զիսաւոր մեր սրացատական,

Մեր եղթօրտրդի, եւ իրբեւ որդի։ 124

Թագ։ Մօրդդ խնդրանքը թօղ ի զուր չանցնի, սիրելի Համբէտ։

Ե՞ս էլ խնդրում եմ, կաց այսուղ մեզ մօտ մի գնար Վիտանէրէրդ։
Համ։ Տիկին, ջանք կանեմ ձեզ հնաղանդելու։

Թագ։ Ահա սիրալից եւ լու պատասխան։

Եզիր Դանիայում ինչպէս ինքներըս։ — Եկ զընանք, տիկին,
Համբէտի այս հեզ եւ անրունազատ համափերսումը 130

Խայտանք է սրտիս. ի պատիս որմն՝

Դանիայի արքան շըպէտք է ըմոլէ ցնծալից բաժակ
Առանց որ իսկոյն մեծ թնդանօթը յայտնէ ամսկերին,

Եւ թագաւորի խմած կինացին երկինքը ձայն տոյ՝
Նրկային ամսպուպն անդրագարձելով։ Դնանք միամին։ 135

Փողը. բուրդը դնաւմ էն բառը Համբէտից։

Համբ. Նրանի ոյս պինդ, խիստ պինդ մարմինը
Հայուեր ու լուծւեր, եւ փոխուեր ցօղի.

Կամ Անվախմանը ուղղած ցընէր իր պատուիրանը

Անձնապահի գէմ: Ասուած իմ, Ասուած, 139

Խնչպէս տաղակալի, անհամ ու տափակ, փռչ ենթըում ինձ
Աշխարհի բորոր վայելըանքները: Թռահ զըրանց վըրայ:

Մի պարտէղ է դա, որ քաղհան չեղած սերժի է հասել,
Ուր բընուաս կոսկիտ եւ բիրտ բաները իշխում են միայն:

Ի՞նչ, այստեղ համի, զեռ երկու ամիս իր մահից շանցած,
Ու, այզքան շըկոյ, երկու էլ շըկոյ: Ի՞նչ մեծ թագաւոր,

Որ պրա մօտ այն էր, ինչ Հիագերինը մի սատիրի մօտ: 146

Այնպէս մօրըս վըրայ գուրգուրում էր նա, որ չէր թոյլ տալիս
Նրինքի հոգմերն մի քիչ խիստ դաշնն նրան այտերին:

Նրկինք ու երկիր, պէտք է միտ թերեմ.

Այնպէս փարած էր նա իր ամուսնուն, 150

Որ ախորժակը աճում էր կարծես հենց իր պընունդով.

Եւ այնու հանգերձ մէկ ամիս շանցած: Ախ, զըմուածեմ...
Թուլութիւն, անունըդ կին է:

Մի փոքրիկ ամիս. նախ քան մաշւէին այն կօշիկները,

Որոնցով քայլում էր նա խեղջ հօրս մարմին ետեւից, 155

Խնչպէս Նիորէն, համակ արտասուր. նա ինքը... ինքը...
Տէր Ասուած, անրան անասունն անզամ

Աւելի երկար սուգ պիտի պահէր.

Եւ ամուսնանայ իմ հօրեղբօր հետ, իմ հօր եղօր հետ.

Բայց նա հօրս այնքան նըման է, որքան ես Հէրկուլէսին. 160

Մէկ ամիս չեղած, նախ քան բորբոքւած նրան աշքերից

Իր ամենակեղծ արտասուբների աղը որրըւէր՝

Արդէն պահւած: Օհ, չար արտորանք,

Սուրալ այսպիսի յաջողակութեամբ գէսի պիղծ մահիճ.

Դա ըստ չէ, ու էլ ըստ պիտի լինի: 165

Բայց պայմիր, սիրտ իմ, քանի որ պէտք է կապ զընեմ լեզւիս:

Գ-ը են Հուանին, Մուշէլու և Շէնանչէր:

- Հոր. Իմ յարգանքներըս Ձերըդ Մեծութեան։
 Համ. Ռւրախ եմ որ ձեզ առաջ եմ տեսնում։
 Հորացիօն է աս, թէ ոչ ես ինքըս ինձ մնանում եմ։
- Հոր. Ինքն է, եւ յաւէտ ձեր խոնարհ ծառան։ 170
 Համ. Պարոն, սիրելի իմ բարեկամա։
 Թող այս անունը փոխանակենք միշտ։ Ասա, Հորացիօ։
 Ինչու ես եկել գու վիտունքիցից — Մարցելլոս։
- Մարց. Տէր իմ։
 Համ. Պարոն, ռւրախ եմ առաջ անդամ անդամ անդամ, անձիք հայութ լսել։
 (Բեռնաբարձրականութիւնը) Բարի երեկոյ։ — Ծիչը, վիտունքիցից ինչու ես եկել։
- Հոր. Դատարկարգթիկ ըրնաւորութիւն, սիրելի տէրըս։ 176
 Համ. Թշնամուցդ անդամ չեմ կամնայ այդ խօսքը լսել։
 Դու էլ ականջըս մի բռնադատիր,
 Որ խօսքիդ ընէ անձիք հայութ։
 Լաւ զիտեմ որ գու այդպիսի մարդ չես։ 180
 Բայց ինչ գործ ունիս լըանորի մէջ։
 Մենքնելուցդ առաջ այէտք է քեզ մի լսու խմել սովորցնեմ։
- Հոր. Տէր իմ, ես եկայ ձեր հօր թազումը տեսնելու համար։
 Համ. Խնդրեմ, մի ծաղըիր, ուսանող ընկեր։
 Կարծեմ թէ եկար մօրըս հարանիքը տեսնելու համար։ 185
 Հոր. Խսկապէս, տէր իմ։ շատ շուտ յաջորդեց մէկը միւախն։
 Համ. Խընայողութիւն, խընայողութիւն, Հորացիօ։
 Մեռելումաշի կերակուրները պաշ մասուցեցան
 Հարսնաեղանի հրաւիրեալներին։ Լաւ էր, Հորացիօ,
 Որ իմ ամէնէն անզութ թշնամու երիքում զանէի, 190
 Քան թէ այդ օրը տեսած լինէի։
 Հայրըս . . . կարծես թէ տեսնում եմ հօրու։
- Հոր. Ա՛չ, ռւրախը, տէր իմ։
 Համ. Հոգուս աշքի մէջ։
 Հոր. Տէր իմ, մէկ անդամ տեսնել եմ նըրան։ ինչ Թագաւոր էր։
 Համ. Մարդ էր, Հորացիօ, իր ամեն բանով։ 195
 Մէկ էլ չեմ տեսնի նըրա նըմանը։
 Հոր. Տէր իմ, կարծում եմ որ երեկ զիշեր ես տեսայ նըրան։

Համ' . Տեսակը , ունի:

Հոր . Ձեր հօրը , տէր իմ , թաղաւորին :

Համ' .

Հոր . Զափառոքեցէք խնդրեմ մի լուսէ ձեր զարմացումը , 200
Նև ուշազրութեամբ ականջ զըրէք բնձ ,
Մինչեւ որ պատմեմ , այս պարոնների վկայութիւնով ,
Պատահած հրաշքը :

Համ' . Ի սէր Աստուծոյ , պատմի՞ր շուտ , պատմի՞ր :

Հոր . Սրիու զիշեր է վըրայէ վըրայ , այս պարոնները ,
Բեռնարդոն թնդը եւ Մարգելոսը , հսկած ժամանակ , 205
Գիշերւայ կէսին եւ մեռելային ամայութեան մէջ
Մի բան են տեսնում : Մի ձեւ , ձեր հօր պէս ,
Դիմից մինչեւ ուրք սպառազինած , երեւում է նրանց ,
Եւ հանդիսաւոր ու ծանրը քայլով գալիս անցնում է
Նըրանց առջեւեց . եւ երեք անգամ քայլում է սյսպէս 210
Նըրանց առջահար եւ ահարեկւած աչքերի առաջ
Իր գաւաղանի հեռաւորութեամբ :

Իսկ սըրանք վախից գոնդողի փոխաւած՝

Պատղանաւած կանգնում , եւ ոյնչ ասել չեն կարողանում :
Այս բանն ահարից զադունապահութեամբ հաղորդեցին բնձ .
Նըրարդ զիշերը ես էլ նըրանց հետ պահակ կանգնեցի , 216
Եւ միշտ նոյն ձեւով որ պատմել էին , մի եւ նոյն ժամին ,
Նոյն կերպարանքով , ամեն մի բառը կէտ առ կէտ ծշղրիս ,
Տեսիլքը եկաւ . ձեր հօրը , տէր իմ , ճանաշում էի ,
Նրիու ձեռքս իրար այնպէս նըման չեն : 220

Համ' . Բայց զա մրտեղ էր :

Հոր . Հարթավայոցի վըսայ , ուր հսկում էինք :

Համ' . Զը խօսեցիք իր հետ :

Հոր . Խօսեցի , բայց նա ու պատասխանեց :
Միայն , բնձ թըւաց թէ նա մի անգամ զըտիոը վեր տարաւ .
Եւ շարժում արաւ որպէս թէ մի բան ասել ուղենար .
Բայց այդ բաղեն արլըրը կանչեց , 225
Եւ նա այդ ձայնից հեռացաւ փութով ,

Եւ անցայտացաւ մեր տեսութիւնից:

- Համ. Շատ տարօրինակ:
- Հոր. Կեանքովըս երդում, յարգելի տէրըս, որ ծշմարիտ է,
Եւ մենք մեզ համար պարուք համարեցնաք դալ եւ ձեզ յայտնել:
- Համ. Այդպէս, պարոններ. բայց զա ինձ սաստիկ վրդովեցնում է:
Այս զիշեր նորէն պահակը դռնք էք:
- Մարց. Եւ Բեռն. Այսո, աղնիւ տէր: 231
- Համ. Զինւած էր, ասացիք:
- Բեռն. Եւ Մարց. Զինւած էր, տէր իմ:
- Համ. Դագաթից կը ընկնել:
- Մարց. Եւ Բեռն. Դընից մինչեւ ոտք:
- Համ. Դէմքը չը տեսա՞ք:
- Հոր. Տեսանք, աղնիւ տէր. Երեսակացը վերեւ էր քաշւած:
- Համ. Խոժճաւ էր զէմքը:
- Հոր. Աւելի տրառում քան թէ բարկացած: 235
- Համ. Դունա՞տ թէ կարմիր:
- Հոր. Սաստիկ գունատ էր:
- Համ. Եւ իր աշքերը յառեց ձեր վըրայ:
- Հոր. Անընդհատորէն:
- Համ. Այս, երանի թէ այնանդ լինէի:
- Հոր. Դա մեզ կ'առշեցնէք:
- Համ. Հաւանական է, շատ հաւանական: Նրիսոյ սպասեց:
- Հոր. Այնքան, որքան մարդ միջակ շատապով մէկ հարիւր համրէ:
- Մարց. Եւ Բեռն. Աւելի երկար, աւելի երկար:
- Հոր. Ուշ երր ես կայի: 241
- Համ. Եւ նըրա մօրուքն աղեխառն էր, չ:
- Հոր. Ճիշդ իր կենդանի ժամանակայ պէս. առ արծաթախառն:
- Համ. Ես էլ այս զիշեր կը հսկեմ ձեզ հետ. զուցէ նորէն զայ:
- Հոր. Վասահ եմ կը զայ: 245
- Համ. Թէ աղնիւ հօրըս կերպարանքն առնէ. կը խօսեմ իր հետ
թէկուզ զըժուկն էլ բերանը բանայ եւ Առիր, զուէ:
Այժըմ իննզրում եմ ձեզ բոլորիդ էլ,
Եթէ մինչեւ այժմ այս երեւոյթը Տաճուկ էք պահել.

Թօղէք տակաւին, որ ձեր լռութեան քօղի տակ կենայ. 250

Եւ այս զիշեր էլ ինչ որ պատահի,

Տըւէք ձեր մոքին, բայց ոչ ձեր լեզվին:

Ես էլ ձեր սէրը կը փոխարինեմ: Դէհ, մընաք բարով:

Հարթավայրի վրայ տասնումէիի եւ տասներկուսի մէջ 254
Կը հանդիպեմ ձեզ:

Ամենքը Մեր յարգանքները Ձեր Ազնութեան:
Համ. Ձեր սէրը, պարուներ, նցնայէս իմ էլ ձեզ. դընացէք բարով:

Պահանջման էն, բայց Հանդիպել:

Իմ հօրըս ողին սպառազինած. մի բան կայ այստեղ.

Ես կասկածում եմ, որ մի պիղծ ոմիր կատարւած լինի.

Ելնէկ թէ զիշերն եկած լինէր այժմ:

Մինչեւ այն, հողիս, անվրդով մընա:

Զազիր գործերը կը զան հրապարակ,

Թէկուզ երկիրն իսկ թազցընէ իր տակ:

Պահանջման է դաստիարակ:

ՏԵՍՔԵՆ ԵՐԵՌԻԴԻ

Մի սձճակ Պոլուճիռսի տաճ մէլ:

Գայիս եճ լակրտ ձև Օֆէլիա:

Լա. Արդէն իրերը նաւի վըրայ են. մընաք բարեւ, քոյր.
Երբ նպաստաւոր լինեն հողմերը, եւ նաւ զանեփ:

Զը քընես, այլ ինձ լուր զընես քեզնից:

Օֆ. Միթէ այդ մասին տարակշո ունիս:

Լա. Գաղով Համբէտին եւ իր սին շնորհին, 5
Մի քմահաճոցը համարիր գու այդ, եւ արեան մի խաղ,

Գարնան մանուշակ նորատի բնութեան,

Վաղահաս, բայց վաղանց, անուշ, բայց անտեւ,

Մի կարծ բոսէի բոյն ու բերկանքը, ոչինչ առելի:

Օֆ. ՀԵՆՑ այլքան միայն:

Լ.Ա.

Ուշնչ աւելի:

10

Քանզի բնութիւնը, երբ զարգանում է,
Ձև աճում միայն ջեղ ու ծառալով.

Այլ երբ այդ տաճարն ընդարձակում է,
Հոգու եւ մօքի ներքին պաշտօնն էլ հետև է զարգանում:
Դուցէ իսկապէս սիրում է քեզ այժմ, 15
Եւ նըրա կամքի ողջախոհութիւնն այժըմ մաքուր է
Որ եւ է կեղծից եւ կեղծութիւնից.

Բայց երբ որ նըրա բարձր աստիճանը կշռի մեջ զբնես՝
Պէտք է վախենաս որ նա նիզն էլ չէ իր կամքի տէրը,

Այլ հպատակն է ինզն իր ծընունդի, 20
Եւ անկարող է ամեն աննշան անհատի նըրան

Այլ համար ձեւել, քանի որ նըրա այդ ընտրութիւնից
Կախուած է երկրի ապահովութիւնն ու ողջութիւնը,

Եւ այդ պատճառով իր ընտրութիւնը շրջագծւած է 24
Այն մարմին ձայնով եւ յօժարութեամբ, որի զըուխն է նա.
Ռւրեմն, երբ ասէ թէ քեզ սիրում է,

Խոհեմութիւնը այն չափով միայն պէտք է հաւատայ,
Որչափ որ Համբէտ, իր յատուկ կամքով եւ աստիճանով,

Կարող է փոխել իր խօսքը գործի, այսինքըն, այնքան,
Որքան Դանիայի ընդհանուր ձայնը հաւանութիւն տայ: 30


Կըոիր ուրեմն թէ քո պատիւը որքան կը տուժէ,
Նթէ զիւրախար ականջով լսես նըրա երգերին,
Կամ թէ սիրուդ տաս, կամ թէ բաց անես ողջախոհ գանձը:
Նըրա անձագուրկ տարիհանքի առաջ:

Վախեցիր, Օթէլիա, վախեցիր դրանից, սիրելի քոյրիկ, 35
Եւ միշտ պահիր քեզ քո համակրանքի թիկունքը քաշւած,
Հեռու ցանկութեան նետից ու վտանգից:

Ամենէն զգաստ կոյն էլ շուայտ է
Նթէ լուսնին իսկ ցոյց տայ իր մարմին գեղեցիութիւնը:

Առաքինութիւնն ինզն էլ ազատ չէ զրպարտութիւնից: 40
Յաճախ թրթուրը ուտում է գարնան երախացրելը

A 29655



Նախ քան թէ նըրանք կոկոն բանացին,
Եւ պատահութեան վազ առաւասին, ջինջ ցօղի պահուն,
Վարակիւ հոգմերն առաւերապէս երկիւղովն են:
Զգոյշ ուրեմնն վախից ապահով պահապան չըկայ. 45
Մատազ արինը ճնգնին ըմբուս է:
Նայն իսկ երր ու ոք չէ զրգում նըրան:

Օֆ. Այս բարի դասիդ ազգեցութիւնը
Կը պահեմ որպէս արտիս պահապան: Բայց, բարի եղբայր,
Մի գուցէ զու էլ ճիշդ այնպէս անես,
Խնայէս ամբարիշտ քարոզիւներից շատերն են առվոր,
Որ քարոզելով երկնիքի փշոտ զախիվեր ուղին՝
Իրենք յրիացած եւ ապերատան անառակին պէս
Զնում են վայելքի ծաղկալց շաւզով.
Հենց իրենք անփոյթ իրենց խորհրդին: 55

Լաւ. Ու, միաժիտ կաց: Բայց ուշանում եմ. ահա եւ հայրը:

Պատվա է Պալունեա:

Կրկին օրհնէնքը կրկին շնորհ է.
Բախարև ժապում է տալով ինձ առիթ երկրորդ հրաժեշտի:
Գոյն. Դատեղ, Լաւոր. զնա, զնա նառ.
Հաղթն առազատիդ ուսին է նատել,
Եւ քեզ են սպասում: Ահա օրհնութիւնս. 60

ՀԵՐԵՎ ԴՆԵԼ ԼԵՐԴԻ ՔՆԵՐԻ:

Եւ այս մի քանի սկզբունքները յիշողութեանդ մէջ,
Տես, լաւ փորազրես: Լեզու մի շայլիր ամեն մի մոքիդ,
Եւ ու էլ ամեն ահաս խորհրդի՝ զործազըրութիւն.
Մարդամօս եղիր, բայց ու զբանհիք: 65
Բարեկամներիդ, որ բնարած լինես եւ փորձի զըրած,
Պողպատ ովերով պրիդր հօգուդ հետ.
Բայց ձեռքիդ ափը մի կոշտացքնիր՝ պատւասիրելով
Նոր ձուից ելած եւ գեռ անգինառուր ամեն ընկերի:
Զգոյշ կաց կուից, բայց երր մէջ մըտար՝ 70
Այնպէս տար զործը, որ զգուշանայ ոսկիորդ քեզիդ:

Ականջք սովորին, ձայնըդ քիշերին.

Առ ամեն մարդուց նըսա կարծիքը,

Դատողութիւնը քեզ համար պահիր:

Թանձ զգեստ հազիր, որքան քրասկըդ կարող է դորել. 75

Բայց ոչ սեթեւեթ. Ճոխ, ոչ զարդարուն.

Քանզի զգեստը յայտնում է յաճախ թէ ինչ է մարդը,

Եւ Թրանսիայում զիրք ու աստիճան ունեցող մարդիկ

Շատ նուրբ ու ընափառ նաշակի տէր են, յատուկ այդ բանում:

Ոչ պարագ առ, ոչ տուր. քանզի շատ անգամ վոխառութիւնը թէ զրամն է կորցնում, թէ բարեկամն. 81

Փօխառութիւնն էլ բըթացնում է խնայողութիւնը:

Այս ամենից վեր, միշտ անկեղծ եղիր զու ինքըդ քեզ հետ,

Եւ կը հետեւի այս բանին, ինչպէս ախոր զիշերին,

Որ ոչ որի հետ չես կարող կեղծել: Կէ՛չ, զընաս բարով,

Եւ օրհնութիւնը թող արքանք քո մէջ արգասաւորէ: 86

Եատ խոնարհարար հրաժեշտ եմ առնում:

Պոլ. Գնա, ժամանակ է, եւ ծառաներըդ քեզ են սպասում:

Լ. Մ. Մնաս բարով, քոյր, եւ լաւ միտ պահիր ինչ որ ասացի:

Օֆ. Քո ասածները փակւած կը մընան յիշողութեանս մէջ, 90

Եւ բանալին էլ կը մընայ քո մօտ,

Լ. Մ. Մընացէք բարով:
գնա-յ է:

Պոլ. Քեզ ինչ է ասել, Օֆէիս:

Ներեցէք, տէր իմ, Համբէտի մասին մի բան ասաց ինձ:

Ծիչզ, լաւ ասացիր. լսել եմ թէ նա վերջերըս յաճախ

Առանձին ժամեր ներել է քեզ. եւ թէ զու ինքըդ 95

Շատ անվերապահ եւ շրայլ կերպով ընդունել ես նրան:

Եթէ այդպէս է, — եւ ինձ ասել են թէ ճիշդ այդպէս է,

Եւ այդ լոկ իրեւ նախազգուշացում — պէտք է քեզ ասեմ,

Որ չես զիտակցում այնպէս պարզուէն,

Ինչպէս վայել է իմ աղջըկանըս, եւ քո իսկ պատուիդ: 100

Ի՞նչ կոյ մեր միջնեւ. Եշմարիսն ասա:

Օֆ. Տէր իմ, վերջերըս շատ ապացոյցներ առւել է նա ինձ

- Դր համակրութեան :
 Պոլ. Համակրութեան, բաշ .
- Խօսում ես ինչպէս մի անփորձ աղջիկ
 Անվարժ այսպիսի խիստ վտանգաւոր մի պարագայի : 105
 Հաւատում ես զու քա այդպէս առած «ապացոյցներին», :
- Օֆ. Զը զիտեմ, տէր իմ, թէ ինչ մտածեմ :
 Պոլ. Հա, այդ նս կասեմ. մտածիր թէ զու մի երեխայ ես,
 Որ ընդունել ես այդ ապացոյցներն հնառն դրամի տեղ, 109
 Մինչ կեղծ են նրանք : Դու քեզ աւելի թանկ ապացուցիր,
 Թէ ոչ — խեղճ բառի հոգին չը հանենք այսքան կրինելով —
 Ծիմարութիւնը կ'ապացուցես ինձ :
- Օֆ. Տէր իմ, նա միայն պատւաւոր ձեւով իր սէրն է յայտնել :
 Պոլ. Կարող ես «ձեւ», անւանել այդ. զնա, զնա բանիդ :
 Օֆ. Նւ իր խօսքերը երինքի բոլոր սուրբ երդումներով 115
 Հաստատում էր նա :
- Պոլ. Հա, որոկայթներ կացար բռնելու :
 Աս շատ լաւ զիտեմ, որ երբ արինը բոցավառւում է,
 Ի՞նչ շոայութեամբ հոգին երդումներ տալիս է լեզբն .
 Այդ բոցերն, աղջիկ, որ լցու են սփռում, բայց ոչ ջերմութիւն,
 Նրկումիցն էլ զուրկ հէնց խոստանալիս, գեռ բերնից չելած,
 Զը պէտք է երրէք կրոսկ համարես : 121
 Լոիր, այս օրից՝ մի քիչ աւելի խընայող եղիր
 Օրիորդական ներկայութեանը .
 Հանգիստումներիդ աւելի զին զիր,
 Ոչ թէ միշտ եղիր հրամանին պատրաստ :
 Գաղով Համբէտին՝ յիշիր միշտ թէ նա երիտասարդ է,
 Նւ թէ աւելի երկար պարանով կարող է շքծել,
 Քան թէ քեզ համար թոյլատրելի է :
 Կարծը, Օֆելիա, հաւատ շընծայես այդ երդումներին,
 Դըրանք միմիսյն վաս միջնորդներ են, 130
 Ոչ թէ այն գցինի, ինչ ցոյց է տակիս նըրանց զրոյնը .
 Այլ խնդրաբառներ անսուրբ խղների,
 Որ փախում են սուրբ ու բարեպաշտ կաւասների պէս

Աւելի սաստիկ խարելու համար։
134
Մի անգամ ընդ միշտ թող քեզ պարզ ասեմ, ինձ հաճելի չէ,
Որ այսուհետեւ ազատ բռպիներդ այդպէս շռապիս
Եւ Համբէտի հետ ասուիս անես։
Զգիշ, ասում եմ, խելքը ժողովիր։

Օֆ.

Հնազանդ եմ, տէր իմ։

Գևոս էն։

ՏԵՍՈՐԸՆ ՉԱՐՐՈՐԴԻ

Հարթափայրի վրայ
Քայիս եմ Համելիս, Հորոցիս են Մարցկլոս։

Համ. Օդը շատ խիստ է. սոսկալի ցուրտ է։
Հոր. Այս, զառնաշունչ եւ կտրող օդ է։
Համ. Որ ժամն է հիմա։
Հոր. Մօտ տասներկուան է։
Մարց. Ու, արդէն զարկեց։
Հոր. Ծիշդ. շը տեցի. մօտ է ուրեմն այն ժամանակը,
Երբ սովորաբար ողին զալիս է։

Փողով. Շնորհանուն էն այս երես։

Այս ինչ է, տէր իմ։
Համ. Արքան այս զիշեր տօն է կատարում եւ խնջոյք ունի։
Կոնծարանում է, եւ զլոտուելով կայթպար է պարում։
Եւ երբ ցնում է Հռենոսի զինին իր կոկորդն ի վար՝ 10
Թմբուկն ու փողերն այսպէս զռում են
Ի պատիւ նըստ խըման կենացին։
Հոր. Միթէ դա մի հին սովորութիւն է։
Համ. Այս, այդպէս է։
Բայց իմ կարծիքով, — թէեւ ես ինքըս այստեղ եմ ծընւած,
Եւ մանկութիւնից զըսան վարժըւած — 15

Դա մի այնպիսի սովորութիւն է,
Որի խախտումն է աւելի պատիւ, ոչ հետեւումը:
Այս զբանմըսը կերուխումները
Մեզ արեւելքից մինչեւ արեւմուտք՝ այլ ազգերի մօս
Խայտառակում են. նըրանք արբեցող անւանում են մեզ,
Եւ խոզավայել մակդիրներ կցում մեր անուններին. 21
Եւ դա, խիշաղէս մեր մեծ գործերից, որչափ էլ բարձրը,
Խըռում է փառքի ուղը եւ ծաւծը.
Խնդպէս շատ անգամ նոյնն է պատահում անհատների հետ,
Որոնք կըրելով բընութեան ինչ որ ախտաւոր մի րիծ, 25
Խնդպէս ի ծընէ, — մի բան որի մեջ նըրանք մեզք չունին,
Քանի որ էակն ննջը չէ կարող իր ծագումն ընտրել —
Խրենց խառնածքի որոշ հակումի զօրանալովը,
Որ դատաղութեան բերդ ու պարիսապը վար է տապալում,
Կամ ունենալով մի սովորութիւն, 30

Որ հաւանելի քաղաքավարութեան որ եւ է ձեւը
Չափազանցում է, այդ մարդիկ, ասում եմ, —
Մի հատ թերութեան զրոյշը կըրելով,
Մինի դա բնութեան արւած համազգեստ, լինի բախտի աստղ —
Նըրանց բոլոր միւս արժանիքները — 35
Թէկուզ անարատ ինչպէս սրբութիւն,
Եւ անթիւ, որքան արքաւծ է մարդուն —
Դարձեալ ընդհանուր կարծիքի առաջ
Այդ մէկ մասնաւոր պակասութիւնից կ'արատաւորւին:
Մի մասնիկ ժանգը բոլոր ազնիւ նիւթն ապահուում է 40
Եւ իջեցընում իր անարգութեան:

Գ-ը և Ռ-ը սկսել:

Հոր. Սայեցէք, տէր իմ. զալիս է . . .
Համ. Հրեշտակներ, շորհի սպասաւորներ, պաշտպանեցէք մեզ:
Ինչ էլ լինես դու, փրկրւած ողի, թէ դեւ զժոխքի,
Նրիքից հետքդ բցր բերած լինես, զեհենից խորշակ, 45
Թէկուզ չար լինին նպատակները, թէկուզ բարեգութ,

Այնպէս հարցայցզ գեմքով ես դալիս,
Որ պէտք է խօսեմ, պէտք է կանչեմ քեզ, Համբէտ, թագաւոր,
Հայր, Վեհափառ տէր Դանեմարքայի: սպատասխան տուր Բնձ.
Մի թողնիր պայթեմ անզիտութիւնից. 50

Այլ ասա, Բնձու քո սուրբ սուերքը, մահուան աւանդւած,
Պատուել են իրենց վարշամանիները.

Բնձու շերմբը, որտեղ քեզ աեսանք հանդիսատ ամփոփւած,
Բացել է իր ծանր, մարմար երախը եւ քեզ դուրս ժայթքել:
Անձ միոք ունի այս, որ դու, մեռած զի, ամբողջ զրահապատ,
Ավայցելում ես լուսնի շողքերը, 56

Դարձնելով զիշերն այսպէս ահաելի,
Որ մենք, ըընութեան խաղալիքներըս սոսկահար եղած
Յնցեմնք խոհերով, որոնց անշատ են մեր հոգիները:
Ասա, Բնձ է այս, Բնձու համար է, Բնձ պէտք է անձնք: 60

Ուշամանը դէմու նշան է անում Համբէտին:

Հոր. Աշան է անում որ զընաք իր հետ.
Կարծես ուզում է ձեզ առանձնապէս մի բան հաղորդել:

Մարց. Սայեցեք Բնձպէս սիրալիք ձեւով հրաւիրում է ձեզ
Դէպի աւելի մենաւոր մի տեղ. բայց չերթաք, տէր իմ:

Հոր. ՄՇ, ամենեւին:

Համ. Զէ ուզում խօսել. 65
Պէտք է ուրեմն հետեւեմ նըրան:

Հոր. Ու, չերթաք, տէր իմ:
Համ. Բնձու, վախս Բնձ է. կեանքըս ինձ համար մի տանդ շարժէ.
Խակ գարով հոգուս Բնձ կարող է նա իմ հոգուն անել,
Քանի որ իր պէս նա էլ անմահ է:
Էլի կանչում է. պէտք է հետեւեմ: 70

Հոր. Խակ եթէ, նա ձեզ քարշ տայ գէպի ծով,
Կամ թէ գագաթը այն քարաժայուի,
Որ կորացել է իր ստորոտից, կախւել ծովի վրայ,
Եւ այնտեղ Բնձը ուրիշ ահաելի մի ձեւ ստանայ,
Որ գատաղութեան իշխանութիւնը իրըէ ձեզանից: 75

Եւ ձեզ հասցընէ խելազարութեան։

Խորհեցէք, իշխան, այն տեղը բնօքը, առանց այլ բանի,

Խելազարութեան հավեր կը փշէ ամեն ուղեղի,

Որ այնքան կանգուն վար նայ։ Ֆովին

Եւ ըսէ ներքեւ նրան դռաոցը։

80

Համ։ Դարձեալ կանչում է։ — Գընա, զալիս եմ։

Մարց. Չըպէտք է զընաք, իմ ազնիւ տէրըս։

Համ։ Ձեռքներդ յետ քաշէք։

Հոր. Լսեցէք, տէր իմ, շըպէտք է զընաք։

Համ։ Թողէք, օրհասըս ինձ ձայն է տալիս,

Եւ մարմնիս ամեն մի փոքրիկ նեարդը զօրեղացնում է։

Ինչպէս նէմէյեան առիւծի ջիղը։

Դարձեալ կանչում է։ Թողէք, պարանեեր։

Մըկինքն է վկայ, ուրու կը զարձնեմ ինձ արգելոցին։

Հեռո՛ւ, ասում եմ։ — Գընա, զալիս եմ։

Ո-ը-ա-ի-նը ի- Հա-հ-է-դ դ-ը-ը- ի- գ-ն-ս-։

Հոր. Իր մոքի թափից խելազարուում է։

90

Մարց. Գընանք ետեւից։ յարմար չէ այսպէս հնազանդել նըրան։

Հոր. Գընանք ետեւից։ Ուր է հասնելու այս բանի վերջը։

Մարց. Մի բան է փտել Դանեմարքայում։

Հոր. Ասուած կը շիտի։

Մարց. Հետեւենք նըրան։

Դ-ը-ը- ի- գ-ն-ս-։

ՏԵՍԱՐԸՆ ՀԻՆԴԵՐՈՐԴ

Հարթավայրի մի ոչ մոռը.

Ջարիս ճճ թերականը ճճ Համլիս :

Համր. Մուր ես տանում ինձ. խօսիր, չեմ զալիս աւելի հեռու :

Ուր. Լոիլ :

Համր. Լուսմ եմ :

Ուր. Մօս է իմ ժամը,

Նրբ ծծմբային տանջող բացերին,

Պէտք է որ կրիին անձնատուր լինեմ :

Համր. Աւազ, խեղճ ողի :

Ուր. Մի խղճար վըրաս, այլ լսիր ուշով յայտնելիքներս : 5

Համր. Պարտքըս լսել է :

Ուր. Եւ վըրէժ հանել լսելուց յետոյ :

Համր. Խ՞նչ :

Ուր. Հօրդդ ողին եմ.

Դատապարտած եմ որոշ ժամանակ զիշերը շրջել 10

Եւ ցերեկները փակւած՝ ծոմ պահել կրօակների մէջ,

Մինչեւ որ բոլոր կեանքիս օրերի պիղծ ոճիները

Այրւին ու որրուին: Եթէ իմ վըրայ արգելք շըներ

ևմ բանդանոցի զալտնիքներն յայտնել՝

Օ՛հ, կարող էի քեզ մի այնպիսի պատմութիւն անել, 15

Որի ամենէն թեթեւ բառն անդամ հոգիդ կը տանջէր.

Մատաղ արիւնըդ կը առոեցնէր. երկու աշքերդ,

Աստղերի նըման գուրս կը թռոցնէր իրենց ողբարքից.

Հիւսւած ու զուգւած այդ զիսակներըդ կը հիւսարձակէր.

Եւ ամեն մի մազ՝ բարկացիուտ ողնու փուշերի նըման 20

Յից կը կանգնեցնէր. բայց յաւիտեանի այս յայտնութիւնը

Միս ու արիւնէ ականջի համար անկարելի է:

Լոիլ, ո՛հ, լոիլ. Եթէ խիստիս սիրել ես հօրդ . . .

Համր. Ասուած իմ . . .

Ուր. Արբա հրէշային, ժանտ սպանութեան վըրէժը հանիր:

Համ' . Խոչք , սպանութեան :

26

Ուր . Այս , եւ խիստ ժանա մարդասպանութեան :

Ամենալավն էլ թէեւ այզպէս է ,

Բայց սա խիստ ժանա էր , խիստ առարթնակ , խիստ անրընական :

Համ' . Պատմիր շուտ , պատմիր , որ ես թեւերով , 30

Աւելի արագ քան մոքի թըռիչք կամ սիրոյ խոհեր

Ի վրէժ արքանամ :

Այս , տեսնում եմ , որ զգայուն ես .

Հեղջ կը ընէիր քան այն ճարպ խոտը ,

Որ հանգստօրէն արմատ է ձըզում լէթէի ափին ,

Թէ ցըյտուէիր : Արդ , ըիր , Համբէտ . 35

Լուր են առածել , թէ պարտէզիս մէջ քընած միջոցիս

Օձ է ինձ խայթել : Ամբողջ Դանիայի ականջն այս կերպով

Մահանըս մեւի շնծու պատմութեամբ մողբեցւած է .

Բայց զու խմացիր , աղնիս պատանին ,

Ինձ խայթող ուզ նա է , որ հիմա իմ թագն է կըրում : 40

Համ' . Մարդարէ հոգիս . հօրեղույց . . .

Ուր . Այդ շնացող , ազգապիղծ միրը

Իր ճարտար խելքին կախարդանքներով եւ նենդ ձիքերով

— Ամէնք այն խելքին եւ այն ձիքերին ,

Որ այս աստիճան զօրութիւն ունին մողբեցնելու . — 45

Իր ամօթալի ցանիամոլութեան համամիտ արաւ

Արտաքուստ այնպէս առաքինացոց թագուհուս կամքը :

Համբէտ , ինչպիսի մի անկում էր այդ ,

Ինձնից , որի սէրն այնպէս աղնիւ էր ,

Որ մեռմ էր միշտ իմ ամուսնական ուխտից անբաժան ; 50

Ինձնից վար ընինել եւ առողանալ մի ապիրատի ,

Որի բընատուր արժանիքները այնքան խեղճ էին

Ինձ հետ բազգատած :

Բայց ինչպէս երբէք առաքինութիւնը չի թուլանայ

Թէկուզ տոփանքը երկնային գէմբով նըրան առդիած է , 55

Պազշտութիւնն էլ , թէկուզ լուսափառ հրեշտակի կցւի ,

Շուտ կը յագենայ երկնային մահծից ,

Նւ լըշե վըրայ մարտիկ կը գնառէ:

Բայց կաց, զզում եմ վազորդեան սիւզը.

Կարճ պէտք է խօսեմ: Այն ինչ պարտէզւմ, կէաօրից յետոյ,

Հաս ամենօրեայ իմ ազգորութեան քընած էի ես, 61

Ասպահով ժամփ՝ հօրեզայրդ զալս մօսենում է ինձ,

Անիծեալ բանդի քամաւկը ըրած մի սրւակի մէջ,

Նւ բորսատիր հիւթը թափում է իմ ականջներում.

Նւ այն աստիճան թշնամի է զա մարդու արեան հետ, 65

Որ այնպէս արագ ինչպէս անդիւկ՝

Դազում է մարմնի բնական անցքերով եւ բաւխներով,

Նւ բոլէական իր ներգործութեամբ թանձրացընում է:

Մարդկային առողջ եւ նօսր արիւնը.

Մյանը պատահցեց եւ իմ արեան հետ, 70

Նւ յանկարծահան մի բորսութիւն թեփ աըւաւ զրսից,

Նւ զարշ ու զազիր կեղեւով պատեց ողորկ մարսինըս,

Ղազարսի պէս: Այսպէս քընի մէջ մի եղօր ձեռքով

Զրիւեցայ կեանքից, թարից, թագուց.

Քաղեցայ մեղքիս բողոքանքի մէջ՝ 75

Անհաղորդ, անծէս, առանց օծութեան, հաշիւ չըմաքրած,

Այլ ուղարկեցայ համարաւութեան

Բողոր մեղքերըս զիսիս վրայ զիզած:

Հասմ. Սոսկալի, սոսկալի, օ՛հ, խիստ սոսկալի:

Ուր. Եթէ կայ քո մէջ որդիսական սէր, մի տանիր դու այդ. 80

Մի թաղնիր Դանիոյ թազաւորական վեհ անփողնը

Քընանոց զառնայ անսառակութեան եւ պիղծ շնութեան.

Բայց ինչ կերպով էլ հետամուռ լինես այս նպատակին,

Չըպէտք է միտքրդ արաւառես, կամ թշլ տաս հօգուդ,

Որ նա մօղըդ գէմ դաւագիր լինի. 85

Երիցի վճաբն յանմնիր դու նըրան,

Եւ այն փշերին, որ բընակւում են նըրա կրծքի մէջ.

Թող նըրանք խոցեն ու խայթեն նըրան: Շնուտ, մընաս բարեւ.

Լուսատըսիկը յայտնում է արդին որ լուսանում է,

Նւ սիսում է իր անզօր բոցը զունախտափ անել: 90

Մնաս բարեւ, մնաս բարեւ, մնաս բարեւ, յիշեր ինձ:

Ո-ը-ս-ի-ա-ն-ը չ-ո-ւ-ս-մ-է :

Համ. Ովզ գուք երկնային բոլոր բանակներ, ով երկիր, էլ ի՞նչ, Դըս ովզն էլ կըցիմ: Օ՛հ, թե ու հ, Ամուր կաց, ամուր կաց, սիրո իմ, Նև գուք, իմ ջիզեր, մի' պառաւանաք մի ակնօթարիմում, Այլ ինձ կուռ ու պինդ կանգուն պահեցէք: 95

Յիշեմ քեզ, այս, գու խեղճ ուրաւիան,

Կը յիշեմ քանի յիշողութիւնը աթոռ ունենայ

Այս խեցյեղած զնտակի միջում:

Յիշեմ քեզ, այս, իմ յիշողութեան զբանախակից

Կը ջնջեմ բոլոր փուշ ու աննշան պատահարները, 100

Դրգերի բոլոր ասացւածները, ամեն ձեւ ու դեմք,

Մացեալի ամեն տպաւորութիւն,

Որ պատանութիւնն ու դիտողութիւնն այնտեղ զրել են,

Նև քո պատւէրը կապրի մեն մենակ

Ուզեղիս զրգի եւ հատորի մէջ՝ 105

Առանց խառնելու աւելի ստոր ուրիշ նիւթի հետ:

Ա՛հ, երկնեք վրկոյ . . . Այս, չարագործ կին.

Նև գու, սրիկայ, սրիկայ, ժպտադէմ, անիծեալ սրիկայ,

Տետրակըս. պէտք է յուշագրեմ սյստեղ,

Թէ մարդ կարող է ժպտալ, եւ ժպտալ, եւ սրիկայ լինել.

Դոնէ, վատահ եմ կարելի է այդ Դանեմարքայում: 111

Գ-ը-ս-մ-է :

Այսպէս, հօրեղբայր, հիմա այստեղ ես.

Խմ կարգախօսը. «Մնաս բարով, մնաս բարով, յիշեր ինձ,

Երդւեցի:

Հ-ը-ս-մ-է: Ե- Մ-ը-շ-է Ա- Շ-ը-մ-է:

Հոր. Տէր իմ, տէր իմ:

Ներ ին գ-ը-մ-է:

Մարց. Հէյ, իշխան Համբէտ:

Հոր. Երկնաքը փրկէ նըրան փորձանքից:

Համ. Ամէն:

Մարց. ԵՇԿՅ, ՏԿՅ, Իշխան :

Համբ. ԵՇԿՅ, ՏԿՅ, աղայ. եկ, թռչուն, եկ, եկ:

Մարց. Լաւ, ինչ պատահեց, իմ ազնիւ տէրըս:

Հոր. Ի՞նչ եղաւ, իշխան :

Համբ. ՕՇ, զարմանալի:

121

Հոր. Դէ՛չ, պատմեցէք մեզ, սիրելի տէրըս:

Համբ. Ուշ, երբէք, տէր իմ, երկինքն է վիայ:

Ուշ գուք կը յայտնէք:

Հոր. Եաւ, անդամական մարտու կանցնէք . . .

Պատմանի կը պահէք:

Հոր. Եւ Մարց. Կը պահէնք, տէր իմ, երկինքն է վիայ:

Համբ. Զքիայ մի որիկայ ամբողջ Դանիայում,

126

Որ . . . մի անզգամ դաւանան չլինի:

Հոր. Պէտք չըկար, տէր իմ, որ մի ուրաւկան գերեզմանից գար

Մեզ այդ ասելու:

Համբ. Այս, իրաւ է, իրաւոնք ունիք:

Այսպէս ուրեմն, առանց այլ եւ այլ դարձուածքների,

130

Եսրմար եմ զանում, որ ձեռք տանք իրար, եւ թռչննեք զինանք,

Դուք, ուր ձեր գործը կամ ձեր փափազը կանչում լինեն ձեզ, —

Քանի որ անշուշտ ամեն մարդ մի գործ եւ փափազ ունի —

Խսկ ես, խղճալիս, անսէք, զընում եմ աղօթք անելու:

134

Հոր. Դըրանք անշեթեթ, տարամ խօսեր են, սիրելի իշխան:

Համբ. Յաւում եմ որ ձեզ վիրաւորում են, ցաւում եմ սրտան:

Հոր. Այսիւորւելու բան չըկայ, տէր իմ:

Համբ. Կայ, Հորացիօ, սուրբ Պատրիկ վիայ,

Եւ նոյնիսկ շատ խիստ վիրաւորանք կայ:

Ինչ այս աեսիլքին վիրարերում է այսքանն ասեմ ձեզ,

թէ նա բարեմիտ մի ուրաւկան է.

141

Խսկ եթէ երբէք ուղեք իմանալ ինչ անցաւ մեր մէջ,

Լաւ է որ զապէք ձեր այդ փափազը, ինչպէս կարող էք:

Այժմ, սիրելի բարեկանելըս,

Իրբեւ բարեկամ, իրբեւ զարնիեր, իրբեւ զինակից՝

145

ՄԻ ՀԱՅԻՆ աղերս շնորհեցէք ինձ:

Հոր. Խ՞նչ բան, ազնիւ տէր, ամենայն սիրով:

Համ. Չը յայտնել ինչ որ այս զիշեր տեսաք:

Հոր. Եւ Մարգ. Չեզ յայտնի, տէր իմ:

Համ. Ոչ, ոչ, երդւեցէք:

Հոր. Ազնիւ խօսք, տէր իմ, ոչինչ չեմ յայտնի:

150

Մարգ. Ոչ էլ ես, տէր իմ, պատսիս վրայ երդում:

Համ. Իմ սըրիս վրայ:

Մարգ. Երդւեցինք արդէն, սիրելի իշխան:

Համ. Ոչ, սըրիս, վրայ, լուրջ, սըրիս վրայ:

Ուր. (ՔԵԴՆԵ ՊԵԼԵ)

Երդւեցէք:

Համ. Հայ, մանւսեկ, զմունես, այդ զմուն ես խօսում, այ գու, ազնիւ մարդ.

— Եկէք, լուրջիք այս մարդու ձայնը զետնափորիցը:

155

Զիշեցէք երդւել:

Հոր. Շատ լաւ, ասացէք թէ Բայրէս երդւենք:

Համ. Երրէք չը յայտնել ձեր այս տեսածը,

Երդւեցէք սըրիս վրայ:

Ուր. (ՔԵԴՆԵ ՊԵԼԵ)

Երդւեցէք:

Համ. Hic et ubique? սէտք է ուրեմն տեղները փոխենք:

Եկէք, պարսները, ձեռքները մէկ էլ զըրէք սըրիս վրայ.

Երրէք չըխօսել ձեր լսածի վրայ,

161

Երդւեցէք սըրիս վրայ:

Ուր. (ՔԵԴՆԵ ՊԵԼԵ)

Երդւեցէք:

Համ. Լու, ծերուկ խըսրոդ. Բնչպէս արագ ես զետնի տակ զործում:

Քաջ ուսհիլից ես: — Մէկ էլ տեղ փոխենք, բարեկամները:

Հոր. Եկէք, Ասուած. առ ինչ օտարութիւն:

165

Համ. Դու էլ ընդունիր, ինչպէս կընդունեն օտարականին.

Մըքան բաներ կան, Հորացիս, երիմքում եւ երկրի վրայ,

Որ երր եւ իցէ փիլիսոփայութիւնդ չէ իսկ երազել:

— Բայց եկէք. այստեղ, ինչպէս քիչ առաջ, երդւեցէք կրկն,

— Եւ թող ձեղ Ասուած օգնական լինի — որ ես սըրան էլ

Անհամականը եւ տարօրինակ վարժունք ունենամ,

171

Եւ կարելի է որ յարմար դատեմ

Արտառոց ձեւեր ցցյ տալ արտաքուստ,
Եւ դուք, այդպիսի պարագաներում եթէ ինձ տեսնէք,
Չը պէտք է երբէք, այսպէս թեւներոց խաչաձեւելով, 175
Եւ կամ թէ այսպէս զըլուխ շարժելով,
Կամ կասկածելի մի խօսք առելով,
Խնդրէս “Հաւ է, լաւ, մենք այդ լաւ զիտենք,,
Կամ “Կարող էնք, եթէ ուղինք,, 179
Կամ “Եթէ խօսենք,, կամ թէ “Մարդիկ կան որոնք կարող են,,
Կամ թէ այդպիսի երկմիտ ակնարկով այնպէս ձեւ ացնէք,
Թէ որեւէ բան զիտեք իմ մասին:
Երգւեցէք շանել, եւ թող Աստուծոյ ողորմութիւնը
Չեր ամենին շատ կարօտ բռպէին օգնութեան դայ ձեզ: 184
Երգւեցէք:

ՄԻԾ. (ՔԵԴՆԻ ԴՄԱԼԵԴ) ԵՐԳՎԵցէք:

ՀԱՅԻ. Հանդարտւիր, հանդարտւիր, վրդովւած ողի:

ԵՐԳՎԵՑԷԴ ԷՆ:

Այսպէս, պարոններ, իմ բոլոր սիրով հրաժեշտ եմ առնում.
Եւ ամեն ինչ որ Համբէտի նըման չքաւոր մի մարդ,
Կարող է անել՝ ձեզ իր պրափ սէրն արտայայտելու,
Աստուծ կամենայ, անտես չեմ անի: 190
Եկէք ներս զընանք բոլորս միասին, եւ ազաշում եմ
Դըրէք ձեր մասով ձեր շըթոնքի վրայ.
Ժամանակն իր շաւզից դուրս է այդթաքել. օհ, բախտ իմ դժիւնեմ,
Խնդռ ծընաեցայ որ հէնց ես ուղիւմ:
Եկէք բոլորս զընանք միասին:

ԴՐԱՅ ԷՆ ՃՆՎԵԴ:

□ □ □

ԱՐԱՐԻԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԵՐԵՆ ՇԽԱՉԻՆ

Մի սենեակ Պոլոճիռևի տաճը.

Դաշիս ձեւ Պոլոճիռև ձև թէկյալդօ:

Պոլ. Ահա, Ռէյնալդօ, տուր նըրան այս վազն ու այս թղթերը:
Ռէյն. Շատ բարի, տէր իմ:

Պոլ. Եւ խելացի բան արած կը մնես, բարի Ռէյնալդօ,
Նթէ նախ քան թէ նըրան այցելեա՞
Հարց ու փորձ անես նրա վարքի մասին: 5

Ռէյն. Տէր իմ, այդպէս էլ մտադիր էի:
Պոլ. Հա, լաւ ասացիր. շատ լաւ ասացիր: Խնձ նայիր, պարոն,
Նախ տեղեկացիր թէ Փարփիզ մէջ բնչ Դանիացիր կան,

Եւ բնչպէս, եւ ով, բնչ միջոցներով, եւ ուր են ապրում,
Խնչ ընկերութիւն, եւ ըրբան ծախքով, 10

Եւ երբ այսպիսի ոլոր ու մոլոր քո հարցու վիրանով
Տեսնես որ նըրանք ծանօթ են որդուս,

Այդպէս աւելի մօտ կը գաս խնդրին,
Քան թէ ուղարկի հարցու թեր տալով: 14

Եցյ տուր, որպէս թէ հարեւանցօքէն ծանօթ ես իր հետ.
Օրինակ, այսպէս, “Ճանօթ եմ հօր հետ, ընկերների հետ,
Մասամբ էլ իր հետ:” Հասկացար, Ռէյնալդօ:

Ռէյն. Այս, լաւ, տէր իմ:
Պոլ. “Մասամբ էլ իր հետ,” “բացցու, կասես, “ու շատու.” 19
“Թէ իմ ասածն է, շատ զիմն էու, կասես:” “Այսպէս է, այնպէս,”:

Յետոյ դիր վըրան ի՞նչ շննծու բաներ որ յարմար դատես.

Բայց ոչ այնպիսի խայտառակ մի բան, որ արատ բերէ.

Զգոյշ կաց զրանից. այլ միայն, սպառն,

Այնպիսի շըւայտ, խոլ, սովորական մոլորութիւններ,

Որ ջահիլութեան եւ աղատութեան. 25

Ճանօթ ու յայտնի ընկերներն են միշտ:

ՈՒՅՈՒՆ. Խնչպէս թուղթ խաղալ:

ՊԵՂ. Այո, կամ խմել, կամ զինամարտել, հայհոյել, կռւել,

Չունիփներ սպահել. մինչեւ այսքանը կարող ես գնալ:

ՈՒՅՈՒՆ. Տէր իմ, դա նըրան անսպատիւ կ'անէ:

ՊԵՂ. Զէ, հոգիս վկայ.

Միայն թէ պէտք է մեղազրանքներդ քիւ բարեխառնես. 30

Ուտք չէ այնպիսի խայտառակ մի բան վերադրես նըրան,

Որպէս թէ իրաւ նա հակամէտ է անժուժիալութեան.

Ու, այդ չեմ ու զում. այլ պէտք է այնպէս նարտար արւեստով Դուրս բերես նըրա թերութիւնները,

Որ աղատութեան արատներ թըւան, 35

Աըրակատ սպու բոցն ու պոռթիւումը,

Դեռ անզուսազ արևան վայրեննութիւնը,

Որ զրոհ է տախտ ամեն մարդու մէջ:

ՈՒՅՈՒՆ. Բայց, ազնիւ տէրըս . . .

ՊԵՂ. Ենչ հարկ կայ այդպէս վարելու:

ՈՒՅՈՒՆ. Այո, կուզէի հենց այդ իմանալ:

ՊԵՂ. Լաւ, սպառն, այս է իմ ծըրագիրը.

Եւ, համոզած եմ, դա թշնարեկ վարպետութիւն է.

Մինչդեռ զու այդպէս թեթեւ յանցանքներ ձգես որդուս վրայ,

Խնչպէս արատներ, որ գործածումից լինեն զյացած,

Օս խօսակիցը, որից ուզում ես խօսք քաշել, ուշ զեր, 45

Սթէ երր եւ է քո ամբաստանած երիտասարդին

Քիւ առաջ առած յանցանքների մէջ նկատած լինի:

Առաջահ կաց, խօսքից այսպէս վերջ կը տայ.

“Յարգելի պարոն,, կամ թէ արգեկամ,, կամ “ազնիւ պարոն,,

Սայելով երկրի յարգանքի ոճին եւ մարդու զիրքին: 50

Ռէյն. Շատ բարի, տէր իմ:

Պոլ. Եւ յետոյ, պարոն, նա կասէ... կասէ... ինչ էի ասում.
Հա, խաչը վկայ, ասում էի թէ... խօսքը ո՞ր մընաց:

Ռէյն. Ասում էիր թէ «Այսպէս վերջ կը տայ», 54
«Յարգել պարոն», կամ թէ «բարեկամ», կամ «ազնիւ պարոն»:

Պոլ. «Այսպէս վերջ կը տայ», Ճիշդ է, միտս եկաւ.
Այսպէս կասէ քեզ «Ես այդ պարոնին ըստ ճանաչում եմ.
Հենց երեկ տեսայ, կամ թէ անցեալ օր,

Կամ թէ այս ինչ օր, այն ինչ մարգու հետ, 59

Կամ թէ այս ինչ տեղ, ինչպէս ասում էք, նա թռողժ էր խաղում.
Կամ թէ այս ինչ տեղ արբած ընկած էր,

Կամ թէ այն ինչ տեղ թէնիս խաղալիս կրոխ էր ասրբել, կամ գուցէ կասէ «Ճեսայ երը մոտա մի վաճառատուն»:

Ուզում եմ ասել վատահամբաւ առևն, եւ այն, հասկացար.
Քո առափի խայցը այսպէս կը բռնէ Շշմարտութիւնն ձուկը.

Եւ ահա այսպէս մենք խելացիներս ու վարպետներս 66
Կարողանում ենք խոտոր հարցերով եւ շեղ փորձերով
Անուզութիւնից ուզութիւն գտնել.

Նյոնպէս էլ եւ դու իմ ասած ձեւով եւ խորհուրդներով
Կարող կը բնես դուրս բերել որդուս որպիսութիւնը: 70

Հասկացար միտքը:

Ռէյն. Հասկացայ, տէր իմ:

Պոլ. Բարի ճանապարհ, եւ Ասուած քո հետ:

Ռէյն. Աչքովը զիտիր նորա հակումը: Շընորհակալ եմ:

Ռէյն. Այս, ազնիւ տէր:

Պոլ. Եւ թող տուր որ նա իր մուզիկն ածէ:

Ռէյն. Բարի ճանապարհ:

Պոլ. Բարի ճանապարհ:

Ռէյն-լուս դնում է. Ներս է հրնամայ Օքնուան:

Ինչ կայ, Օֆելիա, ինչ է պատահել: 75

Օֆ. Ահ, հայր իմ, հայր իմ, այնպէս վախեցայ:

- ՊՈԼ. ի՞նչ է պատահել, ի սկզ Աստուծոյ:
- ՕՖ. Տէր իմ, սենեակումն կար էր անում, Նրի իշխան Համբէտ՝ բամբոնի կապերն ամբողջ արձակած, Առանց զինարկի, եւ դուըպաները սաստիկ կեղտուած, 80 Անկապ, կախ ընկած մինչեւ ոտքերը, Իր շապիկց գունատ, երկու ծննդերը իրար բաղիսելէն, Եւ մի այնպիսի խղճակն նայւածք իր աշքերի մէջ, Կարծես զըմժոխից արձակւած լինէր Արհաւերքները պատմելու համար՝ եկաւ իմ առաջ: 85 Ժ՞ո՞ս սիրուց գժւած:
- ՕՖ. Զը զիտեմ, տէր իմ. Բայց անկեղծն ասած, շատ եմ վախենում որ այդպէս լինի:
- ՊՈԼ. Եւ քեզ ի՞նչ ասաց:
- ՕՖ. Ձեռքիս գաստակից բռնեց, պինդ պահեց, Եւ իր բազուկի հեռաւորութեամբ յետ յետ զընարով Եւ իր միւս ձեռքը այսպէս գընելով ունքերի վըրայ՝ 90 Սկսեց այնպէս երեսը զննել, Որպէս թէ ուղիւ պատկերըս քաշել. Եւ երկար այսպէս նա կանգնած մընաց. Ի վերջ, թեւըս մի քիչ ցնցելով Եւ երկը անզամ այսպէս զըռուխը վերեւ տանելով՝ 95 Այսպիսի մի խոր ու սրտամիջիկ հասաւ արձակեց, Որ կարծես թէ այդ ջարդեց ու փշեց նըրա ողջ կազմը, Եւ նըրա կեանքին վերջ տրւաւ մէկն: Այդ անելուց յետ Ձեռքըս բաց թողեց եւ զըռխը շրջած իր ուսի վըրայ՝ Կարծես գտնում էր իր ճանապարհը առանց աշքերին, 100 Եւ առանց նըրանց օժանդակութեան դռնից դուրս զընաց, Մինչեւ վերջ նայւածքն իմ վըրայ յառած:
- ՊՈԼ. Եկ ինձ հետ զնանք. ուզում եմ երթալ թագաւորի մօտ. Դա սիրոյ բուռն յափշտակութե է, 104 Որի թռւնդ թափը հենց նիգն է գատնում իր կործանից, Եւ կամքը մզում դէպի յուսահատ ձեռնարկութիւններ, Անզապէս ամեն կիրք այս աշխարհի մէջ,

- Որ բռնանում է մեր հօգու վըրայ: Սաստիկ ցաւում եմ:
Արդեք վերջերը նըրան որ եւ է խիստ բան ես ասել:
- O. Ու, բարի հայրի իմ, միայն, Բնապէս ինձ պատեիրել էիք,
իր նամակները յետ ուղարկեցի, 111
- Եւ թոյլ չը արւի, որ ինձ այցելէ:
- Պոլ. Հենց դա է նըրան այսպէս խենթացրել. ցաւում եմ սաստիկ,
Որ աւելի լաւ նախազգուշութեամբ եւ դատողութեամբ
Չեմ զիանել նըրան. վախենում էի 115
- Թէ նըրա կողմից դա մի քըմայք էր,
Եւ կամենում էր քեզ անբախտացնել:
- Անիծւած լինեն իմ կասկածները:
Երկինքը վիայ, այնքան յատուկ է մեր ծերութեանը
- Մեր կասկածները շատ հեռու մզել, 120
- Որքան յատուկ է զեռահաներին անխոչեմ լինել:
Դընանք միասին թագաւորի մօտ.
- Թէոք է այդ մասին նըրան լուր տրւի.
Ինչ որ ծածկելը մեզ շատ աւելի զիմացաւ կը տայ,
Քան թէ յայտնելը՝ զժկամակութիւն: 125

Պատճեն էն:

ՏԵՍՈՒՐԵՆ ԵՐԿՐՈՒԴ

Փռականարութիւն. գալիս են թիստառու, թիագունին, թուղենիրանց,
Գիլցէննէտեր են Այդառառութիւն:

- Թագ. Բարով էր եկել, սիրելի Ռազենիրանց, եւ դուք, Գիլցենշաներն:
Բացի նըրանից որ ձեր անսութեան կարուել էինք,
Թէաք ունինք նաեւ ձեր աջակցութեան.
Այս պատճառով է որ ձեզ շատապով կանչեցնիք այստեղ,
Անշուշա Համբէտի այլափոխումը լսած կը լինէք, 5

- Թաղ այզպէս առնեք. քանի որ, իրաւ, ոչ ներքին մարդը,
Ոչ էլ արտաքինն այն է, ինչ որ էր:
Թէ ինչ ուրիշ բան, բացի հօր մահից,
Զրկել է նըրան զիտակցութիւնից,
Նըրեւակայել անգամ չեմ կարող: 10
Այժմ արդաւում եմ ձեզ երկուախդ էլ,
Որ մանկութիւնից նըրա հետ մէկանդ դաստիարակւել էք
Եւ ընտանի էք նըրա ըլնութեան եւ բարք ու վարքին,
Որ բարեհամեք կադ ժամանակով զալ հանգստանալ
Մեր արքունիքում. եւ այդպէս, շնորհիւ ձեր ընկերութեան,
Նըրան հրապարեք զրուանքների, 16
Եւ օգտըւելով պատեհ առիթից, երբ հընար ընի,
Հասկանաք թէ ինչ մեզ անյայտ մի բան տանջում է նըրան,
Որին ճար անել կարողանայինք:
- Թաղ. Ազնիւ պարունեց, յաճախ ձեր մասին նա խօսք է արել, 20
Եւ, հաստատ զիտեմ, չը կայ աշխարհում երկու ուրիշ մարդ,
Որոնց աւելի նըրիւած լինի: Թէ համց է ձեզ
Այնքան սիրացիր եւ բարեացակամ լինել դէպի մեզ,
Որ մի ժամանակ հիւր մընաք մեր մօտ
Եւ մեր յոյսերի իրականացման աշխից լինեք՝ 25
Ազա ձեր այցը կը ստանայ այնքան շնորհակալիք,
Որքան վայել է մի թագաւորի բարեկիշութեան:
- Մեր. Ձեր Մեծութիւնքը՝ վեհապետական այն իշխանութեամբ,
Որ ունին մեր վրայ կարող են իրենց ահեղ համոյքը 29
Պարտազիր անել, ոչ իրեւ խնդրանք, այլ իրեւ հրաման:
Կիլլ. Բայց հնարյանդ ենք ձեզ, եւ ահա այստեղ պարտաւորում ենք
Դինել մեր բոլոր ծառայութիւնը ձեր ոտքի առաջ,
Եւ սպասում ենք ձեր հրամաններին:
- Թաղ. Շնորհակալ ենք, ազնիւ Ռողենկրանց, եւ ձեզ, Դիլզենշտերն:
Թաղ. Շնորհակալ ենք, ազնիւ Դիլզենշտերն, եւ ձեզ, Ռողենկրանց,
Եւ ինձրում եմ ձեզ իսկըն այցելեք խիստ փոխւած որդուս:
— Հէյ, եկեք, տարեք այս պարուններին որդուս սենեակը:
Կիլլ. Տայ Ասուած որ մեր ներկայութիւնը եւ ձեռնարիները

Նըրան օգտաւէտ եւ հածոյ լինեն:
Թագի. Ամէն:

Առաջնական է - Գիշեալուստերն է - Ի ժամանակականներ գնաց - Էն.

Գուլս է Պալուսոս:

- Պոլ. Ողորմած տէր իմ, մեր զեսպանները գոհունակութեամբ 40
վերագարձել են Սորվեղիայից:
Թագ. Միշտ հայր էք եղել բարի լուրերի:
Պոլ. Խակապէս, տէր իմ. Թող վեհապետը հաւասարի լինի,
Որ նըւիրում եմ հոգիս ու պարտքըս,
Մէկը՝ Ասարծուս, միւսը ողորմած իմ թագաւորին. 45
Եւ, համոզւած եմ, — եթէ ուղեղըս ընդունակ է զեռ
Վարշագիտութեան շաւզով ամեն հետք
Այսպէս անվորէպ հետապնդելու, ինչպէս առվոր էր, —
Որ ես զաել եմ Համբէտի ցաւի ստոյդ պատճառը:
Թագ. Ասա՛, ասա՛ շուտ. խիստ անհարեր եմ ընելու համար: 50
Պոլ. Նախ զեսպաններին ունինդրութիւն տւեք.
Թագ. Պէտք է իմ լուրը այս մեծ խնջոյքի պառուղը լինի:
Թագ. Դընացէք նըրանց պատւասիրեցէք, յետոյ ներս բերէք:

Գնաց - Է Պալուսոս:

- Միրելի Գերտրուդ, նա ինձ առում է թէ հասկացել է
Ըս որդու բողոք անհանգստութեան բուն խսկ աղքինը: 55
Թագի. Խակ ես կարծում եմ որ մէկ զմուառոր պատճառ կայ միայն,
Այն է, հօր մահը եւ մեր խիստ հապճեալ ամենանապը:
Թագ. Այս, բայց պէտք է նըրան լաւ մաղենք:

Մուռաց է Պալուսոս, Պալուսի հանդիպ է - Կոռնելի հոռոգ հետ:

- Ձեզ բարի գալուստ, բարեկամներս. 60
Ասա՛, Վորահմանդ, մեր Նորվեղիայի եղբօրից ինչ լուր:
Վոլ. Փոխազարձ ողջոյն եւ շատ մաղմակներ:
Մկզրից եւեթ՝ նա մարդ ուղարկեց որ դադարեցնեն
Իր եղբօրողու զըրահաւաքը, որը, կարծում էր
Թէ պատրաստում է Անհասանի դէմ: Բայց երբ ստուգեց,

Տեսաւ որ իրօք դա ուղղուած էր Ձեր Բարձրութեան գէմ։
Սաստիկ վշասցած, որ այնպէս նըրա հիւանդութիւնը,
Տկարութիւնը եւ ծերութիւնը շահագործւել են
Ձերբախարութեան հրաման արձակեց Փորաբնօրրասի գէմ։
Խոկ սա, կարմ, ասեմ, հետզանդուեց խկոյն, 70
Եւ թագաւորից խխատ յանդիմանեց,
Եւ, վերջը, երգւեց հօրեղորն առաջ, որ երբէք այլ եւ
Ձևէք չը վերցընէ Ձեր Մեծութեան գէմ։
Այս բանի վըրայ ծերուկ Նորվեզը շատ ուրախացած՝
Նրեք հազար կրօն ատրեկան ռոմիկ շնորհեց նըրան, 75
Եւ պաշտօն յանձնեց որ իր հաւաքած բոլոր բանակը,
Այնպէս ինչպէս կոյ, այժմ զործածէ Լեհաստանի գէմ,
Խնորդելով ձեզնից, ինչպէս կը տեսնէք իր այս նամակից,

Տ-Ա-Ն Հ Ն Ա Բ Ա Կ

Որ նըրա զօրքին ազատ անցք տրւի ձեր երկրի միջեց՝
Ազահովութեան եւ արտօնութեան այն պայմաններով, 80
Որոնք զբւած են այդ նամակի մէջ։

Թագ. Հաւան ենք զըրան,
Եւ պատեհ ժամի կարդալուց յետոյ պատասխան կը տանք,
Եւ կը մտածենք այդ խնդրի վըրայ։
Ձեր արդիւնաւոր ջանքերի համար շնորհակալ ենք. 84
Այժմ հանգստացէք. այս զիշեր ձեզ հետ խնդրյա կանենք։
Բարի վերադարձ։

Վ-Ա-Ն Հ Ն Ա Բ Ա Կ Հ Ն Ա Բ Ա Կ

Պոլ. Աշա այս զործն էլ յաջող վերջացաւ։
Դմ տէր վեհապետ, եւ գուք, տիրուհի,
Տըրանօրանել թէ վեհափառը ինչ պէտք է լինի,
Թէ ինչ է պարոզը եւ ինչու համար ցերեկը ցերեկ,
Գիշերը զիշեր, եւ ժամանակ՝ ժամանակ է, 90
Ար լինէք վանել զիշերը, ցերեկն ու ժամանակը։
Այժմ, քանի որ համառօտումը խօսքի հողին է,
Եւ ճապազումը՝ նըրա անդամներն ու դրսի զարդը,

Սա կարմ կը խօսեմ։ Ձեր աղջիւ որդին խելազարւած է։

Այս, խելազար կարող եմ ասել։

95

Քանի որ եթէ բռն խենիթութիւնը որակել ուղենք։

Ա՞նչ է այն, թէ ո՞ւ լինել ո՞ւ այլ ինչ, թէ ո՞ւ խելազար։
Բայց թողնենք գեռ այդ։

Թագի. Աւելի նիսիթ տուր եւ պահաս արւեստ։

Պող. Արգւում եմ, արիկին, որ բընաւ արւեստ չեմ բանեցընում։

Այս, որ նա խենիթ է, ձիշդ է. որ ձիշդ է, շատ ցաւալի է։
Նև ցաւալի է, որ այզպէս ձիշդ է. 101

Ահա մի անմիտ ջղջարանութիւն։

Բայց այդ էլ թողնենք. բընաւ չեմ ուղում արւեստ բանեցնել։

Ուրեմն ընդունենք որ խելազար է.։

Այժմը մընում է այս հետեւանքի պատճառը զանել, 105
Կամ լաւ է ասել, այս թեթեւանքի։

Քանի որ անշուշտ այդ թեթեւական հետեւանքն անդամ

Ար պատճառն ունի. մընում է ուրեմն, եւ մնացորդն այս է. . .

Լաւ ուշ գարձրեք. ես մի գուսար ունիմ։

— Ունիմ, այսինքըն քանի նա իմա է. — 110

Որ, որդիական պարտականութեամբ եւ հնազանդութեամբ,

Լաւ մոիկ տըւեք, այս բռնն ինձ տըւաւ։

Ցայց է դաւնու մէ նուհան։

Այժմ ամփոփեցէք եւ եղափացրեք։

Կարուսում է

Առ իմ երկնային, հոգեւին պաշտելի, չընաղազեղ Օֆէլիան։

Ա՞նչ անպիտան ո՛մ, հասարակ ո՛մ է, չընաղազեղ, շատ հասարակ ո՛մ է, բայց հիմա կը ըեք. այսպէս. 116

Կարուսում է

«Ի՞ր սքանչելի սպիտակ կուրծքին . . .

Թագի. Համբէտն է զրել։

Պող. Սիրելի տիրուհիս, մի քիւ սպասէք, բոլորը կասմ։

Կարուսում է

Կասկածիր աստղերի փայլնու վրայ, 120

Կասկածիր արեւի շրջելու վրայ,
Ծշմարտութեան վրայ նոյն իսկ կասկածիր,
Բայց սիրուս վրայ դումի կասկածիր:

Սիրելի Օֆէլիա, ոտանատոր զրելու մէջ անվարժ եմ. հեծեծանցներս չափաթերելու արևստոր տրած չէ ինձ. բայց որ քեզ ամեն բանից առելի եմ սիրում, օ՛, ամեն բանից առելի, հաւատա դըրան, մնաս բարով.

Ընդ միշտ բոյդ, ամենասիրելի օրիորդ, որշախ որ այս մերենան ինձ պատկանի՝

Համբէլտ :

Դուսարըս ամենայն հընազանդութեամբ ցոյց արւաւ ինձ այս-
նւ գեռ աւելին՝ Համբէլտի բարոր սիրախօսանքը,
Տէղը, ժամանակն ու միջցցները, յանձնեց ականջիս:

Թագ. Իսկ ինքն ինչպէս է այդ սէրն ընդունել:

Պոլ. Ի՞նչ կարծիք ունիք արգելօք իմ մասին:

Թագ. Որ հաւատարիմ եւ ազնիւ մարդ էք:

Պոլ. Հենց այդ կուզէի ձեզ ապացուցել: Ի՞նչ կը կարծէիք,
Եթէ այդ սէրը տեսած լինէին երբ թեւ էր հանում,
— Եւ պէտք է ասեմ, թէ արդէն ես այդ նկատել էի
Աղջիկը շասած, — Ի՞նչ կը կարծէիք, կամ ինչ կը կարծէր
Իմ այս սիրելի վեհապետուհին եւ ձեր թագուհին, 140

Թէ թղթակալի կամ զրանեցանի գերն ստանձնէի,

Կամ որտիս աշքը փակած լինէի, ըսիկ ու մնջիկ,

Կամ թէ անտարրեր նայած լինէի այս սիրոյ վրայ:

Ի՞նչ կը խորհէիք: Ոչ, ես ու զջակի գործի զիմեցի,

Եւ օրիորդիս այսպէս խօսեցի.

145

Այշխան Համբէտը թագաւորակն է, բարձր է քո աստղից.

Երրէք այդ բանը չը պէտք է լինի,,

Ենույ ես նըրան խրառներ տրւի,

Որ խոյս առյ նըրա այցելու թիւնից,

Ոչ նամակ առնէ, եւ ոչ ընծաներ.

150

Այսպէս վարւելով՝ նու իմ խորհուրդի պառուզը քաղէց:

Համեմ մերժւելով, շատ չերկարացնեմ;
 Սնթակոյ եղաւ մելամազնութեան, եւ յետոյ ծոմի,
 Եւոյ անքնութեան, յետոյ՝ թուլութեան, 154
 Սւ կամաց կամաց թեթեւմառութեան, եւ այս վայրէջքով
 Սա եկաւ հասաւ այն խենթութեանը, որից տանձում է,
 Սւ որի վըրայ ողբում ենք բոլորս:

Թագ. Այդպէս էք կարծում:

Թագ. Կարող է լինել. հաւանական է:

Պոլ. Ասացէք խնդրեմ, եղած է երրէք,
 Որ ասած լինեմ զըրականապէս «Այս բանն այսպէս է», 160
 Սւ հակառակը պատահած լինի:

Թագ. Ոչ, որքան զիտեմ:

Պոլ. (ԷՇ ԳԵՂ-ԵՆ Ե- Ա- Շ Շ Ե Վ Վ Վ Վ) Առէք այս սրանից, թէ ճիշդ չը լինի:
 Թէ հանգամանցներն առաջնորդեն ինձ:

Սո զուրա կը բերեմ, թէ Շշմարտութիւնն ուր է թաքնըւած,
 Թէսպէտ եւ երկրի արգանցի մէջն էլ ծածկըւած լինի: 165

Թագ. Ի՞նչպէս կարող ենք աւելի ստուգել:

Պոլ. Դիտէք, երբեմն ամբողջ ժամերով զըօսնում է նա
 Այստեղ, զաւթի մէջ:

Թագ. Այս, այդպէս է:

Պոլ. Մի օր այդ ժամին զուստըս նըրա հետ մենակ կը թողնեմ.
 Պէտք է դուք եւ ես մի եւ նյոն ժամին թաղնեւած լինենք
 Արրափ ետեւ, որ զիտենք նըրանց տեսակցութիւնը: 171
 Թէ ճիշդ չը լինի որ նա աղջկաս սիրահարուած է,
 Սւ հենց զըրանից խելքը կորցըրած,
 Զուր է ուրեմն որ ես պետութեան օգնական լինեմ,
 Այլ թող ագարակ եւ ապլեր սրահեմ:

Թագ. Շատ լաւ, կը փորձնիք:

Թագ. Բայց աեսէք ինչպէս իւնդն ողորմելին զայխ է որտում 176
 Մի բան կարգալէն:

Պոլ. Հեռացէք, խնդրեմ, երկուադ էլ, թողէք ես խօսեմ իր հետ:
 Քանի ու առաջարկ է ու սպառական հետու ներկայ է:
 Գալու է Համբուր, Դ բան իսրայելը:

- Պոլ. Թաղլ ալուեք, խնդրեմ, ինչպէս է արգեօք իմ բարի իշխան
Համբետը: 180
- Համ. Լաւ, վառք Ասուուծոյ:
- Պոլ. Ծանալում էք ինձ, տէր իմ:
- Համ. Շատ լաւ, դուք ձինավաճառ էք:
- Պոլ. Ու, տէր իմ:
- Համ. Արանի թէ մի ձինավաճառ ի շափ պարկեշտ մարդ լնելիք: 185
- Պոլ. Պարկեշտ, տէր իմ:
- Համ. Այս պարն, այս օրւան օրը պարկեշտ մարդ լնել՝ նշանա-
կում է տասը հազարից մէկը լնել:
- Պոլ. Իրաւ է, տէր իմ: 189
- Համ. Որովհետեւ, եթէ արեգակը մի սատկած շան մէջ որդներ է
ծնեցնում, նաև, որ սատւած լնելով հանգերձ լէշ է համ-
րուրում... դու աղջիկ ունիս:
- Պոլ. Այս, տէր իմ:
- Համ. Զը թռողնես որ արեւի տակ ման գայ. յղացումը օրշու-
թիւն է, բայց ոչ թէ այսպէս ինչպէս աղջիկը կարող է
յղանալ... բարեկամ, աչքդ բաց արա: 196
- Պոլ. (Ա-Ն-Յ-Ն) Ի՞նչ է ուզում ասել. էլի աղջիաս երգն է երգում.
բայց սկզբում չը ճանաչեց ինձ. ասաց ձինավաճառ եմ. բանը
բանիցն անցել է. իրաւ է որ երիտասարդ ժամանակս իմ
զիլիսիս էլ սէրը շատ փորձանք բերեց. քիչ էր մնացել հէնց
այս վիճակին ընկնէի. նորէն խօսեմ հետը: — Ի՞նչ էք կար-
գում, տէր իմ:
- Համ. Բառեր, բառեր, բառեր:
- Պոլ. Նիւթն ի՞նչ է, տէր իմ:
- Համ. Ի՞նչ բանի նիւթը: 205
- Պոլ. Ձեր կարգացածի նիւթը, տէր իմ:
- Համ. Զրպարտութիւններ, պարն. որովհետեւ այս երգիծաբան
թշւառականն ասում է այստեղ, թէ ծեր մարդիկ սպիտակ
մօրուք ունին, եւ ինձուու երես, թէ նրանց աչքերից մի
տեսակ թանձր ուետին կամ սալորենու խէժ է ծորում, թէ
ուղեղի մեծ պահառութիւն ունին, միանգամայն շատ թշւ

- զիստեր։ Թէեւ այդ բոլորին ես շատ զօրեղապէս եւ կարողապէս հաւատում եմ, պարոն, բայց եւ այնպէս կարծում եմ, թէ պարփեշտութիւն չէ այդ տեսակ բաները զրի առնել. որովհետեւ գուք էլ, պարոն, մի որ իմ տարիքին կը հանեք, եթէ խեցքեանի նման կարողանայիք դէպի յետ զնալ։ 216
- Պոլ. (Ը-անչիւն) Թէեւ խենթութիւն է, բայց մեթոդ կոյ մէջը։ — Տէր իմ, չէք կամենում մի քիւ այս օդից դուրս զնալ։
- Համբ. Դէպի զերեղման։ 219
- Պոլ. Ծիչդ է, զերեղմանը օդից դուրս է։ (Ը-անչիւն.) Խնչպէս իմաստացից են երրեմն իր պատասխաները. մի բախտ է զա, որ յաճախ վիճակում է խեցագարութեան, այն ինչ զատուցութիւնը եւ ողջմոռութիւնը չէին կարող այնպէս յաջող յըանալ։ Թօղնեմ զնամ, եւ մի ճար մտածեմ որ սրան եւ աղջկաս իրարու հանգիստեցնեմ։ — Յարգելի տէրս, ամենայն խոնարհութեամբ հրաժեշտ եմ խնդրում։ 226
- Համբ. Ունեւ չէիք կարող խնդրել ինձրել ինձնից, պարոն, որ աւելի յօժարութեամբ տայից, բացի իմ կեանքից, բացի իմ կեանքից, բացի իմ կեանքից։
- Պոլ. Մնաք բարով, իշխան։ 230
- Համբ. Ա՛յս այս ձանձրացից զառաման յիմարները։
- Գ-Ա-Հ-Ն- Ո-Ա-Հ-Ն- Ե- Գ-Ի-Շ-Ի-Ն-Մ-Ի-Ն-։
- Պոլ. Խշխան համբէտին էք վիճուռում։ ահա այնտեղ ։։
- Բող. Ասուած ձեզ հետ, տէր իմ։
- Պ-Ա-Հ-Ն- Դ-Ա-Հ-Ն- Ե- Վ-Ա-Ն-։
- Գիլ. Յարգելի իշխան։
- Բող. Ամենասիրելի տէր իմ։ 235
- Համբ. Բարեւ, պատասկան բարեկամներ. ինչպէս ես, Դիլզենշտերն։ Ա՛հ, Ռոգենկրանց. ինչպէս էք, աղելք։
- Բող. Աշխարհի անշան զառամերի պէս։
- Գիլ. Բախտաւոր նրանով, որ շատ բախտաւոր չենք։ Բախտ դիմարկի մէտեղի կոճակը չենք։ 240
- Համբ. Ու էլ նրա կոչին ներբանը։

- Ռող. Ու ել այն, տէր իմ։
 Համ. Ուրեմն աշբարհ էք նրա գոտու մօտեցրում, կամ թէ նրա
 շնորհի կենարունում։
- Գիլ. Ծիչդ է, շատ մօտերիմ ևնք նրա հետ։ 245
 Համ. Բախտակի թ ազնն մասերի հետ։ շատ միշդ է, նա հօ պառնիկ է։
 Ի՞նչ լուր։
- Ռող. Ուինչ, տէր իմ. այն միայն, որ աշխարհը պարփեշտացել է։
 Համ. Ուրեմն վերջին գատաստանը մօտեցել է. բայց մեր լուրը
 միշդ չէ. թոյլ տէք աւելի որոշ հարցնեմ. բախտին ի՞նչ
 վատութիւն էք արել, որ նա ձեզ բանդ է ուղարփել այստեղ։
 Գիլ. Բանդ, տէր իմ։
- Համ. Դանեմարդան հօ բանդ է։
- Ռող. Ուրեմն աշխարհն էլ մի բանդ է։ 254
 Համ. Եւ օրինաւոր բանդ, որի մէջ կան զանաշան արգելանցներ,
 փակարաններ եւ նկուղներ. իսկ Դանեմարդան ամենէն վատերից
 մէին է։
- Ռող. Մենք այդպիս չենք մօտածում, տէր իմ։
 Համ. Լաւ, ուրեմն ձեզ համար բանդ չէ. որովհետեւ աշխարհում
 ոչ ըստ կայ, ոչ վատ. մեր մարդին է այդպիս թւում. ինձ
 համար բանդ է։ 261
- Ռող. Ուրեմն ձեր փառախրութիւնն է որ Դանեմարդան ձեզ հա-
 մար բանդ է զարձնում. շատ անձակ է նա ձեր հոգու համար։
 Համ. Ասուած իմ, ես կարող էի մի ընկուզի կեղեւի մէջ անզամ
 տեղաւորել, եւ ինքս ինձ անհուն ամիեղերի թագաւորը հա-
 մարել, միայն թէ այնպիս վատ երազներ չը տեսնէի, ինչ-
 ուիս այժմ։
- Գիլ. Եւ այդ երազները փառախրութիւնն են, որովհետեւ փառա-
 սիրութեան բուն իսկ էութիւնը երազի ստերն է սոսկ։
- Համ. Երազն ինքը ստեր է միայն։ 270
 Ռող. Ծիչդ, եւ փառախրութիւնը այնքան թեթեւ եւ օգային
 բան եմ համարում, որ կարող եմ ասել թէ նա ստերի
 ստերն է միայն։
- Համ. Ուրեմն մեր մաւրացիաններն իրական մարմիններ են, եւ մեր

թագաւորներն ու կոփողավիկը հերոսները՝ մռւրացիանների սուերները։ Զէք ուղում արքունիք զնանք, որովհետեւ, միջըն առած, չեմ կարողանում պարզ մտածել։

Ռոզ. Եւ Դիլը. Ժառայ ենք ձեզ։

278

Համբ. Քառ լիցի. չեմ ուղում ձեզ միւս ծառաներիս կարգում դասել. որովհետեւ, անկեղծ խօսելով, սարսափելի վատ սպասարկներ ունիմ. այլ, բարեկամութեան ծեծւած ճանապարհով զնանք. Բնչու էք եկել Հայինոր։

Ռոզ. Ձեզ ացի ենք եկել, տէր իմ, ուրիշ բան չը կայ։

Համբ. Եւ Բնչը չքաւորն եմ ես, որ շնորհակալութեան մէջ անզամ աղքատ եմ. լաւ, շնորհակալ եմ. բայց միջը, սիրելի բարեկամներ, իմ շնորհակալութիւնները մէկ սեւ փող շարժեն։ Ասացէք, ձեզ յատկապէս չե՞ն կանչել. բնքնակամ էք եկել. ազատ ացելութիւն է աս։ Հայզէ, անկեղծ վարեցէք Բնձ հետ, հայզէ, հայզէ. խօսեցէք։

Դիլը. Բնչը ասենք, տէր իմ։

290

Համբ. Բնչ որ ուզէք, բայց ոչ խնդրից դուրս։ Ձեզ յատկապէս կանչել են, զիտեմ. եւ ձեր աշքերի մէջ մի տեսակ խոստովանութիւն կայ, որ ձեր անկեղծութիւնը չէ կարողանում թազցնել. հաստատ զիտեմ որ բարի թագաւորը եւ թագուհին մարդ են ուղարկել եւ ձեզ կանչել են։

295

Ռոզ. Բնչը նպատակով, տէր իմ։

Համբ. Այդ զնաք պէտք է Բնձ ասէք. բայց երդւեցնում եմ ձեզ յանուն մեր ընկերութեան, յանուն մեր պատանեկան մռերմռւթեան, յանուն մեր յարատեւ սիրոյ, էլ Բնչը ասեմ, յանուն աւելի սուրբ բաների, որոնցով իմ ըեղից աւելի նպատակն ընդուն կարող էք ձեզ երդւեցնել, անկեղծ ու շիտակ եղէք Բնձ հետ, արգեօք կանչել են ձեզ, թէ ոչ։

Ռոզ. (Ը-անչին գիլլենը ըստ շնչին) Բնչը ես ասում։

Համբ. (Ը-անչին) Հայ, Հայ. պէտք է ուրեմն աշքս ձեր վրայ բաց պահեմ։ (Բաշչէ) — Եթէ սիրում էք Բնձ, մի թազցնէք։

305

Դիլը. Այս, տէր իմ, կանչել են մեզ։

Համբ. Թէ Բնչու համար, այդ ես կասեմ, այնպէս որ ես ձեզ կան-

խեղով՝ դուք ոչ մի զարդանիք յայտնած չէք լինի, և ձեր զարդանապահութիւնը զեսի թագաւորը եւ թագուհին մի փետրի չափ անդամ թերացած չի լինի: Վերջերս չը զիտեմ ինչ պատճառապվ ես կորցրել եմ ուրախ արամազրութիւնն, բոլորպվն բաց եմ թողել սովորական մարդանքներս, եւ այնպէս մերամսաղձուա եմ դարձել, որ այս հյաշակապ կառուցւածքը, երիկիրը, ինչ մի ամայի հրաւանդան է թուում: այս սրանչելի ամայնովանին, եթերքը, նայեցէք, մեր զիխին կախւած այս հրաշակի երինակամարը, այս վեհաշուք ձեղունը՝ ուկի կայծերով՝ նախաշած՝ այս բոլըրը աշքիս ուրիշ բան չէ, եթէ ոչ զարշ ու ժահահոս գործացների մի համազրութիւնն: Անչ հրաշակերտ է մարդը. որչափ աղջիւ է նրա զատողութիւնը. որչափ անասահման են նրա ընդունակութիւնները. կազմաածքը եւ շարժումը որչափ բարեհեւ եւ հիմանափ: կաց ու նիստով կարծես մի հրեշտակ: խոհականութեամբ, կարծես մի աստած: աշխարհի զեղեցկութիւնը. կենդանիների կատարելատիպը. այդ բոլըրով հանդերձ ինչ է իմ աշքիս հողի այդ զերագոյն զուածքը. մարդը չէ հիացնում ինչ. ոչ, ոչ էլ ինը, թէեւ քմծիծաղովդ երեւի այդ ես ուզում ասել:

Ուոզ. Տէր իմ, այդպիսի բան մոքովս էլ շանցաւ:

Համ. Ուրեմն ինչու ժպտացիր, երբ ասացի թէ մարդը ինչ չէ հիացնում:

Ուոզ. Տէր իմ, մասածեցի որ եթէ մարդը ձեզ չէ հիացնում, ինչ պառ օրաց ընդունելութիւն են գանձը և մեր մօտ այն զերասանները. մենք հիմա մանապարհին հանդիպեցանք նրանց: զայիս են այստեղ իրենց ծառացութիւնը առաջարկելու:

Համ. Թագաւորի զերակատարը ըստ ընդունելութիւն կը գտնէ. նորին վեհափառութիւնը ինձնից պարտ ու պատշաճ առւըք կը ստանայ. բախտականզիր ասպետը իր սուրն ու վահանը ի զուր գործի չի դնի. սիրահարը ձրի չի հառաջի. մելամաշանդառին համբերութեամբ թոյլ կը տրեի, որ իր զերը վերջացնէ. միմուը զիւրազրդիս թոքեր ունեցազներին բաւ կը ծիծաղեցնէ: եւ տիկինը իր սրտի ուղածն աղատողէն կատէ. այսպէս, ան-

- Առաջ.** յանդ ոտանաւորի ոսքը կազ կը մնայ: Ի՞նչ գերասաններ են: Նրանք, որ ձեզ այնքան դուր էին դալիս. քաղաքի գերասանները:
- Համբ.** Ի՞նչ է պատահել, որ հիմա նրանք շրջում են. չէ՞ որ կայսեն բնակութիւնը աւելի ձեռնուու է թէ համբաւի տեսակիտից, թէ շահի կողմից: 346
- Առաջ.** Կարծեմ թէ նրանց վրայ դրւած արգելքը վերջին նորամուծութեան պատճառով է:
- Համբ.** Արգելք նրանք նոցնչափ զնահատած են, որչափ երր ես քաղաքում էի. յաճախող շատ է լինում: 350
- Առաջ.** Ծիչը ասած, ոչ այնքան:
- Համբ.** Ի՞նչ է պատճառը, ժանդրանել են, ի՞նչ է:
- Առաջ.** Ոչ, նրանց գերակատարութիւնը իր սովորական բարձրութեան վրայ է. բայց հիմա, տեր իմ, մի խումբ երեխաններ են թուխաց դուրս եկել, նոր ձուից ելած բաղէի ճուռեր, որոնք մեկ զըսի գոռում գործում են, եւ հասարակութիւնը բռնակալորեն ծափահարում է հենց զրա համար. նրանք են այժմ օրւայ նորութիւնը. եւ նրանք այնպիս վատարանում են հասարակ բնմերը, — այդպիս են կուռում սովորական թատրոնները — որ շատ ուրի կրողներ այսօր վախենում են սազի փետուրից, եւ չեն համարձակում այդ թատրոնները յանախել:
- Համբ.** Խսկագես երեխաններ են նրանք. ով է նրանց պահում, ով է ծափակերը վճարում. միթէ այնքան ժամանակ միայն պիտի խաղան, որքան որ երգել զիտեն. իսկ յետոյ, երր իրենք էլ մեծանան եւ սովորական գերասաններ դառնան, — ինչ որ շատ հաւանական է, եթէ ապրուատի ուրիշ միջոց չունենան — չէ՞ն ասի թէ, այդ զրողները նրանց ի՞նչ մեծ վնաս են հասցըել, նրանց ստիսպելով իրենց իսկ ասպազայի գէմ բարրառել: 369
- Առաջ.** Ծիչը ասած, երիտ կողմերն ել շատ ազմուկ հանեցին, իսկ ժողովուրդը մեղք չէ համարում նրանց իրարու գէմ զրգուել. մի ժամանակ կար, որ ոչ ոք թատրոնի փող չէր տայ՝ եթէ բանաստեղծ ու գերասան բանը բռունցքի ցը հասցնէին:

Համ. Կաղելի բան է:

Ռող. ԱՇ, այնքան է պատահել որ զանգեր են ջախջախուել: 375

Համ. Եւ այդ տղերը դործը առաջ են տանում:

Ռող. Եւ ինչպէս, աէր իմ: Հերկուչոյն էլ իր թեռան հետ միասին:

Համ. Զարմանալի չէ, քանի որ հօրեղացը է այժմ: Դանեմարքարի թագաւորը. եւ նոյն մաշդիկ որ հօրս կենցանութեան ժամանակ հօրեղացը վրայ բերան էին ծռում, հիմա նրա մի մանրանկարի համար քանն, քառասուն, յիսուն, նոյն իսկ հարիւր դռւկատ են տալիս: Խամը, ահա մի բան որ բնականից դռւրս է, եթէ միայն փիլիսոփայութիւնը բացատրել կարենար:

Փառքի հովանու բարեկար:

Գիլլ. Դերասաններն են: 384

Համ. Պարոններ, ուրախ եմ որ եկել էք լըսինոր: Եկէք, ձեր ձեռքը. բարի գալուստ մազթելը քաղաքավարութեան ձեւ ու ձև է. թոյլ տւէք որ ես էլ ձեզ հետ նոյն ձեւով վարսիմ. եթէ ոչ, իմ վարմանքը զերասանների հետ, — որ կանխալիս ասեմ, պէտք է արտաքուստ շատ քաղաքավար լնի, — կարող է աւելի սիրալիք թւալ քան թէ ձեզ հետ: Բարոն էք եկել, բայց հօրեղացը-հայրս, եւ հօրեղորիննացը սիսալել են:

Գիլլ. Ո՞չչի մէջ, տէր իմ:

Համ. Ես այն ժամանակ միայն խելազար եմ, երբ քամին հիւսիս հիւսիս-արեւմուաք է փւում: իսկ երբ հարաւային է՝ կարող եմ բազէն ճայից զանազանել: 396

Նոյնիշ քունք է ուղանիսուս:

Պոլ. Բարեւ ձեզ, պարոններ:

Համ. Լիկը, Գլքենշանը: (Ուուննուանչին) զու էլ նոյնպէս. ամեն մէկ ականջիս մէկ լսող. այդ մեծ երեխան, որ տեսնում էք այսեղ, խանձարուրից զեռ զուրս չէ եկել: 400

Ռող. Գուցէ երկրորդ անգամն է խանձարուրի մէջ ընկել. առաջ են, ծերերը երկրորդ անգամ երեխայ են զառնում:

- Համբ. Կարող եմ գուշակել որ նա հիմա կը զայ գերասանների
զալուստն ինձ յայտնելու։ Այս, պարօն, իրաւունք ունից.
երկուշարթի առաւտոն էր. Ֆիշդ է, այդպէս էր։ 405
- Պոլ. Տէր իմ, ըստ ունիմ ձեզ հաղորդելու։
- Համբ. Տէր իմ, ըստ ունիմ ձեզ հաղորդելու։ Երբ Ռուսիուս գե-
րասան էր Հռովմաւմ։
- Պոլ. Դերասաններն եկել են, տէր իմ։
- Համբ. Բըզ, բըզ... 410
- Պոլ. Պատուիս վրայ։
- Համբ. “Եւ յետոյ եկաւ ամեն դերասան իր էշի վրայ։”,
- Պոլ. Աշխարհի ամենալաւ գերասաններն են, թէ ողբերդութեան
համար, թէ կատակերգութեան, թէ պատմութեան, հովւեր-
գութեան, հովւերգա - զաւեշտական, պատմա - հովւերգական,
ողբերգա - պատմական, ողբերգա - զաւեշտա - պատմա - հովւեր-
գական, տեսարան անբաժանելի, կամ քերթւած անսահ-
մանափակ։ Մենեկան նրանց համար շատ ծանր չի լինի, ոչ
էլ Պլատոնը՝ շատ թեթեւ։ Թէ կանոնաւորութեան օրէնքի
կողմից, թէ ազատութեան տեսակէտից՝ որանց նմանը չը կայ։
- Համբ. Մը Յեփիթայէ, զատաւոր նորայէլի, ինչպիսի գանձ ունեիր։
- Պոլ. Ի՞նչպիսի գանձ ուներ, տէր իմ։
- Համբ. Հը,
- “Մի սիրուն աղջիկ, եւ որիշ ոչինչ,
Մի աղջիկ որին սաստիկ սիրում էր։” 425
- Պոլ. (Ը-Ե-Ն-Հ-Ն) Ելք աղջկան վրայ։
- Համբ. Ծիշդ չ'մ առում, ծերուկ Յեփիթայէ։
- Պոլ. Եթէ ինձ Յեփիթայէ կույք, տէր իմ, ապա մի աղջիկ ունիմ,
որին սաստիկ սիրում եմ։
- Համբ. Ու, այդ չէ հետեւում։ 430
- Պոլ. Ուրեմն ի՞նչ է հետեւում, տէր իմ։
- Համբ. “Եւ վիճակն ընկաւ Աստուծոյ կամքով,
Մնացածը զիսէք,
- “Եւ այնպէս եղաւ, որ պէտք է լինէր։” 434

Շարունակութիւնը կը դանէք “Սրբազն երգերին, առաջին շարքի մէջ, որովհետեւ, տեսէք, խօսիս կարծումը գալիս է:

Դայս էն այս հինգ դէրուուն:

Բարով էք եկել, պարաներ. առենքդ էլ: Ուրախ եմ ձեզ առաջ տեսնելուս. բարով էք եկել, սիրեցի բարեկամներ: Այս, իմ հին բարեկամ. մեր վերջին հանգիստումից ի վեր երեադ ծովաւորել է. ըլ լինի թէ եկել ես Դանեմարդա ինձ հետ մօրուք մօրուքի տալու: Խակ դռ, սիրեցի օրիորդ եւ տիկին, վերջին անգամ քեզ տեսնելուցա ի վեր ձերդ տիկնութիւնը աւելի է մօտեցել երինքին, մի բարձր կրունկի չափով: Տայ Աստևած, որ ձայնդ, ոչ - բանուկ ոսկու պէս, օղակից ներս նաքած ըլ լինի: Հայրէ, Պրանսիստիցի բազէ-պանների պէս անենք. ինչ որ տեսնեզ, խօսյն վրան յարձակինք. հէնց խօսյն մի մենախօսութիւն. տեսնենք, տաղանդիցդ մի նմուշ տուր մեզ. Հայրէ, մի ազգու մենա-խօսութիւն:

Ա. Դէք. Ի՞նչ մենախօսութիւն, աէր իմ:

450

Համ. Մի անգամ ինձ համար մի բան արտասանեցիր, որը երրեկ չէ ներկայացւել. կամ եթէ ներկայացւել է, մէկ անգամ միայն. որովհետեւ, որքան յիշում եմ խաղը ամբոխին դուր չեկաւ. խավիար էր խուժանի համար. բայց իմ կարծիքով, նյոյնէս եւ ուրիշների կարծիքով, որոնց զատողութիւնը այդ բաներում աւելի բարձր է իմինից՝ մի սքանչելի խաղ էր դա, ըստ զատաւորած տեսարաններով, նյոյնքան բնական, որքան նարտարութեամբ կազմած: Յիշում եմ, մի մարդ առում էր, թէ առղերի մէջ թունդ համեմենը ըլ կային նիւթը համավցնելու համար, ոչ էլ ոճի մէջ մի բան, որով կարեցի լինէր հեղինակին մեջադրել, թէ աղւետականութիւն է բանեցրել. այլ, առում էր, զա մի պարփեշ մէթոդ էր, նյոյնքան առաջ, որքան համելի. աւելի սիրուն քան թէ յար-դարուն. մի հաւաած կար մէջը, որ ինձ յատկապէս կուր եկաւ, և նէտասի պատմութիւնը Դիցոնին, եւ մանաւանդ այն

իտորը, ուր Պրիամի սպանուելն է պատճեմ։ Եթե յիշում
ես, սկսիր այս տողից, տեսնեմ, տեսնեմ...

Խուամազ Պիւռնոսն, նա որ Հիրկանեան գազանի նման,
Չէ, այդպէս չէ, սկսում է “Պիւռհոսով”։ 469

Խուամազ Պիւռնոսն, նա, որի գինքերն այնպէս սեւ էին
Բնշպէս խորհուրդը, եւ նըման էին այն մութ գիշերին,
Երթ կուշ էր եկել շարադիտ ծիռո որովայնի մէջ,

Այժմ իր սոսկաբեր եւ սեւ երեսը

Աւելի դժափի թոյրով է օծել.

Դվիսից մինչեւ ոտք նա ալ է նիմա. 475

Անոելի կերպով բռոսոր ներկըւած

Հայր ու մայրերի, ուստր ու դուստրերի Շապաղ արիւնով,
Որ փողոցների բոցերից եփել եւ խորովել էր,

Այն փողոցների, որ իրենց տիրոջ սպանութեանը
Բռնակալաբար լոյս էին տալիս, դըմոխային լոյս։ 480

Կատաղութիւնից եւ բոցից կարմրած,

Մակարդաւած արեան շաղախով օծւած,

Աշքերը նըման կարկերանների,

Դիւային Պիւռնոսն այժմը վնտուում է ծերուկ Պրիամին։

Դէհ, շարունակիր։ 485

Պոլ. Աստւած Վայ, տէր իմ, շատ լաւ արտասանեցիք, լաւ շեշտով
եւ շատ օրինաւոր։

Ա. Դեր. Եւ զըտաւ նըրան։ Պրիամ կուում է Հէլլնների դէմ,

Բայց իր զարկերը շատ կարծ են զալիս. Նիսաւորց սուրը,
Բազկին աննազանդ՝ մընում է այնտեղ, ուր վար է իջում։

Պիւռնու վազում է Պրիամի վըրայ, անհաւասար զոյդ. 491
Կատաղութիւնից հեռու է զարկում։

Բայց իր զոռ սրբի հողմից ու սոյլից

Անջիղ նահապեան ընկնում է զետին։

Անզայ հիփոնն զգում է կարծես անզութ հարւածը, 495

Եւ իր բոցավառ զրուսը թեքելով մինչեւ հիմունքը՝

Անոելի ճայթով Պիւռնոսի ականջը սոսկացնում է.

Եւ ինչ, իր սուրը որ ցած էր իշում

Այս պատկառելի ծերուկ Պրիամի կաթնաթուր զլիսին,
Կարծես մընսում՝ է օղի մէջ զամած.

500

Ահա, նկարւած քռնակալի պէս՝ Պիտոնու կանգնած է,
Եւ որպէս չէզոր սեփական կամքի նւ զործի միջնէ՝
Անզործ կեցած է:

Բայց ինչպէս յաճախ տեսնում՝ ենք որ մեծ փոթորկից առաջ
Լուս է երկինքը, ամզերը՝ հանդարտ, հողմերը՝ անձայն,
Եւ երկրագունտը այնպէս անշշուկ ինչպէս Մանն ինքը, 506
Եւ մէկ էլ յանկարծ Ծայթուն որոտը պատռում՝ է օղը,
Նոյնպէս Պիտոնոսի զաղարից յնտոյ՝

Զարթնած վրբէցը դրդում՝ է նըրան կրկին դէպի զործ:
Նըրբէք Կիլլովներն իրենց միւրմերով շը կռանեցին 510

Մարսի զըրանը, որ դարրընած է անմաշ յափտեան,
Այնպէս անխընայ, ինչպէս Պիտոնոսի արիւնոտ սուրը
Այժըմ զարկում՝ է Պրիամի զլիսին:

Թո՛ւն, թո՛ւն, պոռնիկ բախտ: Ո՛վ դուք աստածներ,
Առէք նըրանից համախմբօրէն իր զօրութիւնը, 515
Զարդուիշոր արէք իր անսի օղերն ու շառափղներն,
Եւ զլտորեցէք կըլոր առանցքը երկնքի լնոնից
Մինչեւ դեւերի թընակարանը:

Պոլ. Շատ երկար է: 519

Համ. Կ'ուղարկենք սափրիչի մօտ մօրուքիդ հետ միասին: — Շարու-
նակիր, խնդրեմ. սրան մի դաւեշտ է պէտք, կամ մի լիտի
պատմութիւն, թէ ու քունը կը դայ. շարունակիր. հասիր
Հէկուրին:

Ա. Դեր. «Բայց անադ, ով որ տեսնէր թագունուն զլուխը փաթաթած:»

Համ. «Թըուխը փաթաթած:» 525

Պոլ. Խնչ լաւ է ասել, «զըուխը փաթաթած:»

Ա. Դեր. Որ ոտնաքորիկ վեր ու վար վազում, եւ սպառնում՝ էր
իր կուրացընող արտասուբներով մարել քոցնը,

Մի լաթի կտոր այն զլիսի վըրայ, 529

Ուր մի թիշ առաջ իր թազն էր շողում. պատմումանի տեղ՝
Նըրկունքից մաշած զիստերի վըրայ մի վերմակ ծըզած,

Որ խումապի մէջ հազի էր գտնէ, ով որ տեսնէր այս,
Թունալից լեզով անփրաւ բախտի իշխանութեան դէմ
Դաւաճանութեան վօնիո կ'արծակէր.

534

Եւ, անշուշտ, եթէ աստւածներն իրենք ներկայ լինէին
— Միայն թէ նըրանք անզգայ ըմիննն մարդկային ցափն —
Նըր ՀՀկուր տեսաւթէ ինչպէս Պիւռնու ժանտ զւարձութեամբ,
Յօշում՝ էր սըրով նըրա ամուսնի ամնն անդամը՝

Այն յանկարծակի պղոթկացող միշը, որ նա արծակեց
Նոյնիսկ երկնքի հրավառ աշքերից ցող կը թորեցնէր, 540
Եւ աստւածներին կիրք կը ներշնչէր:

Պոլ. Մէկ աեսէք բնադիս գցնը թռել է, աշքերը թռել են: —
Բաւական է, խնդրեմ:

Համ. Լաւ է. Ֆանցորդը մի ուրիշ անգամ արտասանել կը տամ:
(Պաշտոնական) Սիրելի տէր իմ, ինդրեմ հոգ տանէք որ
այս դերասաններին լաւ բնակարան տրուի: Հասկանում էք,
պէտք է սրանց հետ լաւ վարւիլ, որովհետեւ սրանք
ժամանակի խոտացումը եւ համառօտ տարեգրութիւնն են.
աւելի լաւ է մահից յետոյ վաստ ասականազիր ունենաք,
քան թէ կենդանութեան ժամանակ սրանց կողմից վաստ յի-
շատակում:

551

Պոլ. Տէր իմ, ես նրանց կը հիւրափիրեմ իրենց արժանիքի համեմատ:

Համ. Մէծ բան կանես. մարդ Աստուծոյ, շնոր աւելի լաւ. եթէ
ամեն մարդու հետ իր արժանիքի համեմատ վարւինք՝ ով
զերծ կը մնայ մարակւելուց. վարւիր նրանց հետ քո պատուի
եւ քո մեծութեան համեմատ. որքան նրանք աւելի անար-
ժան լինեն, այնքան քո բարութիւնը աւելի գովելի կը դառ-
նայ: Ներս տաք նրանց:

Պոլ. Նիկէք, պարոններ:

559

Գնացէք նրա հետ, բարեկամներ. վազը կը տեսնենք ձեր ներ-
կայացումը:

Պաշտոնական իշխանութեան բառը ու գումար,
Բայց Ա. Դեշնունից:

Լոիր, իմ հին բարեկամ։ կարող էք սԴանդագոյի Սպանութիւնը, խաղալ։

Ա.Դեր. Այս, տէր իմ։ 564

Համ։ Լաւ, վաղը զիշեր ներկայացրէք. կարող ես, եթէ պէտք լինի, տասներկու կամ տասնորդեց տաղից բազիցած մի հառած, որ ես կը զրեմ, անզիր անել եւ մէջը զետեղել. կարող ես, չՈ։

Ա.Դեր. Այս, տէր իմ։ 568

Համ։ Լաւ, առ այժմ զնա այդ պարոնի հետ. նայիր, չը լինի թէ զրան ծաղրէք : (Ա. Դէքառուն դուրս է գնում) Սիրելի բարեկամներ, ցըտեսութիւն մինչեւ այս զիշեր. բարով էք եկել Հըմինոր։

Ողոք. Աղնին տէր։

Համ։ Ահ, զնաք բարով։ (Ա. Առաջ է - գիշեր. դուրս է գնում) Այժմո՞ւ մենակ եմ։

Օհ, ինչ սինլքոր եւ ինչ զիւղացի մի սորուկ եմ ես։ 575

Անրընական չՈ, որ այս զերասանը,

Միայն մի վէպով, մի բուռն կրքի սոսկ երազումով կարենայ հօգին այնպէս ենթարկել իր յղացումին,

Որ ըսկ իր մաքի գործելու շնորհիւ զէմքը գունատիփ,

Արցունք զայ աշքին, երեան ազլայրի, ձայնը կերպերի, 580

Իր ամբողջ կազմը համապատասխան իր յղացումին.

Եւ այս բոլորը ոչչին համար, Հեկուրին համար։

Հեկուր նրա ինչն է, կամ նա Հեկուրի,

Որ նրա համար արտասուք թափէ։ Ապա ինչ կ'աներ,

Եթէ նա կրքի այնպիսի պատճառ, զրդիչ ունենար, 585

Անզարէս ես ունիմ. բեմը կ'ողջոքէր իր արտասուքով,

Հասարակութեան ունիր կը պատռէր սոսկացից խօսքով,

Յանցաւորներին կը խենթացընէր,

Եւ անմեղներին կը զարհուրեցնէր,

Անտեղեակներին կը շշմեցնէր, այս, եւ նոյնիսկ 590

Աչք ու ականջի ունակութիւնը կը խառնաշխոթէր։

Խոկ ես, թանձրամիտ եւ ցեխահօգի թշշառականը,

Հարում, մաշում եմ, եւ մտամոլոր խեղճ Զոնի նըման։

Անփոյթ իմ գատին՝ ոչ մի բան ասել չեմ կարողանում։
Շհ, ոչ իսկ ի սէր մի թազաւորի, որի զշյքի գևմ, 595
Որի կեանքի զէմ այնպէս զիւային ոճիր է զործւել։
Վախիստ եմ, ինչ է, ով է ուզում ինձ սրբիկաց կանչել,
Գանզըս ջախնախել, մօրուքըս փետակել զարկել երեսին,
Ծիթըս արօրել, սուտըս յետ կոխել կոկորդիս մէջը,
Մինչեւ թռքերըս. ով է անում այդ. 600

Հա, այդ բոլորին կը հանգութէի.
Քանզի անպատճառ ես ազաւու լեարդ պէտք է ունենամ.
Պէտք է որ ընդ որ ընի իմ մէջ,
Քանի որ այսքան անիրաւումը չէ գառնացնում.
Այլապէս, վազուց այդ սրբիկացի փորոտիքներով 605
Օզի ցիներին կը զիրցընէի։
Այ զու արինունշու, պազշնս սրբիկաց,
Անխօդք, անօրէն, անանոն սրիկաց,
Շհ, վըրէմ . . .

Ի՞նչ աւանակն եմ. ինչ քաջութիւն է, 610
Որ ես զաւակըս մի սպանուած հօր,

Որին անգազար երկինք ու երկիր ի վրէմ են կանչում,
Մի բոզի նըման իմ սրտի մաղձը բառերով թափեմ,
Հայհոյանք անեմ մի պոռնիքի պէս, մի աղախնի պէս:
Թռէհ, թռէհ. ամօթ ինձ: Կէհ, զործիր, ուղեղ: 615
Հըմ. ես ընել եմ որ յանցազործներ, թատրոնում նստած,
Լաւ ներկայացւած մի տեսարանից այնպէս ցնցւել են,
Որ իրենց ոմիրն իրենք յայտնել են։
Սպանութիւնը, թէեւ անլեզու,

Հրաշախօս թքով արտայատում է: 620
Պէտք է այս նորեկ զերասաններին հօրեղքօրս առաջ
Մի բան խաղալ տամ, որ նըման լինի իմ հօրըս մահւան.
Իսկ ես կը նայեմ նըրսա աշքերին, վերքը կը խառնեմ:
Եւ ցնցւի թէ չէ զիսեմ ինչ կանեմ:
Իմ տեսած ողին գուցէ գեւն բնքն է. 625
Եւ յաճախ գեւը զըրաւիչ մի ձեւ կարող է առնել.

Այս, եւ զուցէ օգուտ քաղերով իմ թուլութիւնից
Եւ մերսմազդիկ բնաւորութիւնից,
— Եւ նա այսպիսի ողբների վրայ շատ զօրաւոր է —
Մըրրցնում է ինձ, որ զըժոխային մեղքի մէջ չգլ։ 630
Աւելի հաստատ հիմքեր պէտք են ինձ,
Եկրիստոսութիւն է այն որոզայթը,
Որով կը բռնեմ արքայի խիզը։

Դաստիարակութիւն



ԱՐԱՐԻԱԾ ԵՐՐՈՐԴ

ՑԵՍԵՐԸՆ ԸԹԵԶԻՆ

Մի սենեակ դզձափռմ.

Դաշիս և թագաւորը, թագուհին, Պոլոնիուս, Յժէլիս,
Բողէճիրանց և Գիլյանցտերմ:

Թագ. Զէք կարող արդեօք ոչ մի գարձւածքով մի կերպ հասկանալ,
Թէ բնու է նա սարքել այս բոլոր իրարանցումը,

Իր հանդիսա կեանքը այսպէս բրտօրէն խռովեցնելով
Այս աղմբայցը եւ վտանգարից խելագարութեամբ :

Ռող. Խռառվանում է թէ նա իր միտքը ցրւած է զգում, 5
Բայց ինչ պատճառից, ոչ մի պայմանով չէ ուզում յայտնել :

Գիլլ. Եւ թոյլ չէ տալիս որ հարցաքըննենք.
Այլ, հնարագէտ խելագարութեամբ, միշտ խոյս է տալիս,

Երբ փորձ ենք անում որ իր խիսկան վիճակի մասին
Մի բան յայտնէ մեզ :

Թագ. Զեզ լաւ ընդունեց : 10

Ռող. Այս, կատարեալ ձէնալմէնի պէս :

Գիլլ. Բայց ինքն իր վերայ ձիգ գործ զընելով :

Ռող. Խօսքի մէջ մըլատ՝ բայց մեր հարցերին շատ աղատօրէն
Պատասխանում էր :

Թագ. Փորձեցիք նըրան զւարժացընել :

Ռող. Դէպքն այնպէս բերեց որ ձանապարհին 15

Մենք հանդիպեցանք դերասանների,
Եւ երբ այս մասին նըրան յայտնեցինք՝

Կարծես այս լուրջ նըրան մի տեսակ հրճանք պատճառեց.

Դերսանները արգէն այստեղ են, եւ, որքան զիտեմ,

Հրաման է տրել, որ հէնց այս զիշեր իր տռաջ խաղան։ 20

Պոլ. Այս, շատ ճիշդ է, եւ ինձ պատիրեց

Որ ինզրեմ Ձերդ վեհափառութեանց,

Տեսնել եւ ըել ներկայացումը։

Թագ. Ամենայն սիրով.

Դահ եմ լսելով, որ նա այժմ այդպէս արամազրւած է։

Ազնիւ պարոններ, դուք էլ աւելի մզեցէք նըրան, 25

Հաջախեցէք դէպի այդպիսի զւարժութիւններ։

Ռող. Այս, տէր արքայ։

Առաջնական է գիշեալուներն ուսուց են գնաց։

Թագ. Միրելի Դերտրուդ, դու էլ հեռացիր.

Հանզի զաղսնապէս մարդ ենք ուղարկել Համբէտին բերէ,

Որ Օֆելիային որպէս զիուրածով հանդիպի այստեղ։ 30

Իր հայրը եւ ես իրը իրաւացի հետազօտիչներ,

Այնպիսի մի տեղ ուղում ենք թաղել, որ անտես՝ տեսնենք,

Եւ դատենք նըրանց տեսակցութիւնից եւ նրա ձեւից

Թէ սիրուց է նա այդպէս տառապում, թէ ուրիշ բան կայ,

Թագ։ Շատ լաւ, հնազնոգ եմ. իսկ դու, Օֆելիա, 35

Մաղթում եմ սրանց որ շնորհալի գեղեցիութիւնը

Լինի Համբէտի մտացնորութեան բարի պատճառը,

Եւ մեծ յշո ունիմ որ առաքինի յատիւթիւնները

Ծետ բերեն նըրան իր սովորական նանապարհի վրայ,

Նրկուդ ի պատիւ։

Օք. Տայ Աստւած, տիկին։

40

Բայ ան ան գնաց է

Պոլ. Եկ, Օֆելիա, եւ շրջիր այստեղ։

Ողորմած տէր իմ, եթէ կը համէք, եկէք թագնըւնք։

(Օֆելիային) Կարդա այս գրքից. թող զբազմունքի այդ ձեւացումը

Բընական գցն առյ մենակութեանը։ 44

Յանախ այս բանում պարսաելի ենք, — եւ շատ փորձած է —

Որ առողք երեսով եւ բարեպաշտիկ շարժուձեւերով
Սատանային իսկ շաբարոծում ենք:

Թագ. (Ա-Կ-Հ-Շ) Օ՛հ, ճշմարիտ է.

Խնդիր այդ խօսքը խարազանում է իմ խղմանմքը.
Պանդիկի այտը՝ շպարի չնորհիւ զեղեցիացրած՝

Այսքան ազեղ չէ իր անդշրի մօտ, 50

Որքան իմ գործը՝ սաստիկ ներկւած իմ խօսքերի մօտ:

Օ՛հ, ինչ ճանքը բռու:

Պոլ.

Ահա գալիս է. թաղնունք, աեր իմ:

Բ-Գ-Դ-Ե-Զ-Ե- Դ- Պ-Ե- Ե- Հ- Վ- Ե- Հ- Վ- Ե- Հ-

Համ. Անել թէ ցընել, այս է խնդիրը.

Ո՞ն է հոգեպէս աւելի ազնիւ, 55

Տանել զռո բախտի պարապարերը եւ սրաքները,

Թէ զենք վերցնել ցաւ ու վիշտերի մի ծովի ընդգէմ,

Եւ, զիմազրելով՝ վերջ տալ բոլորին:

Մեռնել, քընանալ, ոչինչ աւելի.

59

Եւ մատածել, թէ մի պարզ քընով մենք վերջ ենք տալիս

Այն սրացաւնին եւ բիւր բընական անձկութիւններին,

Որոնց ժառանգն է մեր հէզ մարմինը,

Մի վախճան է զա՝ հոգով բաղալի:

Մեռնել, ննջել. ննջել... զուցէ երազել.

64

Այ, ցաւն այդտեղ է. քանզի այդ մահւան քընի ժամանակ
Մնչ կերպ երազներ պիստի զան գուցէ:

Նրը այս մահացու կապանքը մեղնից թօթափած լիննեք.

Ահա ինչ որ մեզ խորհել պէտք է տայ. այս նկատումն է,

Որ այսափի երկար աւեւել է տալիս թշւառութիւնը:

Թէ ոչ, ոչ արդեօք կուզէր հանդուրժել

Աշխարհի այնքան նախատինքներին եւ մորափներին,

Հարստահարցի անիրաւութեան,

Մեծամահած արհամանդիներին,

Համահրած սիրոյ տըւայտանքներին,

Օրէնքի բոլոր ձգձումներին,

75

- Պաշտօնեաների աներեառութեան,
Այն հարսածներին, որ համբերատար արժանաւորը
Ստանում է միշտ անարժաններից,
Այն ինչ կարող էր մարդ իր հաշխը իր ձեռքով փակել
Մի մերկ գաշցնավ։ Ո՞վ կը յօժարէր այսքան բեռ կըրել,
Հեծել ու քրանել տաղառուկ կեանքի տակ, 81
Եթէ երկիւղը մի ինչ որ բանի մահւանից յետոյ,
Այն անյայտ երկիրի, որի սահմանից
Ու մի ուղեւոր չէ վերապառնում,
Չը ձգէր կամքը երկրայտթեան մէջ, եւ մեզ չը ստիպէր 85
Տանել աւելի այն չարիքները որ այստեղ ունինք,
Ըան թէ սաւառնել գէսփի նոր ցաւեր, որոնց անգէտ ենք:
Խահամութիւնն, այսպէս, ամենքին վախիոս է զարձնում.
Եւ հեց այս կերպով վճռափառութեան բընածին գցնը
Ախտաժէտում է խորհրդածութեան գունաթափ ցոլքից,
Եւ շատ ձեռնարկներ, մեծ ու կարեւոր, 91
Եեղում են այսպէս իրենց հսանքից,
Եւ զործ կոչելու անարժան զառնում։
Բայց կաց, ով է այս Սիրուն Օֆելիան։ — Ո՞վ յաւերժահարս,
Ազօթքներիդ մէջ թող յիշեն նաեւ բոլոր մեղքերը։ 95
Օֆ. Ինչպէս է արգեօք Ձեր Բարձրութիւնը այսքան շատ գեր։
Համ. Շատ խոնարհաբար շնորհակալ եմ. լաւ եմ, լաւ եմ, լաւ։
Օֆ. Տէր իմ, ձեզնից ես յիշատակներ ունիմ ստացած,
Որ վաղուց ի վեր ուղում եմ յետ տալ. ստացէք խնդրեմ։
Համ. Երբէք. ես ոչինչ չեմ ընծայել քեզ։ 100
Օֆ. Յարգելի տէրըս, դուք շատ լաւ զիտէք որ ընծայել էք,
Եւ հետն էլ բառեր, այնպէս քաղցրարցյ,
Որ այդ իրերը էլ աւելի թանկ զարձընում էին.
Հիմա որ նըրանց բոյը թըռել է, յետ առէք կրկն.
Մի ազնիւ հոգու ճնիւ ընծաները գնում են թըռում, 105
Երբ պարզեւող անսէր է զանում։ Ստացէք, տէր իմ։
Համ. Համ, համ, առաքինի ես դու։
Օֆ. Տէր իմ...

Համբ. Գեղեցիկ ես:

Օֆ. Խնձ է ուզում առել Ձեր Բարձրութիւնը: 110

Համբ. Եթէ առաքինի եւ գեղեցիկ ես, առաքինութիւնոդ ոչ մի յարարերութիւն չը պիտի թշլ տայ գեղեցիութեանց հետ:

Օֆ. Բայց, տէր իմ, ում հետ է կարող գեղեցիութիւնը աւելի լաւ յարարերութիւն ունենալ քան թէ առաքինութեան հետ:

Համբ. Այս, Ճիշդ ես առում, որովհետեւ գեղեցիութեան կարողութիւնը աւելի շատ ընդունակ է առաքինութիւնը ըրութեան փոխելու, քան թէ առաքինութեան ոյժը կարող է գեղեցիութիւնը իր պատկերին նմանցնել. այս բանը երբեմն պարագորս էր թւում, բայց հիմն ժամանակը հաստատեց որ Շնմարիտ է: Կար մի ժամանակ որ ես քեզ սիրում էի: 120

Օֆ. Այս, տէր իմ, ինձ այդպէս էիք հաւատացնում:

Համբ. Իսկ դու չը պիտի հաւատայիր. որովհետեւ առաքինութիւնը չէ կարող այնպէս պատւաստիլ մեր հին ծառարունի վրայ, որ ովնչ չը մնայ այդ ծառարունից. ես քեզ չէի սիրում:

Օֆ. Ուրեմն էլ աւելի խորեած եմ եղել: 125

Համբ. Մարիր կուսանց. ինչո՞ւ ես ուզում մեղաւորներ աշխարհ բերել: Ես ինքս քիչ թէ շատ պարկեշտ մարդ եմ, բայց դարձեալ ինքս իմ մէջ այնպիսի բաներ եմ անսում, որ աւելի լաւ էր մայրս ինձ ծնած չը լիներ: Ես շատ հպարտ եմ, քինախնդիր, փառամոլ. աւելի շատ շարութիւններ ունիմ մոքիս տակ, քան միտք նրանց աեղ տալու, քան երեւակայութիւնն նրանց մեւ տալու, քան ժամանակ՝ իրագործելու: Ինչո՞ւ ուրեմն ինձ նման էակներ քարշ դան երկրի եւ երիքի միջեւ: Մնեք բոլոր էլ առաջնակարգ սրիկաններ ենք. մեզնից ոչ մէկին չը հաւատաս: Քառ, մաիր կուսանց: Հայրդ ուր է: Տանն է, տէր իմ:

Համբ. Դաները սինդ փակիր վրան, որ յիմարի գերը միայն իր տան մէջ խաղաց: Մնաս բարով:

Օֆ. (Ա-Ա-Ն-Յ-Ն) Օ՛հ, փրկիր պան, բարերար Աստևած: 139

Համբ. Եթէ երբէք ամուսնանա՞ քեզ այս անէծքը օժիտ կը առմ. Եղիր զգաստ ինչպէս սառուց, մաքուր, ինչպէս միւն, դարձեալ

զերծ չեմ մնայ զբարտութիւնից։ Մաիր կուսանոց, գնա-
մնաս բարով։ Եւ կամ, եթէ անպատճառ պէտք է ամուսնա-
նաս, ամուսնացիր մի յիմարին հետ, որովհետեւ խելացիները
ըստ դիտեն թէ դուք նրանց ինչ հրեշներ էք զարձնում։
Հայդէ, կուսանոց։ Եւ շուտ. մնաս բարով։

146

Օֆ. (Ը-Ա-Ն-Յ-Ն) նրկնային զօրութիւններ, բուժեցէք սրան։

Համ։ Ձեր ներկարարութեան մասին էլ շատ եմ լսել, այս, շատ։
Աստւած ձեզ այլ երես է տել, իսկ դուք ձեզ համար մի
այլ երես էք շնուռմ. օրորւում էք, շօրօրւում էք, լեզուներդ
էք ծռում, Աստվածոյ արարածներին մականուններ էք կացնում,
եւ ձեր լիտութեանը անդիտութեան երեւոյթ էք տախ։
Գնա, էլ չեմ ուզում այդ բաները տեսնել. զրանք ինձ խեն-
թացրել են։ Նրանք որ արդէն ամուսնացած են, բացի մէկից,
թող ապրեն. միւսները թող մնան ինչպէս կան։ Մաիր կու-
սանց։

Դ-Հ-Յ-Ն է Հ-Յ-Ն-Յ-Ն։

Օֆ. Ի՞նչ ազնիւ հոգի փշացաւ այսպէս։

Դրանիկի աշքը, զիտունի ընդուն, զինւորի սուրը,

Այս պերճ պետութեան յոյոր եւ վարդը,

Ցարակի հայեցն, ձեւի կաղապարը,

160

Բոլոր զիտողների զիտման առարկան, այսպէս փշանայ։

Եւ ես, կանանց մէջ ամենէն լրւած եւ տարարախորը,

Որ ծըծում էի նըրա զեզզեղուն ուխտերի մեղրը,

Այժմ տեսնում եմ այն ազնիւ եւ վեհ դատողութիւնը

Կատրած զանգի պէս խմարուր զարձած եւ աններդաշնակ։

Ժագիած հասակին այն անզուգական քէմքն ու տիպարը 166

Խենթութեամբ խամրած։ Օ՛հ, վայ թշւառիս,

Որ այն էլ աեսայ, այս էլ տեսնում եմ։

Թ-Ա-Յ-Ն-Յ-Ն է - Պ-Ա-Ն-Յ-Ն Հ-Ա-Յ-Ն Է։

Թագ. Սէր. նըրա մոքերն այդ կողմ չեն հակւած,

169

Եւ ասածները, թէեւ քիւ անկապ, խենթի խօսքեր չեն։

Նըրա հոգու մէջ մի որոշ բան կայ,

- Որի վրայ վեշտը թուխափ է նստել,
Եւ վահենում եմ թուխափ երածը մի վտանգ ընի,
Որի առաջը առնելու համար՝ շուտափոյթ վճռով
Այս որոշեցի. պէտք է անյառազ Անդիսա զընայ 175
Անդնար տուրբը գանձելու համար։ Դուցէ Ֆովերը,
Տարրեր երկիրներն, իրենց այլազան առարկաներով,
Վանել կաղենան նըրա պատի մէջ բոյն զըրած նիւթը,
Որի վրայ ուղեղն անվերջ բազմութը՝
Նըրան այս ձեռով փոխափերապէլ է։ Ձեր կարծիքն ինչ է:
Հաւ է, բայց գարձեալ համոզւած եմ ես 181
Որ նըրա ցաւի ծագութն ու ակիզըր
Մերժըւած սէրն է։ — Եկ այստեղ, Օֆելիա.
Պէտք շոշնիսք։ Տէր արքայ, արէք բնչպէս կամենաք,
Արգէն ընեցինք։ Տէր արքայ, արէք բնչպէս կամենաք, 185
Եւ սակայն, տէր իմ, թէ յարմար դատէք, թող խալից յետոյ
Թագուհի մայրը նըրան առանձին թախանձանք անէ
Որ իր ցաւն ասէ. թող շխատի իսուէ իր զաւակի հետ։
Եւ, եթէ թոյլ տաք, ես կը թագնըւիմ այնպիսի մի տեղ
Որ ըսեմ բոլը խօսակցութիւնը։ 190
Եթէ իր մայրն էլ անյաջող դուրս զայ,
Ազա Անդիսա դրկեցէք նըրան,
Կամ թէ փափեցէք ուր յարմար դատէ ձեր իմաստութիւնը։
Թազ. Թող այդպէս լինի. մեծառների խելառութիւնը
Չը պէտք է մընայ առանց հսկողի։ 195

ԴԱՅԱ ԻՆ ԳՆՈՒՄ:

ՏԵՍԵՐԵՆ ԵՐԿՐՈՒԴ

Ո՞ի զատիմ դզեսկում:

Դա է Հայութ Ի Շահնշահն Հայութ Անդ:

Համ: Խնդրեմ հատաւծն այնպէս արտասանիր, ինչպէս ես քեզ համար արտասանեցի, թեթեւ եւ սահուն. բայց եթէ դռ էլ մեր գերասաններից շատերի պէս գոռզուաս, աղա աւեցի լաւ կը լիներ որ իմ տաղերը քաղաքի մոռնեափներին արտասանել տայի: Ու էլ կարիք կոյ շարունակ ձեռքովդ օդը սղոցելու, այսպէս. այլ, ամեն բանի մեջ չափաւոր եղիր. որովհետեւ, կրքի հեղեղի, փողոքի, եւ, այսպէս ասենք, հազմապայտի մեջն անգամ պէտք է սովորես մի տեսակ բարեխառնութիւն պահել, որ հարթութիւն տայ խօսքիդ: Ահ, հոգիս վխաքաղում է, երբ լուսմ եմ ինչպէս մի յաղթանգամ կեղծամառոր արարած մի զօրեղ զգացում ծւիկ ծւիկ է անում, չին բաժ է շնում, գեանայարկի հասարակութեան ականջը պատռելու համար. հասարակութիւն, որի մեծ մասը ընդունակ չէ ուրիշ բան ըմբռնելու, բայց միայն անբացատրեցի մնջկատակներ եւ աղմակի: Մարակել տալ կ'ուզէի այդ տեսակ արարածին, որ Տէրմագանաբն էլ գերազանցում է, Հերովդէսից էլ հերովդանում է: Խոյս տուր, խնդրեմ, այդ բանից:

Ա. Դեր. Խօսք եմ տախս Ձերդ Բարձրութեան:

19

Համ: Ու էլ շատ մեղի պէտք է լինեա. այլ, սեփական ճաշակդ պէտք է զեկավարդ լինի. շարժումներդ բառերիդ յարմարեցու, եւ բառերը շարժումներիդ, յատիկապէս ուշգիր լինելով որ բնական չափաւորութիւնից դուրս չենեա. որովհետեւ ամեն բան որ չափազանցւած է, խաղը նպատակն հակառակ է, ինչ որ թէ հնուց եւ թէ հիմա միշտ եղել է եւ է, այսպէս ասած, մի հայելի պահել բնութեան առաջ. ցայց տալ առաքինութեան իր սեփական գէմքը, մոլութեան իր պատիերը, եւ ժամանակի գէմքին ու մարմնին իր տեսքն

ու արարութեան Արդ, եթէ դա շատ խիստ գուրաք բերուի, կամ շատ թշլ, գուցէ անգետներին ծիծաղեցնէ, բայց բանին մացներին միայն անախորժ կարող է լինել. իսկ մէկ բանինաց մարդու կարծիքը ձեր աշքին աւելի մեծ կշիռ պէտք է ունենայ, քան թէ միւտների մի ամրողջ թատրոն։ Ա՛հ, զերասաններ եմ տեսել խաղալիս, եւ լսել, թէ մարդիկ նրանց լինարէս էին գովասանում, որոնք, մեղք չը լինի ասել, ոչ քրիստոնէի խօսւածքն ունեին, ոչ քրիստոնէի կեցւածքը, ոչ էլ հեթանոսի, ոչ նոյն իսկ ազամարդու, եւ այնպէս ուսումն եւ պոռում էին, որ մտածում էի, թէ պէտք է բնութեան բաներները նրանց ստեղծած լինեն, եւ այն էլ՝ ոչ շատ բաւ, այն աստիճան գարշելի նմանութիւններ էին զրանք մարդկային ցեղի։

41

Ա. Դմբ. Այդ բարորը մեզ մաս քիւ թէ շատ բարեփոխել ենք, տէր իմ։ Համ. Պէտք է հիմնովին փոխէք. թող մեր միմասի դեր կատարողները այն միայն ասեն, ինչ որ իրենց համար զրւած է. զերասաններ կան որ մի քանի ապուշ հանգիստաների ծիծաղեցներու համար իրենք են սկսում ծիծաղել, այն ինչ հենց այդ ժամանակ խաղի մի կարեւոր կէտը ու շաղրութիւն է պահանջում. զա շատ խայտառակ բան է, եւ ցոյց է տաղիս այդ ձեւով վարող դերասանի ողորմելի մնափառութիւնը։ Չնացէք եւ պատրաստեցէք։

50

ԴԵՐԱԿԱՆՆԵՐԸ ԴԱՐՅԱ ԷՆ ԳԻՆՆԵՐ։
Գալստ էն Պալմէնն, Պալմէննանց էն Գիլբէննութեր։

Խնչ եղաւ, տէր իմ, թազաւորը զալին է արդեօք այս զլուխ-գործոցը տեսնելու։

Պոլ. Այս, թազուհին էլ միասին։ հենց հիմա գաղիս են։

Համ. Ուրեմն զերասաններին ասացէք որ շտապեն։

Պալմէնն ԴԱՐՅԱ Է ԳԻՆՆԵՐ։

Դարք էլ օգնեցէք որ շտապեն։

55

Թող. Եւ Դիլլ. Այս, տէր իմ։

ՊԱԼՄԵՆՆԱՆՑ Է ԳԻԼԲԵՆՆՈՒԹԵՐ ԴԱՐՅԱ ԷՆ ԳԻՆՆԵՐ։

Համ. Էհմէ, Հորացիօ:

Դաւկ է Հորացիօն:

Հոր. Պատրաստ եմ, տէր իմ, ձեր ծառայութեան:

Համ. Լիիր, Հորացիօ, քեզից առելի ուղղամբտ մարդու
Դեռ չեմ հանդիպել ծանօթներիս մէջ:

Հոր. Սիրելի տէր իմ:

Համ. Զը կարծես թէ քեզ շողոքորթում եմ.

61

Ի՞նչ շահ կարող եմ յուսալ քեզանից,

Որ բացի ուրախ բնաւորութիւնից մի հասոյթ չունիս

Ապրուստ ու հազուստ հոգալու համար:

Խեղա փայփայել չքաւոր մարդուն:

65

Ոչ, շողոքորթի մեղածոր լնդուն

Անմիտ պերճութեան ոորքը թող լիզէ,

Եւ իր ծննների Ճկուն լիսեռներն այնտեղ կորացնէ,

Ուր որ քննանքին վարձ է ապասում:

Լսում ես, Հորացիօ. այն օրից ի վեր որ մաստաղ հոգիս

Որ ընարութեան մէջ նույնիշխան դարձաւ,

Եւ հասու եղաւ մարդկանց իրարից զանազանելու,

Սա քեզ որոշեց, կիբեց իր համար.

Բանզի դու յաւէտ մի մարդ ես եղել,

Որ ամենայն ինչ կըրելով հանդերձ ովինչ չես կըրում,

Եւ բախտի ամեն վարձն ու հարւածը

Ընդունել ես միշտ միահաւասար շնորհակալութեամբ:

Օրհնեալ են նըրանք, որոնց մէջ արիւնն ու զատողութիւնն

Այնպէս համաշափ զուգախառնեած են,

Որ լոկ շուի չեն բախտի մատերին,

80

Որ ինչպէս ուզէ վըրան նըրագէ:

Տուր ինձ այս մարդը, որ իր կիրքերի գերին չը լինի,

Եւ ես սրտիս մէջ տեղ կը տամ նըրան, սրտիս սրտի մէջ,

Խեղակս այժմը քեզ: Բայց այս շատ եղաւ:

Լիիր. այս զիշեր արքայի առաջ ներկայացում կայ.

85

Եւ մի տեսարան մօտ է իմ հօրս մեռնելու կերպին,

Որ պատմել եմ քեզ: Խնդրում եմ, երբ դայ այդ տեսարանը

- Դու հոգուդ բոլոր խորատեսութեամբ զիտիր հօրեղբօրս։
Եթէ մի որոշ ձասի ժամանակ
Թաքռուն ոմիրը յանկարծ իր որջից դուրս չը յարձակւի՛
Ազա այն ողին, որ մենք տեսել ենք մի չար ողի է, 91
Եւ խորհածները՝ վայլիանի աալից աւելի մըրուն։
Լաւ զիտիր նրան։ Ես էլ աշքերը դէմքին կը յառեմ,
Ծետոյ երկուարս մեր կարծիքները կը միացընենք
Նըրա երեսի արտայայտածը դատելու համար։ 95
Հոր, տէր իմ։ Եթէ խաղի ժամանակ
Փորձէ իմ աշքից մի բան գողանալ եւ չը բռնի՛
Խըրը կը տուժեմ գողնի զինը։
Համ։ Ահա գալիս են ներկայացումին։ 99
Սո պէտք է այստեղ անփոյթ երեւամ։ մի տեղ գտիր քեզ։
Գանձական +այլէր։ Ք-ըս ին նոտարութը, նոտարին, ու-
շնչութ, օքէլու։ Ո-դէնիշունց, Կ-լունիշունց ի- ուրիշ ու-
շնչութ, ի- ու-նունիշ, ը-նմէրութ։
Թագ. Խոչպէս է մեր եղբօրորդի Համբէտը։
Համ։ Շատ լաւ, խիստգէս։ Քամիլէնի պէս եմ կերակրուամ, ոդ
եմ ուտում, խոստութերով եմ խճողւած։ արջորներին չէք
կարող այս կերպով զիրցնել։
Թագ. Այդ պատասխանը ինձ համար չէ, Համբէտ։ այդ խօսքերը ինձ
չեն պատկանում։ 106
Համ։ Ու էլ ինձ արգէն։ — (Պուշկին) Տէր իմ, ասացիք թէ
համարըրանում մի անգամ մի բան էք խաղացել, այնպէս չէ։
Պոլ. Այս, տէր իմ, եւ լաւ զերասան էի համարուամ։
Համ։ Ի՞նչ էք խաղացել։ 110
Պոլ. Յուլիս Կեսարի զերը, եւ սպանւեցայ Կապիտոլում։ Բրու-
տոս ինձ սպանեց։
Համ։ Շատ բրտութիւն էր նրա կողմից այդպէս երեւելի կովին
Կապիտոլում սպանել։ — Դերասանները պատրաստ են։
Պոլ. Այս, տէր իմ։ մեր հրամանին են սպասում։ 115
Թագ։ Ակ այստեղ, սիրելի Համբէտա, եկ նստիր կողքիս։

Համբ. Ու, սիրելի մայրս, այստեղ աւելի քարշող մետաղ կայ:

Պոլ. (Թագավորութիւն) Օ՛, հօ՛, լսեցիք ինչ ասաց:

Համբ. Օրիորդ, թշլ կը տա՞ր որ ձեր գողի մէջ ձգւիս:

Համբ. Ե գետնէ կը ո՞չէ վայէ ո՞ւծէ զի՞ւ ո՞ւծէ զի՞ւ:

Օֆ. Ու, տէր իմ:

120

Համբ. Ուզում եմ ասել զլուխս ձեր գողը զբած:

Օֆ. Այս, տէր իմ:

Համբ. Կարծում էք վատ մոքավ ասացի:

Օֆ. Ոչինչ չեմ կարծում, տէր իմ:

Համբ. Լաւ գաղափար է՝ աղջիների որունքների մէջ ձգւիլ:

Օֆ. Ի՞նչ, տէր իմ:

Համբ. Ոչինչ:

Օֆ. Շատ ուրախ էք, տէր իմ:

Համբ. Ո՞վ, ես:

Օֆ. Այս, տէր իմ:

130

Համբ. Ի՞նչ արած. ձեր զաւեշտարանն եմ ես: Մարդ ուրախ ցինի, ինչ անէ. մէկ այնտեղ նայիր, տես մայրս ինչպէս ուրախ է, եւ երկու ժամ ցը կայ որ հայրս մեռել է:

Օֆ. Ու, երկու անգամ երկու ամիս է, տէր իմ:

134

Համբ. Այդքան երկար. ուրեմն, թող սատանան սեւ հագնի, ես մի մեռք սամցը եմ հազնելու: Տէր Ասուած, մարդ երկու ամիս առաջ մեռնի եւ զեռ ցը մռացւիք: Ուրեմն կարելի է յաւսալ, որ մի մեծ մարդու յիշատակը զեռ վեց ամիս իր մահից յետոց կարող է տեւել. բայց, Սուրբ Կոյսը վկայ, պէտք է եկեղեցիներ շնէ, թէ ու՝ կը մռացւի մնացէս այն փայտէ ձին, որի տապանագիրն էր.

141

“Ա՛յս ափսոս, այս ափսոս, փայտէ ձին մռացւեց:”

ԵՐԵՒԺԱՎԱՐՆԻՆ. ՀՅՈՒՄԵ-ԱՅ ԴԵՐԱՎԱՆՆԵՐԸ:

Գ-Հ-Ջ- Է- Դ- Բ- Գ- Հ- Ա- Բ- Գ- Հ- Ա- Ա- Ա- Ա- Ա- Ա-
Բ- Գ- Հ- Ա-
Բ- Գ- Հ- Ա- Ա-

շաշուեր է անուած: Թագավորություն նրան միշտ է բարձրացնեալ, և ի գլուխ նիւթ է պայմանական լուսն: Այսու թագավորությունը դառնեալ է ծառալիների կողոյ: Թագավորին աւելանելով որ նո ժամանակ հետառ է: Մէջ իւլ յարուց ներ է քաղաք Բ հարբ, միշտ է առանց թագավորություն նախան, համբարձություն է: Այս է ածուած թագավորությունը մէջը մէջ և դարձու է գլուխ: Թագավորին վարդապետությունը թագավորություն է պարագ և ուղ ու իւծ է անուած: Թագավորությունը իւլին գումար է երիտ երիտ հանձնելի հետ, և այն դիմ է յեւածություն, որոյին նե համապատասխան է թագավորի կորոն: Մերժակն անուած ին դարձու: Թագավորությունը ալիստ շնորհել: Թագավորին ալիստ դարձու է շաշուած ուղարկութիւնը և նրա սերը: Դարձու ին գլուխ:

Օֆ. Ի՞նչ միոք տնի այս, տէր իմ:

Համ. Miching mallecho, այսինքն չարազործութիւն:

Օֆ. Արեւի մեջկատակը խաղի նիւթն է ներկայացնում: 145
Գումար է նախերդուիլ:

Համ. Հիմաս սա մեզ կ'ասէ: գերասանները գաղտնիք պահող մարդիկ չեն: ամեն բան կը յայտնեն:

Օֆ. Կարծում էք թէ տեսարանի նշանակութիւնը կ'ասէ:

Համ. Այս, եւ ամեն տեսարանի, որ նրան ցոյց տաք. դոք մի ամաչեք ցոյց տալուց, նա էլ չի ամաչի նշանակութիւնն ասելուց: 151

Օֆ. Շատ չափն էք, շատ չարը. լու է խաղին մորիկ տամ:

Նախերգակ. Թէ մեր ողբերգի եւ թէ մեզ համար
ներում ենք խնդրում շատ խոնարհարար,
եւ աղաշում ենք որ համբերութեամբ 155
Հաճէք պատւել մեզ ձեր ունկնդրութեամբ:

Համ. Նախերգակ է այս, թէ մատանու մակաղիր:

Օֆ. Այս, շատ կարծ է, տէր իմ:

Համ. Կնօջ սիրոյ պէս:

Գումար ին երիտ դերասան, իւրիտ թագավոր է թագավորի:

Բեմի Թագ. Նրեսոն անզամ Ֆէրոսի կառը արել է շրջան 160
 Տէլոսի շուրջը, եւ Պոսիդոնի աղի պետութեան,
 Նրեսոն անզամ՝ տամներկու լուսին պտոյտ են գործել,
 Տասներկու անզամ երեսոն գիշեր երկրի շուրջ դարձել,
